ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1920-ականներից մինչև մեր օրերը

93(=919.81)(56)

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

96093

ԱԿՆԱՐԿ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(1920-ականներից մինչև մեր օրերը)

Երևան
ՎՄՎ – Պրինտ 2010

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

National Academy of Sciences of The Republic of Armenia
Institute of Oriental Studies
Ministry of Diaspora

Ruben Melkonyan

Review of History of the Armenian Community in Istanbul (1920-till present days)

Yerevan
VMV–Print 2010

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 537

*Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Ուսումնասիրությունը կատարվել է
ՀՀ Սփյուռքի նախարարության
տրամադրած դրամաշնորհով:
Գրքի տպագրությունն իրականացվել է
Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ,
Գերաշնորի տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի մեկենասությամբ:

*Պատասխանատու խմբագիր
պ.գ.դ., պրոֆ. Ռուբեն Սաֆրաստյան*

Մելքոնյան Ռուբեն
Մ 537 Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ական-ներից մինչև մեր օրերը) /Ռ.Մելքոնյան; Պատ. խմբ.՝ Ռ.Սաֆրաստյան; ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստ.; ՀՀ Սփյուռքի նախարար. - Եր.: ՎՄՎ Պրինտ, 2010. - 104 էջ:

Սույն ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ քննության են առնվում Ստամբուլի հայ համայնքի 20-րդ դարի պատմության և արդի մի շարք կարևոր խնդիրներ: Հատուկ ուշադրություն է դարձվում Պոլսո Հայոց պատրիարքության, դպրոցների, ինչպես նաև համայնքային կալվածքների հետ առնչվող հարցերին: Քննության է առնվում հանրապետական Թուրքիայի իշխանությունների քաղաքականությունը տեղի հայության նկատմամբ: Նախատեսվում է մասնագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-60-045-1

© Ռ. Մելքոնյան 2010

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի և Թուրքիո հայության միջև 100 տարվա խաթարված հոգևոր և մշակութային կյանքը վերստին կամրջելու անկեղծ ու բարի ցանկությամբ՝ սիրով ստանձնեցի սույն գրքի տպագրության մեկենասությունը **ի հիշատակ իմ ծնողաց՝** ԱԴԸՅԱՄԱՆՑԻ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՈՒՐՖԱՅԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՉՈՒԼՋՅԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ, **և առ ի պանծացում հիշատակի** պատմական Հայաստանի տարածքում 1915 թվականի ցեղասպանությունից մազապուրծ, գավառի բեկված ու ճղատված քրիստոնյա հայության, ովքեր տասնամյակներ շարունակ իրենց բնօրրանում իրավազրկված, ունեզրկված, Հայ ինքնությունն ու հավատքը հոգիներում անթեղած, ջերմեռանդ աղոթքներով անվերջ Աստծո ողորմածությանը ապավինած, սակայն քաջաբար իրենց ազգային գիտակցությանը հավատարմորեն կառչած մեր ազնվագույն եղբայրներն են:

Մեր նպատակն է՝ սույն գրքի միջոցով Հայաստանի և Սփյուռքի մեր հայրենակիցներին բավարար տեղեկատվությամբ ճանաչելի դարձնել Թուրքիո հայ իրականությունը, նրանց հոգեմտավոր մաքառումները, պատմական, մշակութային, հոգևոր, կրթական, եկեղեցական ասպարեզներում ունեցած դերակատարությունն ու հայ աշխարհին բերած ակնառու և ծանրակշիռ նպաստը:

Թուրքիայի բռնապետական, ազգայնական իշխանությունների կողմից թուրքահայությունն ըստ արժանվույն գնահատանքի և ուշադրության թեև չի արժանացել ու հաճախ էլ հալածվել է, սակայն անուրանալի փաստ է հայության մեծ ավանդն այդ երկրի տարբեր ոլորտներում:

Գիրքը ՀՀ անկախությունից ի վեր Թուրքիո Հանրապետության հայության մասին գրված առաջին աշխատությունն է, որ իբրև համեստ հուշակոթող ընծայվում է նրանց խնկելի հիշատակին, ովքեր, անասելի զրկանքներ կրելով հանդերձ, մնացին ՀԱՅ: Հուսով ենք՝ այն լայն պատկերացում և գիտելիքներ կհա-

ղորդի հետաքրքրասեր դասախոսներին, ուսուցիչներին և ուսումնատենչ ուսանողությանը:

Մեր հայրական սերը, գնահատանքն ու օրհնությունն ենք բերում գրքի հեղինակ՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ տիար Ռուբեն Մելքոնյանին, որ խոնարհաբար ստանձնեց և անխոնջ ու համակողմանի ուսումնասիրությամբ, բազմաբովանդակ թեմաներով հարստացրեց սույն աշխատությունը:

Օրհնությամբ՝

Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան

Առաջնորդ Գուգարաց թեմի

ԱՌԱՋԱԲԱՆ

Բուն Հայաստանից դուրս գտնվող հայկական գաղթօջախների խնդիրները միշտ էլ գտնվել են տարբեր գիտնականների, ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դարերի ընթացքում Ստամբուլում (Պոլսում) ձևավորվել է յուրահատուկ և կարևոր հայկական գաղթօջախ, որը մեր օրերն է հասել զգալիորեն վերափոխված և նորանոր խնդիրներով: Ստամբուլի հայ համայնքի մասին կան բարձրարժեք աշխատություններ[1], որոնցով հստակ պատկերացում ենք կազմում անցյալում համայնքի վիճակի և կյանքի վերաբերյալ, սակայն այսօրվա Ստամբուլի հայերի խնդիրներին նվիրված համապարփակ ուսումնասիրություն Հայաստանում դեռևս չէր արվել: Հայաստանի և աշխարհասփյուռ հայերին Ստամբուլի հայության այսօրվա խնդիրները համառոտ ներկայացնելու համար էլ ձեռնարկել ենք սույն ուսումնասիրությունը: Այն չի հավակնում լինել ամբողջական, այլ նախնական պատկերացում է տալիս ստամբուլահայ համայնքի այսօրվա վիճակի մասին:

Այս գիրքը, ըստ էության, 2009թ. տպագրված «Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը» (հեղինակներ՝ Արսեն Ավագյան, Ռուբեն Մելքոնյան) գրքի լրամշակված և բարեփոխված տարբերակն է: Ստամբուլի հայ համայնքի այսօրվա վիճակի ուսումնասիրությունը կարևորել էր Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությունը, որի տրամադրած դրամաշնորհով էլ անցկացվեց ուսումնասիրությունը: Սակայն 2009թ. տպագրված գրքի սահմանափակ քանակը և լրամշակման կարիքն օրակարգային դարձրեցին ուսումնասիրության վերանայումն ու վերահրատարակումը: Այդ գործում ստացանք Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ, Գերաշնորհ տեր Մեսրոպ եպիսկոպոս Չուլջյանի պատրաստակամ աջակ-

---

[1] Այդ աշխատությունների շարքում հատկապես ցանկանում ենք առանձնացնել Յ.Սիրունու «Պոլիս եւ իր դերը» քառահատոր գիրքը՝ տպագրված Բեյրութում և Անթիլիասում 1965-1988 թվականներին:

ցությունը, և հենց նրա մեկենասությամբ էլ տպագրվեց սույն գիրքը: Սակայն Սեպուհ Սրբազանը հանդես եկավ ոչ միայն որպես մեկենաս, այլև, որ ավելի կարևոր է, գիտական խորհրդատու: Սրբազան հոր արժեքավոր դիտողություններն ու կողմնորոշիչ առաջարկությունները մեծապես հարստացրեցին աշխատանքը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԱԳՆ Թուրքիայի բաժնի ղեկավար Արսեն Ավագյանին, որը սիրահոժար մեզ տրամադրեց Ստամբուլի հայկական համայնքի կալվածքներին, տնտեսական կյանքին, կրթական խնդիրներին վերաբերող իր հեղինակած նյութերը, որոնք ամբողջությամբ կամ մասնակի տեղ են գտել սույն գրքում: Աշխատանքը կատարելիս իրենց արժեքավոր խորհուրդներով, ինչպես նաև գրականությամբ մեզ մեծապես օգնել են ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալեքսանդր Սաֆարյանը, ՀՀ Սփյուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության պետ, պատմական գիտությունների թեկնածու Արթուր Դումանյանը, պոլսահայ մտավորական Տիրան Լոքմագյոզյանը, պոլսահայ լրագրող Ալին Օզինյանը, որոնց նույնպես հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Կարծում ենք, կատարված ուսումնասիրությունը մի համեստ նպաստ է պոլսահայ համայնքի արդի վիճակի և խնդիրների մասին պատկերացում կազմելու հարցում, որը կարող է հենք հանդիսանալ հետագա հետազոտությունների համար:

Ռուբեն Մելքոնյան

«Մենք ապրում ենք ամենաազատ երկրում՝
Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի
միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ,
ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն,
այս երկրում ունեն միայն ստրուկ,
ճորտ լինելու իրավունք»[2]:

Մահմութ Էսսաթ,
Թուրքիայի Հանրապետության
արդարադատության նախարար,
1930թ.:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայերի ներկայությունը Բյուզանդիայի կայսրությունում և մասնավորապես մայրաքաղաք Կոստանդնուպոլսում դարերի պատմություն ունի: Հայերը որոշակի դեր են ունեցել այդ պետության ռազմական, տնտեսական, քաղաքական համակարգերում. ավելորդ չէ հիշել, որ հայկական ծագմամբ կայսերական դինաստիան 867-1056թթ. իշխել է բյուզանդական կայսրությունում: 1453թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլիս քաղաքի գրավումից հետո և հետագա դարերում օսմանյան սուլթանները կայսրության տարբեր շրջաններից նաև հայերի էին տեղափոխում անվանափոխյալ Ստամբուլ: 1461թ. հիմնադրվում է Պոլսո Հայոց պատրիարքությունը, և սուլթան Մեհմեթ Բ-ն Բուրսայից հրավիրում է տեղի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսին, որն էլ դառնում է նորաստեղծ պատրիարքության առաջնորդը: Սակայն միայն 1543 թվականին Աստվածատուր Ա-ից սկսած են կիրառում պատրիարք տիտղոսը[3]: Պոլսո Հայոց պատրիարքությունը դարձավ կայսրության առաքելադավան հայության հոգևոր և

---

[2] Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, стр. 14.
[3] Seropyan V., Ermeni Patrikliği, - Dünden bugüne İstanbul Ansiklopedisi, İstanbul, 1994, s. 188.

ազգային կենտրոնն ու կառավարման կարևոր կառույցը: Օսմանյան կայսրությունում հայերը հույների և հրեաների հետ միասին ստացան «միլլեթի» (ազգ) կարգավիճակ, և մայրաքաղաք Ստամբուլում զարգացավ ուժեղ հայկական համայնք, որն իր պատմության ընթացքում ստեղծեց յուրօրինակ մշակույթ, գրականություն, հիմնեց եկեղեցիներ, դպրոցներ և այլ հաստատություններ:

Ընդհանրապես անհերքելի փաստ է, որ հայությունը մեծ ավանդ է ունեցել Օսմանյան կայսրության հասարակական, մշակութային կյանքում, տվել բազմաթիվ հայտնի անուններ այդ ասպարեզներում: Հայտնի է հայազգի ամիրաների, ճարտարապետների, բժիշկների, մանկավարժների, արվեստագետների լրջագույն նպաստն օսմանյան պետության տարբեր ոլորտներում: Սակայն հարկ է նկատել, որ օսմանյան տիրապետության տակ գտնվող հայությունը մշտապես ենթարկվել է պետական հալածանքի, որից անմասն չի մնացել նաև պոլսահայությունը: Ցավոք, դարեր տևած այդ քաղաքականությունը երբեմն իր ազդեցությունն է ունեցել թուրքական տիրապետության տակ գտնվող հայերի հոգեկերտվածքի վրա, և, օրինակ՝ 19-րդ դարի վերջին Կոստանդնուպոլիս այցելած դոկտ. Վիլյամ Գուդելը այսպես է նկարագրում պոլսահայությանը. *«Չորսդարյա տառապանքները, հալածանքներն ու տագնապը խոր հետք են թողել ողջ համայնքի վրա... հարատև վախը, տանջանքներն ու նվաստացումները ջնջել են արիության բոլոր հետքերը»*[4]:

Օսմանյան կայսրությունը բազմազգ, բազմէթնիկ և բազմակրոն պետություն էր, սակայն տարբեր հանգամանքների հետևանքով՝ ցեղասպանություններ, էթնիկ զտումներ, բռնի կրոնափոխություն, ձուլում, բնակչության փոխանակում և այլն, Թուրքիայի Հանրապետությունը ժառանգեց մի երկիր, որտեղ բնակչության մեծամասնությունը մուսուլման էր և կային անհամեմատ ավելի փոքր թվով այլակրոններ: 1923թ. Լոզանի պայմանագրով այդ այլակրոնների երեք համայնք՝ հայկականը, հունականը և հրեական-

[4] Սասունյան Հ., Հայերը պետք է խիզախ և կանխարգելիչ քայլեր ձեռնարկեն թշնամական գործողություններին հակազդելու համար, www.7or.am/hy/news/2010-06-23/15456/

նը, ճանաչվեցին որպես փոքրամասնություն: Հարկ է ուշադրություն դարձնել, որ Թուրքիայում էթնոկրոնական այլ խմբեր, ինչպիսիք են, օրինակ, ասորիները, լազերը և այլն, չստացան առանձին իրավունքներ ու կարգավիճակ:

Անհրաժեշտ է հստակ շեշտել, որ հանրապետական Թուրքիայում ոչ մուսուլման փոքրամասնությունների նկատմամբ պետության վերաբերմունքը մնաց նույն թշնամականը, իսկ հալածանքները շարունակվեցին հին մեթոդների նորօրյա դրսևորումներով: Այն, որ Թուրքիայի Հանրապետության ստեղծման արդեն սկզբնական շրջանում պետության և պետական գործիչների վերաբերմունքը փոքրամասնությունների նկատմամբ ծայրահեղ անհանդուրժողական էր, փաստում են հենց թուրք տարբեր ղեկավարների հայտարարությունները: Այստեղ հարկ ենք համարում մեջբերել Թուրքիայի Հանրապետության հիմնադիր նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին և Թուրքիայի առաջին վարչապետ Իսմեթ Ինենյուին վերագրվող մի տարածված ավանդազրույց, որը լավագույնս ի ցույց է դնում պետական մոտեցումը փոքրամասնությունների հարցին: Այսպես, հանրապետության առաջին տարիներին վարչապետ Իսմեթ Ինենյուն պատրաստվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացնել փոքրամասնությունների մասին օրինագիծ և այն քննարկելու համար այցելում է նախագահ Աթաթուրքին, որը նրան ընդունում է նախագահական պալատի ծաղկանոցում, որտեղ լինում են բազմատեսակ ծաղիկներ: Լսելով վարչապետ Ինենյուի՝ փոքրամասնություններին վերաբերող օրինագծի հարցը՝ Աթաթուրքը հետաձգում է դրա քննարկումը հաջորդ օրվան: Վարչապետի գնալուց հետո նախագահը կարգադրում է արմատախիլ անել պարտեզի բոլոր ծաղիկները և թողնել միայն կակաչները: Հաջորդ օրը Իսմեթ Ինենյուն, գալով Աթաթուրքի մոտ, անմիջապես նկատում է, որ ծաղկանոցում մնացել են միայն կակաչները: Ինենյուի՝ ինչո՞ւ են արմատախիլ արվել մյուս ծաղիկները հարցին Աթաթուրքը պատասխանում է. *«Փոքրամասնություններին հանեցի թափեցի»*[5]:

---

[5] http://www.bakterim.net/ataturk-ve-ilkeleri/167159-ataturkten-muhtesem-bir-ders-konu-azinliklar.html

Ահա հենց այս թափանցիկ ակնարկն էլ դառնում է Թուրքիայի Հանրապետության պաշտոնական քաղաքականությունը փոքրամասնությունների նկատմամբ: Այսինքն՝ Թուրքիայում կարող են լիարժեք քաղաքացի համարվել միայն թուրքերը, իսկ մնացած բոլորը կամ պետք է հեռանան, կամ կոտորվեն, կամ թուրքացվեն: Այդ վերաբերմունքն ավելի կոնկրետ սահմանում է Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինենյուն 1925թ. Անկարայում, «թուրքական օջախների» համագումարում իր ելույթի ժամանակ հայտարարելով. *«Մենք բացահայտ ազգայնամոլներ ենք: Մենք ցանկացած գնով պետք է թուրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»*[6]:

Աղբյուրները փաստում են, որ 19-րդ դարի սկզբին Ստամբուլի հայերի թիվը հասնում էր 150 հազարի, իսկ արդեն 1880-ականներին՝ 250 հազարի[7]: 1915-23թթ. Հայոց ցեղասպանությունից հետո և Թուրքիայի Հանրապետության ձևավորման առաջին տարիներին ստամբուլահայերի թվաքանակի մասին տարբեր թվեր են նշվում: Այսօր Թուրքիայում, ըստ պաշտոնական տվյալների, կան շուրջ 55-60 հազար առաքելադավան հայեր[8], որոնք հիմնականում բնակվում են Ստամբուլում: Ավելորդ չէ նշել, որ ներկայումս Ստամբուլից դուրս սակավաթիվ քրիստոնյա հայեր են մնացել[9], որոնց մեծ վերապահությամբ է հնարավոր

---

[6] Аванесов С., նշված աշխ., էջ 13:

[7] Pamukciyan K., İstanbul'da Ermeniler; İstanbul yazıları: Ermeni kaynaklarından tarihe katkılar- I, İstanbul, 2002, s. 9.

[8] Dışişleri: Azınlık sayısı 89 bin, - Milliyet, 12.12.2008.

[9] Պաշտոնական տվյալների սակավության պայմաններում Թուրքիայի տարբեր գավառներում բնակվող հայերի այսօրվա թվաքանակի մասին որոշ փաստեր են փոխանցում այդ վայրեր այցելող զբոսաշրջիկներն ու ուխտավորները: Այսպես, 2009թ. պատմական Հայաստանի տարբեր վայրեր են այցելել Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց և Շիրակի թեմերի առաջնորդներ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանն ու Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Հետագայում Սեպուհ Սրբազանը թղթին է հանձնել իր տպավորություններն այցից, որտեղ այսպիսի տողեր կան. *«Հանդիպեցինք ու զրուցեցինք էլյազըղում-Խարբերդում բնակվող հայերի հետ, որոնց թիվը հասնում է հիսուներկուսի: Նույն կերպ՝ Սեբաստիայում բնակվում են վաթսունհինգ հայեր, Կեսարիայում՝ չորս, այն էլ միայն տղամարդ, Իսկենդերունում՝ ութսուն և Ադանայում՝ վեց»*: Տե՛ս Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան, Ուխտագնացություն Արևմտյան Հայաստան, Ազգ (մշակութ. հավելված), 12. 09. 2009:

համայնք համարել, և թուրքական մամուլում կարելի է հանդիպել, օրինակ, «Դիարբեքիրի վերջին հայը»[10] կամ «Արաբկիրի վերջին հայը» վերտառությամբ հոդվածների: Ըստ տարբեր աղբյուրների, բացի Ստամբուլից, հայեր կան Մալաթիայում, Սվազում (Սեբաստիա), Կայսերիում (Կեսարիա), Անկարայում, Իսքենդերունում, Անթաքյայում, Ադանայում և Էլյազըգում (Խարբերդ)[11]: Թուրքիայում միակ գյուղը, որը բնակեցված է առաքելադավան հայերով, Հաթայի (նախկին Ալեքսանդրետի սանջաք) Վաքըֆլը գյուղն է:

Հայերի թվաքանակի նվազումն արտահայտված է նաև մարդահամարներում, որոնք հանրապետական Թուրքիայում սկսել են անցկացվել 1927 թվականից: Մինչև 1965թ. մարդահամարը հարցարանում նշված էր մայրենի լեզվի տողը, և հարցումն էլ կատարվում էր ըստ այդ սկզբունքի: Այս մեթոդը, սակայն, չէր կարող տալ հստակ պատկերը, քանի որ, հատկապես գավառներում, հայերը զրկված էին մայրենիին տիրապետելու հնարավորությունից և շատ հաճախ թրքախոս կամ քրդախոս էին: Թուրքիայում 1927-1965թթ. անցկացված 7 մարդահամարների պարզորոշ ցույց են տալիս հայերենը որպես մայրենի լեզու նշողների թվի անկում[12].

Մարդահամարի թվականը	Մայրենի լեզուն (հայերեն)	Թուրքիայի ընդհանուր բնակչությունը
1927	67.754	13.629.488
1935	57.599	16.157.450
1945	47.728	18.790.174
1950	52.776	20.947.188
1955	56.235	24.064.763
1960	52.756	27.754.820
1965	33.094	31.391.421

[10] Matur B., Diyarbakır'ın son Ermeni'si, - Zaman, 02.12.2008.
[11] Kaplan S., 1915-te ne oldu?, İstanbul, 2005, 2-inci baskı, s. 169.
[12] Ulu C., Türkiye Cumhuriyeti'nde Ermeniler, Ankara, 2009, s. 312.

Իսկ ըստ նահանգների՝ հայախոսների թվաքանակի անկման պատկերը հետևյալն է[13].

Բնակավայրը	1927թ.	1935թ.	1965թ.
Յոզղաթ	1801	889	118
Սվազ (Սեբաստիա)	4122	2094	117
Դիարբեքիր	955	582	132
Էլյազըգ (Խարբերդ)	2399	707	2
Էրզրում (Կարին)	14	37	13
Կայսերի (Կեսարիա)	435	845	9
Մալաթիա	2625	1614	148
Ստամբուլ	45255	39831	29479
Ընդհանուրը	67754	57599	33094

Թուրքիայի Հանրապետությունում հայերի թվաքանակի կտրուկ նվազումն ունի մի քանի պատճառ, որոնց մեջ ամենակարևորը և որոշիչը պետական հալածանքի և խտրականության քաղաքականությունն ու դրանից բխող արտագաղթերն են: Թուրքիայում հայերի նկատմամբ խտրական քաղաքականության տարբեր դրսևորումների հանդիպում ենք հանրապետության հռչակման արդեն առաջին տարիներին: Այսպես, 1929թ. ամռանը և դրան հաջորդող ամիսներին մոտ 30.000 հայ է աքսորվել Խարբերդի, Դիարբեքիրի և Մարդինի նահանգներից[14]: Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Սքիների՝ 1934թ. մարտի 2-ին ԱՄՆ արտաքին գործերի նախարարին ուղարկած զեկուցագրում, որը պահվել է «հույժ գաղտնի» դասիչի տակ, ներկայացվում է Թուրքիայի արևելյան շրջաններից հայերի՝ այդ թվականների աքսորի մասին: Այսպես, նշվում է, որ 1934թ. սկզբներին թուրքական իշխանությունները սկսել են գավառներից հայերին

[13] Koçoğlu Y., Azınlık gençleri anlatıyor, İstanbul, 2004, s. 122.
[14] Walker C., Armenia: The survival of a nation, London, 1980, p. 348, նույնը տե՛ս նաև. Hofman T., Armenians in Turkey today (second edition), Uppsala, 2003, p. 15.

աքսորել Ստամբուլ: Վերջինները ստիպված են եղել շատ էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը (որը դեսպանը նույնական է համարում ունեցվածքը լքելուն) և գնալ Ստամբուլ, որտեղ Հայոց պատրիարքարանը, բարեգործական տարբեր ընկերություններ փորձել են օգնել գաղթականներին աշխատանք գտնել, իսկ մինչ այդ ամեն ինչ արել են նրանց պահելու, ապաստարան և սնունդ տալու համար[15]:

Ազգային փոքրամասնությունների և մասնավորապես հայերի դեմ իրականացված Թուրքիայի պետական քաղաքականության դրսևորումներից առանձնացնենք հատկապես ներքոհիշյալ երեքը, որոնք էական նշանակություն են ունեցել ազգային փոքրամասնությունների արտագաղթի և ներկայիս պատկերի ստեղծման համար.

1. 20 դասակարգի զինակոչ (1941-42թթ.)
2. Ունեցվածքի հարկ (1942-44թթ.)
3. 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերը

20 դասակարգի զինակոչ. Կարելի է ասել, որ Թուրքիայի Հանրապետությունում փոքրամասնությունների դեմ կիրառված խտրական քաղաքականության ամենաքիչ ուսումնասիրված և արծարծված խնդիրը 1941թ. իշխող Ժողովրդա-հանրապետական կուսակցության (CHP) կառավարության կազմակերպած, այսպես կոչված, 20 դասակարգի զինակոչն է: Այն տարածվել է հիմնականում հայերի, հույների և հրեաների վրա, հապշտապ բանակ է զորակոչվել այդ փոքրամասնությունների չափահաս տղամարդկանց մեծ մասը (ըստ տարբեր աղբյուրների՝ 18-48[16], 26-45[17], 18-60[18] տարեկան տղամարդիկ): Ուշագրավ է, որ զորա-

---

[15] Records of the Department of state Relating to the Internal Affairs of Turkey, 1930-1944. Ամերիկյան դեսպան Ռոբերտ Սքիներից ԱՄՆ արտգործնախարարին, 867.4016 հայերը, նույնը տե՛ս նաև Aktar A., Varlık vergisi ve "Türkleştirme" politikaları, İstanbul, 2000, s. 93.
[16] Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 504:
[17] Koçoğlu Y., Hatırlıyorum Türkiye'de Gayrimüslim Hayatları, İstanbul, 2003, s. 40.
[18] Аванесов С., նշված աշխ., էջ 162:

կոչվել են նույնիսկ նրանք, որոնք նոր էին վերադարձել զինծառայությունից և պահեստազորային էին[19]: Զորակոչն անցկացվել է խիստ գաղտնիության պայմաններում, և հնարավորինս թույլ չի տրվել տեղեկատվության արտահոսք[20], սակայն այս զորակոչի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ կիրառվել է բացառապես ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ[21]: Ազգությամբ հրեա հետազոտող Ռըֆաթ Բալին ականատեսների հետ զրույցների արդյունքում ձեռք է բերել տվյալներ, որոնք փաստում են, որ զորակոչելիս հաշվի չի առնվել ոչ մի հանգամանք. անգամ տարվել են հաշմանդամները, կույրեր, այլ արատներ ունեցողներ: Ի դեպ, հայազգի Սարգիս Չերքեզյանը, որը նույնպես ենթարկվել է այս զորակոչին, հետագայում պատմում է, որ իրենց հետ ծառայության են զորակոչվել անգամ հոգեկան խանգարում ունեցող մարդիկ, որոնց միակ «մեղքը» ազգային փոքրամասնությանը պատկանելն էր[22]: Սակայն այդ զորակոչվածները չէին կարող լիարժեք զինվոր համարվել, քանի որ նրանց չէր տրվել զենք, և նրանք չէին կրել զինվորական համազգեստ: Այդ ամենը վերապրողները հետագայում պատմել են, որ նրանց տրվել է աղբահավաքի հանդերձանք, որը ժողովրդի մեջ հայտնի էր «հինգ կոճականի» անվամբ: Ոչ մուսուլման տղամարդկանցից ձևավորվել էին աշխատանքային գումարտակներ, *որտեղ չեն եղել մուսուլմաններ, ինչը խորացրել է կասկածը և տարածված այն վարկածը, որ նրանց հավաքել են հարմար պահին ոչնչացնելու համար, ինչպես եղել է Առաջին համաշխարհային* պատերազմի տարիներին օսմանյան բանակի հայազգի զինվորականների հետ:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ թուրքական պետությունը երեք ոչ մուսուլման փոքրամասնությունների հանդեպ ուներ տարբերակված մոտեցում և ակնհայտորեն բացասաբար էր վերաբերվում հատկապես հայերին՝ կապված նրանց հանդեպ

---

[19] Bali R., "Yirmi kura ihtiyatlar" olayı, - Tarih ve Toplum, 1998, sayı 175, s. 4.
[20] Նույն տեղում, էջ 9:
[21] Նույն տեղում, էջ 4:
[22] Çerkezyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, 2003, s. 121.

անվստահության հետ[23]: Խոսելով 20 դասակարգի զինակոչի պատճառների և նպատակների մասին՝ պետք է նշել, որ սակավաթիվ աղբյուրներում կան որոշակի ենթադրություններ, իսկ ականատես վերապրողների պատմածները գալիս են հաստատելու այն վարկածը, որ դա խոշոր առումով էթնիկ զտում էր՝ ածանցյալ այլ նպատակներով: Գերիշխող և տարածված տեսակետն այն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան, ցանկանալով մտնել պատերազմի մեջ Գերմանիայի կողմից, նախապես հավաքել է ոչ հուսալի, «5-րդ շարասյուն» համարվող ոչ մուսուլման բնակչության տղամարդկանց՝ ոչնչացնելու նպատակով:

Ինչևէ, շուրջ մեկ տարի տևած այս ծառայությունը խոր հետք է թողել փոքրամասնությունների վրա: Ավելորդ չէ նշել, որ ծառայության ընթացքում զորակոչվածների շրջանում վատ պայմանների հետևանքով գրանցվել են մահվան, հիվանդությունների բազմաթիվ դեպքեր: Զորակոչ անվանված այս էթնիկ խտրականության բացահայտ դրսևորումը Թուրքիայի փոքրամասնությունների շրջանում էլ ավելի է խորացրել վախի և անվստահության մթնոլորտը, ինչը ստիպել է շատերին լրջորեն մտածել Թուրքիայից արտագաղթելու մասին:

Ունեցվածքի հարկ. 20 դասակարգի զինակոչից շատ չանցած՝ 1942թ. նոյեմբերին, իշխող Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը՝ ի դեմս Թուրքիայի կառավարության և վարչապետ Շյուքրու Սարաջօղլուի, Ազգային մեծ ժողովի հաստատմանն է ներկայացնում, այսպես կոչված, ունեցվածքի հարկի մասին օրենքը, որն ընդունվում է նույն թվականի նոյեմբերի 11-ին միաձայն քվեարկությամբ[24]: Սակայն դեռևս օրենքի ընդունումից առաջ Թուրքիայի ֆինանսների նախարարությունը պահանջել էր նահանգների ֆինանսական վարչություններից, բանկերից, անվտանգության ծառայությունից փոքրամասնությունների նյութա-

---

[23] Koçoğlu Y., նշված աշխ., էջ 40:
[24] Akar R., Aşkale Yolcuları (Varlık Vergisi ve Çalışma Kampları), İstanbul, 2006, s. 72.

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

կան վիճակի մասին տվյալներ[25]: Անզեն աչքով անգամ նկատելի էր, որ օրենքը բացահայտորեն ուղղված էր ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ: Այսպես, ունեցվածքի հարկի մասին օրենքը հարկատուներին բաժանում էր 4 խմբի, այն էլ՝ ըստ կրոնական պատկանելության.

1. մուսուլմաններ
2. ոչ մուսուլմաններ
3. հավատափոխներ
4. օտարահպատակներ:

Ըստ այդ օրենքի, ոչ մուսուլմանները (հայեր, հույներ, հրեաներ), մուսուլմանների համեմատ վճարում էին քառասնապատիկ կամ հիսնապատիկ ավելի հարկ: Փաստորեն, խախտվել էր սահմանադրական այն դրույթը, համաձայն որի՝ բոլորը, այդ թվում և ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, և ուշադրություն է գրավում այն, որ 20-րդ դարի կեսերին անգամ Թուրքիայում մարդիկ հարկվում էին ոչ թե ըստ ունեցվածքի, այլ ըստ էթնիկ ու կրոնական պատկանելության: Սա, միևնույն ժամանակ, Լոզանի պայմանագրի 39-րդ հոդվածի խախտում է, քանի որ այնտեղ հստակ նշված է. *«Թուրքիայի բոլոր բնակիչները, առանց կրոնական խտրականության, օրենքի առաջ պետք է լինեն իրավահավասար»*:

Պետության հրամանով ստեղծվել են հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է սահմանեին քաղաքացիների հարկաչափերը, ընդ որում՝ նրանք կամայական էին այդ հարցում: Հարկ է հատուկ շեշտել, որ այդ հանձնաժողովների անհիմն կերպով սահմանած հարկաչափը հարկատուն իրավունք չուներ բողոքարկելու: Իրենց ունեցվածքի արժեքը մի քանի անգամ գերազանցող հարկը չվճարելու դեպքում փոքրամասնությունների գույքը պետականացվում էր և վաճառվում աճուրդով: Եթե այդ պարագայում էլ գումարը չէր բավարարում հարկը վճարելուն, ա-

[25] Նույն տեղում, էջ 67-68:

պա նրանց աքսորում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին հարկը: Տաժանակրության հիմնական վայրերից էր ցուրտ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալե գավառը:

Պոլսահայ համայնքում տարածված է Ունեցվածքի հարկի վճարման օրերին մի քանի խոշոր սեփականատերերի հետ պատահած մի դեպք, որն առավելապես վերագրվում է հայազգի գործարար Թոքաթլյանին: Մեջբերվող օրինակը լավագույնս ցույց է տալիս հարկաչափի նշանակման գործընթացի խիստ կամայական լինելը: Թոքաթլյանին այն ժամանակվա համար խոշոր հարկ էին նշանակել՝ 1 մլն լիրա, հույս ունենալով, որ չի կարողանա վճարել այդ գումարը և նրա ունեցվածքը կպետականացվի: Սակայն Թոքաթլյանը հավաքում է այդ գումարը կանխիկ, ներկայանում Ստամբուլի հարկային վարչություն և հանձնում պայուսակը: Թուրք պաշտոնյաները, իրար նայելով, անմիջապես հայտնում են նրան, որ սխալմունք է տեղի ունեցել, նրա հարկը ոչ թե 1 մլն, այլ 10 մլն թուրքական լիրա է և սխալմամբ մեկ զրո չի գրվել: Լսելով այս լուրը՝ Թոքաթլյանը սրտի կաթված է ստանում:

Ունեցվածքի հարկի ընդունման պաշտոնական պատճառաբանությունը, ըստ վարչապետ Սարաջօղլուի, այն էր, որ դա ուղղված էր թուրքական լիրայի արժևորմանը, շրջանառության մեջ եղած դրամի նվազեցմանը, միևնույն ժամանակ՝ ուղղված էր սև շուկայի, գների աճի և սպեկուլյանտների դեմ[26]: Սակայն օրենքի ընդունումից կարճ ժամանակ անց՝ 1943թ. հունվարի 21-ին, «Ջումհուրիյեթ» թերթում տպագրված նրա մտքերը շատ ավելի անկեղծ էին և բացահայտում էին հարկի իրական նպատակը. *«Օրենքն իր ողջ խստությամբ կիրառվելու է այն մարդկանց նկատմամբ, ովքեր օգտվելով այս երկրի հյուրընկալությունից՝ հարստացել են, բայց, չնայած դրան, այս դժվարին պահին խուսափում են կատարել իրենց պարտականությունները»*[27]:

---

[26] Akar R., նշված աշխ., էջ 58:
[27] Նույն տեղում, էջ 11:

Խնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այս հարկատեսակի կիրառումն առավելապես քաղաքական, այլ ոչ թե տնտեսական բնույթ ուներ: Այնուամենայնիվ, Թուրքիայի բյուջեն լուրջ աճ է արձանագրել ունեցվածքի հարկի կիրառումից հետո: Այսպես, 1943թ. երկրի բյուջեն կազմել է 486.717.349 լիրա, իսկ 1944թ., այսինքն՝ ունեցվածքի հարկից հետո այն կազմել է 952.434.417 լիրա[28]:

Կարելի է նշել, որ ունեցվածքի հարկի հետևանքները բազմաշերտ են. նախ՝ տնտեսությունը խոշոր առումով թուրքացվեց, քանի որ սնանկացված ոչ մուսուլման գործարարների փոխարեն շուկա եկան նրանց ունեցվածքին էժան գներով տիրացած նոր հարուստները, որոնք բոլորը մուսուլմաններ էին: Հատկապես կարևոր է շեշտել, որ ունեցվածքի հարկի պատճառով գրեթե ամբողջովին վերացավ թուրքահայ բուրժուազիան: Սա փոքրամասնությունների նկատմամբ պետականորեն իրականացված հարստահարում էր: Թուրք հետազոտող Ռըդվան Աքարը ունեցվածքի հարկն իրավամբ համարում է *«փոքրամասնությունների տնտեսական ցեղասպանություն»*[29]:

1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերը. 1950 թվականից իշխանության ղեկին գտնվող Դեմոկրատական կուսակցությունը (DP) բազմիցս քննադատել է իր նախորդի՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցության քաղաքականությունը փոքրամասնությունների նկատմամբ: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ Թուրքիայում, անկախ իշխանության ղեկին գտնվող ուժի քաղաքական կողմնորոշումից, փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքը շարունակում է մնալ մերժողական: Այսպես, 1950-ական թվականներին Թուրքիայում բորբոքվում էին հակահունական տրամադրությունները՝ կապված նաև Կիպրոսի խնդրի հետ: Իշխանությունները տարբեր մեթոդներով էլ ավելի էին թեժացնում այդ տրամադրությունները, և, ի վերջո, 1955թ. սեպ-

---

[28] Çetinoğlu A.S., Varlık Vergisi 1942-1944: Ekonomik ve Kültürel Jenosid, İstanbul, 2009, s. 487.

[29] Նույն տեղում, էջ 15:

տեմբերի 6-7-ին հիմնականում Ստամբուլ և Իզմիր քաղաքներում կազմակերպեցին գործողություններ, որոնք հետագայում ստացան «պոգրոմ» որակումը: Պատրվակ ընդունելով Սալոնիկում Աթաթուրքի տան ռմբահարումը՝ Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցավ նախօրոք կազմակերպված և զինված ամբոխի հարձակում ազգային փոքրամասնությունների (հիմնականում՝ հույների և հայերի) տների, խանութների, եկեղեցիների վրա, ինչն ուղեկցվեց կոտորածով, թալանով, հրդեհումներով և բռնություններով: Այս դեպքերի ընթացքում հունական և հայկական համայնքները ունեցել են հետևյալ կորուստները. սպանվել են 10-12 անձ, բռնաբարվել 400 կին[30], թալանվել և ավերվել են 73 եկեղեցի, 8 սրբատեղի (հունական), 2 վանք, 2 գերեզմանատուն, 21 գործարան, 26 դպրոց, 5 սպորտային ակումբ, 1004 տուն, 4348 խանութ-արհեստանոց, 27 դեղատուն և լաբորատորիա, 110 ճաշարան-սրճարան-հյուրանոց[31]: Այդ ամենը տեղի է ունեցել թուրքական համապատասխան կառույցների լուռ անտարբերության ներքո, ինչը ևս մեկ անգամ հաստատում է դրանց կազմակերպված բնույթը: Միայն ահագին ուշացումով Ստամբուլում հայտարարվել է արտակարգ դրություն և մտցվել զորք, սակայն մինչ այդ գազազած ամբոխը հնարավորություն է ունեցել իրականացնել իրեն տրված հանձնարարությունը: Ավելի ուշ բավական աղմկահարույց բացահայտումներ արվեցին առ այն, որ Սալոնիկում Աթաթուրքի տանը ռումբ տեղադրած անձը Թուրքիայի հետախուզության աշխատակից է եղել[32]:

Սեպտեմբերի 6-7-ի դեպքերը Թուրքիայի ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչների համար եղան այն վերջին կաթիլը, որը լցրեց համբերության բաժակը, և նրանցից շատերը վերջնականապես որոշեցին լքել Թուրքիան:

---

[30] Kılıç E., 6-7 Eylül yağma olayları bir MİT organizasyonu, - Sabah, 01.02.2009.
[31] Macar E., Cumhuriyet döneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2003, s. 197.
[32] Kılıç E., նշված հոդվածը:

Հարկ է նշել նաև, որ վերը թվարկվածներն ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառված խտրական քաղաքականության հիմնական, բայց ոչ բոլոր մեթոդներն ու դեպքերն են, քանի որ նման դրսևորումներ հանդիպել են այլ ոլորտներում և ամենօրյա կյանքում ևս:

* * *

Հանրապետական Թուրքիայում հայերի գաղթերը կրել են երկու բնույթ՝ ներքին և արտաքին: Ներքին գաղթերը վերաբերել են գավառներում պահպանված հայության բեկորներին, որոնք կանգնած են եղել բարդ երկընտրանքի առաջ՝ մնալ գավառում և բռնել վերջնական ուծացման ճանապարհը կամ տեղափոխվել Ստամբուլ և ինտեգրվելով հայ համայնքին՝ փորձել վերագտնել աղճատված ինքնությունը: Տարբեր տարիներին գավառներից գաղթած հայերի մեծ մասի համար, ինչպես իրենք են խոստովանում, հիմնական դրդապատճառը եղել է «հայ մնալու ձգտումը»: Խնդիրն այն է, որ գավառներում բացակայել են ամենատարրական պայմանները, որոնք կօգնեին հայերին պահպանել ազգային և կրոնական ինքնությունը. մասնավորապես՝ Հայոց ցեղասպանությունից հետո, բացի Ստամբուլից, Թուրքիայի այլ վայրերում գործող հայկական դպրոցներ չեն պահպանվել, եկեղեցիների գերակշիռ մասը փակ էր կամ ավերված: Այս ամենին հավելյալ պետության և հասարակության ճնշումը ստիպել են շատ քրիստոնյա հայերի թաքցնել իրենց էթնիկ և կրոնական պատկանելությունը: 1950-ական թվականներից թափ է առել գավառների քրիստոնյա հայերի ինտենսիվ գաղթը Ստամբուլ: Եթե 1920-40-ական թվականներին Ստամբուլի համայնքի կորիզը և մեծամասնությունը դեռևս կազմում էին բնիկ պոլսեցի (այսինքն՝ ավելի վաղ դարերում Պոլիս տեղափոխված) հայերը, ապա հետագա տարիներին վերջինները հիմնականում գաղթեցին արտասահման, և նրանց փոխարինեցին գավառից եկած հայերը:

Հարկ է նկատել, որ երբեմն հենց Պոլսո Հայոց պատրիարքությունն է ձեռնամուխ եղել գավառներից հայերին Ստամբուլ տեղափոխելու գործին, որպեսզի գոնե այդ կերպ փրկի հայության բեկորները: Հայտնի են Գարեգին Խաչատուրյան, Շնորհք Գալուստյան պատրիարքների գործադրած ջանքերն արդեն քրդախոս և թրքախոս դարձած գավառահայ երեխաներին Ստամբուլի հայկական դպրոցներ տեղափոխելու և հայեցի կրթություն տալու ուղղությամբ: Հիշյալ գործում մեծ դեր ունեն նաև Հայոց եկեղեցու սպասավորներ Տեր Բարդուղ ավագ քահանա Հրքաջյանն ու Տեր Կիրակոս ավագ քահանա Թոքաթլյանը, որոնք անձամբ շրջել են տարբեր գավառներում և հավաքել այլախոս հայ երեխաներին:

Սակայն, պետք է նշել, որ գավառներից հայերի գաղթի հարցում կար նաև խորքային մեկ այլ պատճառ, այն է՝ թուրքական պետական քաղաքականությունը: Այսինքն՝ կարող ենք պնդել, որ պետության նպատակների մեջ էր մտնում Թուրքիայի արևելյան նահանգներում մնացած հայության բեկորների «կամովին» արտագաղթը, որպեսզի հայկական ներկայություն չվերստեղծվեր այդ տարածքներում: Այս նպատակի համար պետությունը գործադրում էր իր լծակները և ստեղծում համապատասխան պայմաններ, որպեսզի հայերը հեռանան արևելյան նահանգներից: Այն, որ սա եղել է պետական քաղաքականություն, ապացուցում է դեռևս 1947 թվականին իշխող Ժողովրդա-հանրապետական կուսակցության 9-րդ բյուրոյի (որը պատասխանատու էր փոքրամասնությունների հարցերի համար) պատրաստած մի զեկույցը, որում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետևյալ տեսակետները. *«Հայեր. Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի և քաղաքական ինչ-որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Հայերին նախևառաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարավոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաև բնակչության աճը»*[33]: Զեկույցում,

[33] Akar R., նշված աշխ., էջ 190:

հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղափոխելու համար մի հիմնավորում ևս. *«Այս եղանակով և՛ նրանց թվաքանակի աճը կկանխվի, և՛ վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքական ձևով կլինեն պետության աչքի առաջ և ձեռքի տակ»*: Ըստ այդ զեկույցի, հայերը մի խումբ են, որ չեն ձուլվում, ուստի առաջարկվում է նրանց թվաքանակը պակասեցնել կամ բնակչության փոխանակման, կամ էլ այլ երկրներ նրանց ***գաղթը դյուրացնելու*** միջոցով[34]: Իսկ հույների համար նշվում է, որ նրանք արդեն վտանգ չեն ներկայացնում և հիմնական խնդիրն է մինչև Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակը՝ 1953թ., Ստամբուլում ոչ մի հույն չթողնելը: Այս նպատակին ծառայեց նաև ավելի ուշ՝ 1964թ. Թուրքիայում բնակվող մոտ հիսուն հազար հույների արտաքսումը Հունաստան: Նշենք, որ 1930թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված պայմանագրով ճանաչվում էր երկու երկրների քաղաքացիների բնակության, առևտրով զբաղվելու, գույք ձեռք բերելու իրավունքը: 1964թ., երբ սրվեցին թուրք-հունական հարաբերությունները՝ կապված Կիպրոսի խնդրի հետ, թուրքական կառավարությունը միակողմանի չեղյալ հայտարարեց 1930 թվականի պայմանագիրը և սկսեց արտաքսել Հունաստանի քաղաքացիներին, որոնք մեծ մասամբ ստամբուլաբնակ հույներ էին: Հատկանշական է, որ արտաքսումը տարածվեց ոչ միայն Հունաստանի քաղաքացի հույների, այլև թուրքահպատակ հույների վրա, քանի որ տասնամյակների ընթացքում ձևավորվել էին ընտանիքներ, որտեղ, օրինակ՝ կինը Հունաստանի, իսկ ամուսինը՝ Թուրքիայի քաղաքացիներ էին: Նշենք, որ հույների հետ կապված թուրքական իշխանությունների նպատակն այժմ գրեթե իրագործված է, քանի որ այսօր Ստամբուլում կա ընդամենը 2000 հոգանոց հունական համայնք:

Թուրքիայում հայերի ներքին գաղթից բացի, արդեն 20-րդ դարի կեսերից սկսվել է նաև նրանց արտագաղթը եվրոպական երկրներ ու ԱՄՆ: Այս հարցում, ինչպես ասվեց, զգալի դեր ունե-

---

[34] Նույն տեղում, էջ 191:

ցավ Թուրքիայի պետական հալածանքի քաղաքականությունը: 1990-ական թվականներից նկատվում է թուրքահայերի արտագաղթի ծավալների որոշ նվազում:

* * *

Հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում հայ համայնքն ակտիվ ներգրավված չի եղել քաղաքական կյանքում, ինչը տարատեսակ բացատրություններ ու պատճառներ ունի: Սակայն ավելորդ չէ նշել, որ մինչև 20-րդ դարի 60-ական թվականները Թուրքիայի օրենսդիր մարմնում եղել են հայազգի մի քանի պատգամավոր, որոնցից, օրինակ, Մկրտիչ Շելեֆյանն ակտիվ դեր է խաղացել համայնքային խնդիրների լուծման գործում: Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի առաջին հայազգի պատգամավորը Մյունիփ Բոյան է (1872-1958թթ.), որը երեք անգամ ընտրվել է Հաքարիից, չորս անգամ՝ Վանից[35]: Սակայն նա կրոնափոխ լինելով և իսլամ ընդունելով՝ խզել է կապը հայկականության հետ. իր գործունեության մեջ էլ հայկական ինքնությունը երբեք ի ցույց չի դրվել: 1935թ. խորհրդարանական ընտրություններում Աֆիոնից պատգամավոր է ընտրվում Պերճ Քերեսթեջյանը (1870-1949թթ.): Նրա կենսագրության մեջ հատկապես առանձնանում է այն դրվագը, երբ 1919թ. տեղեկություն ստանալով Մուսթաֆա Քեմալի (հետագայում՝ Աթաթուրք) դեմ պատրաստվող հարձակման մասին, տեղյակ է պահել վերջինիս և այդպիսով փրկել նրա կյանքը: Հավանաբար, հենց դրանով է պայմանավորված Աթաթուրքի ջերմ վերաբերմունքը նրա նկատմամբ և այն, որ 1934թ. Թուրքիայում ազգանվան մասին օրենքի հռչակումից հետո անձամբ նախագահ Աթաթուրքը նրան «շնորհել» է Թուրքեր (թարգմանաբար՝ թուրք զինվոր) ազգանունը:

Թուրքիայում բազմակուսակցական համակարգի անցնելուց և Դեմոկրատական կուսակցության իշխանության գալուց հետո հայ

---

[35] Özdoğan G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., Türkiye'de Ermeniler: Cemaat-Birey-Yurttas, İstanbul, 2009, s. 291.

համայնքից երեք հոգի ընտրվել են պատգամավոր. 1950-54թթ. Անդրե Վահրամ Բայար Քոջաբեյլեքյանը, 1954-57 և 1957-60թթ.՝ Զաքար Թարվերը (որը ձերբակալվել է 1960թ. մայիսի 27-ի զինվորական հեղաշրջումից հետո և ըստ հավաստի տվյալների՝ այդ ժամանակ գլխին ստացած հարվածից մահացել է Յասսըադայի բանտում նույն տարվա սեպտեմբերին) և 1957-60թթ.՝ Մկրտիչ Շելեֆյանը: 1961-64թթ. Թուրքիայի օրենսդիր մարմնում պետության կողմից նշանակվում են երկու հայազգի սենատոր՝ Հերմինե Աղավնի Գալուստյանը և Սահակ Պերճ Թուրանը[36]: Սակայն, ինչպես նշվեց վերևում, թվարկված բոլոր պատգամավորների շարքում հատկապես առանձնանում է Մկրտիչ Շելեֆյանը, որի նպաստը համայնքային կյանքում զգալի է: Մկրտիչ Շելեֆյանը հայտնի էր իր ջերմ հարաբերություններով վարչապետեր Ադնան Մենդերեսի և Սուլեյման Դեմիրելի հետ, և շնորհիվ այդ կապերի՝ համայնքային մի շարք խնդիրներ իրենց լուծումներն ստացան: Իր մատուցած ծառայությունների հանդեպ հայ համայնքի երախտագիտության նշան կարելի է համարել այն, որ Մկրտիչ Շելեֆյանի մահվան օրը (1987թ. դեկտեմբերի 10) համայնքում և պատրիարքարանում հայտարարվել է սգո օր:

Հետագայում ևս հայ համայնքի առանձին անդամներ փորձել են դիրքեր զբաղեցնել քաղաքական դաշտում և տարբեր կուսակցությունների ցուցակներով առաջադրվել պատգամավոր, քաղաքապետարանների կամ թաղապետարանների ավագանի: Օրինակ, 1964թ. հայտնի հայ գրող Զավեն Բիբերյանը Թուրքիայի բանվորական կուսակցության ցուցակով առաջադրվում է պատգամավոր, իսկ 1968թ. ընտրվում Ստամբուլի ավագանու խորհրդի անդամ[37]: Համայնքի առանձին ներկայացուցիչներ, ինչպես Սարգիս Չերքեզոլլուն, Մասիս Քյուրքչուգիլը, Հրանտ Դինքը, Արմենակ Բաքրջյանը (Օրհան Բաքըր), Գրիգոր Ալթունը և ուրիշներ, մասնակցել են ձախակողմյան շարժումներին՝ անդամակցելով տարբեր կուսակցությունների և կազմակերպութ-

[36] Նույն տեղում, էջ 294-295:
[37] Նույն տեղում, էջ 295:

յունների, սակայն ընդհանուր առմամբ թե՛ համայնքային կառույցները և թե՛ պատրիարքարանն աշխատել են հեռու մնալ քաղաքականությունից:

Այսօր հայազգի հատուկենտ գործիչներ կան տեղական ինքնակառավարման ոլորտում, օրինակ՝ Ստամբուլի Շիշլի թաղամասի թաղապետի տեղակալ Վազգեն Բարընը:

Թուրքահայ համայնքի համար փորձության տարիներ դարձան 1970-80 թվականները, երբ Հայկական հարցի ակտիվացման և ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) գործողությունների արդյունքում Թուրքիայում ուժեղացան հակահայկական տրամադրությունները: Այդ տեսակետից առավել դժվար կացություն ստեղծվեց 1982թ. Անկարայի Էսենբողա օդանավակայանում կազմակերպված գործողության և դրան հետևած Լևոն Էքմեքչյանի դատավարության ժամանակ: Թուրքական իշխանություններն իրենց քարոզչական քաղաքականության մեջ օգտագործում էին նաև թուրքահայ համայնքին, և ժամանակի պատրիարք Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը ստիպված եղավ հանդես գալ վերոհիշյալ գործողությունները դատապարտող հայտարարություններով: 1982թ. հայազգի Արթին Փենիքը Ստամբուլի կենտրոնական հրապարակներից մեկում՝ Թաքսիմում, ինքնահրկիզվեց ի նշան բողոքի ASALA-ի գործողությունների դեմ: Թուրքական իշխանություններն իրենց հերթին փորձում էին տարանջատում մտցնել «Թուրքիայի Հանրապետության քաղաքացի հայի», «երկրին մեծ ծառայություններ մատուցած թուրքահայ համայնքի» և Սփյուռքի միջև:

Ստամբուլի հայ համայնքի համար նոր իրավիճակ ստեղծվեց Հայաստանի անկախության վերականգնումից հետո, երբ պոլսահայերը սկսեցին ավելի ակտիվ ընդգրկվել համահայկական գործընթացներին:

Հարկ է նշել, որ անցյալ դարի 60-ական թվականներից սկսած Եվրոպա աշխատելու մեկնած *«գաստարբայթեր»* թուրքերն այնտեղ ձևավորեցին համայնքներ և հենց իրենք դարձան փոքրամասնություն ու սկսեցին կրել փոքրամասնություն լինելու

«քաղցր և դառը» կողմերը: Այսօր թուրքերն իրենք էլ են բախվում ազգային փոքրամասնություն լինելու խնդրին, սակայն աշխարհագրական այլ հարթությունում՝ ազատ և դեմոկրատական Եվրոպայում (առավելապես Գերմանիա, Հոլանդիա, Բելգիա), ուր գոյություն ունի միլիոնների հասնող թուրքական համայնք: Պետք է նշել, որ թուրքական իշխանությունները միշտ ուշադրության կենտրոնում են պահել Եվրոպայի թուրքերի խնդիրները և ամեն կերպ նպաստել նրանց շրջանում ազգային-կրոնական ինքնագիտակցության պահպանման գործին՝ այդպիսով պայքարելով նաև ձուլման դեմ: Այս հարցին անդրադարձել է նաև Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Էրդողանը՝ կոչ անելով Եվրոպայի թուրքերին ինտեգրվել այն հասարակությանը, որի մեջ ապրում են, սակայն ամեն կերպ խուսափել ձուլումից: Ավելին, նա կարծիք է հայտնել, որ ձուլումը մեղք է մարդկության դեմ. *«Ոչ մի մարդուց, ոչ մի հասարակությունից չես կարող պահանջել հրաժարվել իր լեզվից, կրոնից, մշակույթից, սովորույթներից: Իսկ եթե պահանջեք, ապա սա մարդկության դեմ մեղք է»*[38],- ասել է Էրդողանը: Այս ամենով հանդերձ, Էրդողանն անարձագանք է թողնում իր երկրի փոքրամասնությունների խնդիրները կամ դրանց անդրադառնում այն ժամանակ, երբ պահանջում է քաղաքական շահը: Խոսելով Եվրոպայի թուրքերի և Թուրքիայի հայերի կարգավիճակների համեմատության մասին՝ ստամբուլահայ մտավորական Տիրան Լոքմագյոզյանը մեզ հետ զրույցում սարկազմով նշում է, որ ինքը՝ որպես Թուրքիայի քաղաքացի հայ, շատ կցանկանար ունենալ Գերմանիայում բնակվող և քաղաքացիություն չունեցող թուրքի իրավունքները:

Թուրքական մամուլում հաճախ կարելի է հանդիպել տարբեր երկրների թուրքական համայնքների հետ կապված խնդիրների բարձրաձայնման և սուր քննադատության: Սակայն եթե իրատես լինենք, ապա անհամեմատ ավելի կոշտ ու դաժան մեթոդներ կիրառվել են Թուրքիայի ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ինչը հանգեցրել է նրանց մասնակի կամ լիովին ձուլման:

---

[38] Hürriyet, 03.04.2008.

Ներկայումս Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունը (AKP) բազմիցս հայտարարել է, որ դեմ է էթնիկ և կրոնական ազգայնականությանը, և վարչապետ Էրդողանը բացահայտ քննադատել, ավելին՝ ֆաշիստական է համարել Թուրքիայի Հանրապետության այն քաղաքականությունը, որի հետևանքով փոքրամասնությունները հեռացան երկրից[39]: Սակայն սրան զուգահեռ որոշ թուրք բարձրաստիճան ղեկավարների արտահայտությունները շարունակում են մնալ խիստ մտահոգիչ: Դրանցից առանձնացնենք Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլի 2008թ. նոյեմբերին Բրյուսելում արած հետևյալ հայտարարությունը. *«Եթե այսօր Էգեյան ծովի ավազանում հույները և Թուրքիայի շատ վայրերում հայերը շարունակեին ապրել, արդյոք մենք կարո՞ղ էինք նույն ազգային պետությունը լինել»*[40]: Այս հայտարարությունը բուռն արձագանք գտավ. վարչապետին ուղղված բաց նամակով հանդես եկան մտավորականներ, պոլսահայեր, տպագրվեցին քննադատող հոդվածներ:

Կարելի է ասել, որ թուրքական իշխանությունները փոքրամասնությունների թեման համարում են իրենց քաղաքական զինանոցի տարրերից մեկը և ըստ նպատակահարմարության կիրառում դա: Հարկ է շեշտել նաև, որ երբեմն փոքրամասնությունների թեման դառնում է շահարկման, ավելին՝ սպառնալիքի առարկա. այդպիսի օրինակներից էր 2010թ. սկզբներին Էրդողանի ոչ ճշգրիտ տվյալներ պարունակող հայտարարությունը Թուրքիայում ապօրինի բնակվող հայաստանցիների մասին, որով նա սպառնում էր վտարել նրանց: Թուրքիայի վարչապետն այդ հայտարարությամբ ևս մեկ անգամ փաստեց, որ հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում Թուրքիայում բնակվող հայերին դիտում է որպես շանտաժի առարկա:

---

[39] Erdoğan'dan samimi çıkış, - Agos, 29.05.2009.
[40] 'Mübadele olmasa, milli devlet olabilir miydik?', - Hürriyet, 11.11.2008.

* * *

Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում, բացի հայ առաքելական համայնքից, 19-րդ դարում պետության կողմից իրավական կարգավիճակ (միլլեթ) ստացան նաև հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները: Հայության մեջ կաթոլիկության և բողոքականության մուտքը տարբեր աղբյուրներ պայմանավորում են արևմտյան միսիոներական շարժմամբ: Ավելի վաղ կաթոլիկություն ընդունած հայերին 1830թ. օսմանյան սուլթանի հրամանով շնորհվեց «հայ կաթոլիկ ազգ» կարգավիճակը[41]: Հայ կաթոլիկները ևս զգալի կորուստներ ունեցան Հայոց ցեղասպանության տարիներին. շուրջ 150 հազարանոց համայնքից ողջ է մնացել 20 հազարը, որոնց մի մասն արտագաղթել է տարբեր երկրներ[42]: Հանրապետական Թուրքիայում հայ կաթոլիկների թիվը շարունակ նվազել է, այսօր հաշվվում է շուրջ 3 500 հոգի, որոնք հիմնականում բնակվում են Ստամբուլում ու Անկարայում[43]: Համայնքին են պատկանում 12 եկեղեցի, սակայն բազմաթիվ հարցերի կողքին, որոնք հատուկ են Թուրքիայի փոքրամասնություններին, հայ կաթոլիկ համայնքն ունի նաև կազմակերպական մի շարք խնդիրներ:

1846թ. Օսմանյան կայսրությունում իրավական կարգավիճակ է տրվել նաև հայ ավետարանական համայնքին՝ հայ առաքելական և կաթոլիկ համայնքների պես ճանաչվելով որպես «հայ բողոքական ազգ (միլլեթ)»: Հայոց ցեղասպանությունից առաջ մոտ 60 հազար հաշվվող համայնքը ևս ենթարկվեց կոտորածի, ըստ տարբեր աղբյուրների՝ նրանցից միայն 14 հազարին հաջողվեց փրկվել[44]: Այսօր Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ունի շուրջ 500 անդամ, 2 եկեղեցի և 1 դպրոց Ստամբուլում:

---

[41] Սիմավորյան Ա., Թուրքիայի հայ կաթոլիկները, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2010, թիվ 1, էջ 27:

[42] Նույն տեղում:

[43] Նույն տեղում, էջ 28:

[44] Հովյան Վ., Թուրքիայի հայ բողոքական համայնքը, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2010, թիվ 3, էջ 21:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՍՕՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստամբուլի հայ համայնքի առջև այսօր ծառացել են համայնքային սեփականության, դպրոցների, լեզվի, խառնամուսնությունների և օրենսդրական մի շարք խնդիրներ:

Թուրքիայում փոքրամասնությունների կարգավիճակի, իրավական և ունեցվածքային խնդիրների ի հայտ գալը մեծ մասամբ բխում է Թուրքիայի իշխանությունների կողմից 1923թ. Լոզանի պայմանագրի ոչ մուսուլման փոքրամասնություններին վերաբերող հոդվածների (32-45-րդ հոդվածներ)[45] պաշտոնական մեկնաբանությունից: Հանրապետական Թուրքիայի իշխանությունները Լոզանի պայմանագրով սահմանված իրավունքները բնութագրում են ոչ թե որպես ազգային, այլ կրոնական փոքրամասնության իրավունքներ[46], այդ պատճառով փոքրամասնությունները չեն կարող կուսակցություններ կամ ազգային հաստատություններ ունենալ: Նաև դրա հետևանքով ստամբուլահայերը ստեղծել են մի շարք համայնքային կառույցներ սանուց կամ եկեղեցական միությունների անվան տակ, ինչպես, օրինակ՝ Եսայան Սանուց միությունը, Կեդրոնական Սանուց միությունը, Մխիթարյան Սանուց միությունը, Դպրեվանքի Սանուց միությունը և այլն: Միևնույն ժամանակ, քանի որ Լոզանի պայմանագիրը երեք փոքրամասնությունների իրավունքների ընդհանուր սահմանում և հիմնադրույթներ է պարունակում, իսկ համայնքային տարբեր բնագավառներին առնչվող հարցերը կանոնակարգվում են արդեն Թուրքիայի ներքին օրենսդրությամբ, ապա դա երկրի իշխանություններին մանևրելու լայն դաշտ է ապահովում:

---

[45] Ключников Ю., Саванин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, выпуск I, Акты Советской дипломатии, часть III, от снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской Революции, Москва, 1928, с. 206-207.

[46] Bebiroğlu M., Patrik, cemaat ve vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp.

Համայնքային սեփականության և դրա տնօրինման հետ կապված խնդիրներ[47]

Մինչև 2008թ. Համայնքային կալվածքների ու կառույցների և Կալվածքների տնօրինման կարգի վերաբերյալ օրենքներում մասնակի փոփոխություն կատարելը, Թուրքիայի փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի առաջ կանգնած համայնքային սեփականության հետ կապված հիմնախնդիրները բխում էին պետություն-համայնք հարաբերություններից:

1935թ. առաջին անգամ ընդունվեց 2762 թվակիր Կալվածքների օրենքը (Vakıflar Kanunu), որը տարբեր տարիներին որոշ փոփոխությունների ենթարկվելով՝ գործում է մինչև այսօր: Ըստ պրոֆ. Բասքըն Օրանի՝ նման օրենքի ընդունմամբ Աթաթուրքը նպատակ էր հետապնդում *«կոտրել շարիաթական տնտեսության ողնաշարը և այդպիսով իրականացնել հեղափոխական նպատակները»*[48]: Համաձայն օրենքի, փոքրամասնություններին պատկանող ամբողջ անշարժ գույքը հաշվառվում էր, և այդ ունեցվածքի տնօրինման վրա վերահսկողությունն իրականացնում էր Կալվածքների տնօրինությունը: Գույքից ստացված եկամուտը դրվում էր «Վաքըֆ բանկ», և համայնքն իրավունք էր ստանում օգտվել ոչ թե մայր գումարից, այլ այդ գումարի տոկոսներից[49]: Համայնքային խոշոր հաստատությունների, ինչպիսիք են, օրինակ՝ Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցը, Թոքաթլյան հյուրանոցը, հաշվապահությունն իրականացվում էր նույնպես Կալվածքների տնօրինության կողմից: Օրենքը սահմանում է նաև համայնքային կառույցների ղեկավար խորհուրդ-

---

[47] Համայնքային կալվածքների խնդրին նվիրված այս ենթագլխի հեղինակն է պ.գ.դ. Արսեն Ավագյանը: Այն տեղ է գտել Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Երևան, 2009, գրքի 32-48 էջերում:

[48] Cemaat vakıfları. Bugünkü sorunları ve çözüm önerileri, İstanbul Barosu, İnsan hakları merkezi, Azınlık hakları çalışma grubu, İstanbul, 2006, s. 22.

[49] Kanun Numarası: 2762, Kabul Tarihi: 5/6/1935, - Resmi Gazete, tarih: 13/6/1935, Sayı: 3027, Tertip:3, Cilt: 16, s. 586.

ների ընտրության կարգը, խորհուրդների անդամների թիվը, հաշվետվության ձևերը և այլն:

1936թ. հայկական, հունական և հրեական համայնքներից պահանջվեց ներկայացնել իրենց պատկանող բոլոր համայնքային կալվածքների ցուցակը, որը կցվեց օրենքին որպես հավելված և ստացավ «1936թ. հայտարարագիր» (1936 Beyannamesi) անվանումը[50]: 1936-1971թթ. զանազան դրդապատճառներից ելնելով մի շարք տներ, հողակտորներ կամ կալվածքներ կտակի, նվիրատվության կամ ուղղակի վաճառքի միջոցով փոխանցվեցին համայնքային տարբեր խորհուրդների, սակայն, սկսած 1974 թվականից, թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ «1936թ. հայտարարագրում» չնշված կալվածքները չեն կարող համայնքային սեփականություն համարվել: Դրանից հետո վերոնշյալ պատճառաբանությամբ իշխանությունների կողմից մի շարք դատական գործեր հարուցվեցին և Կալվածքների տնօրինության ու գանձապետարանի միջոցով այդ կալվածքները խլվեցին ու պետականացվեցին, այնուհետև վերավաճառվեցին: Այդ ճանապարհով հունական համայնքից առգրավվեց մոտ 400, հայկական համայնքից՝ մոտ 30 անշարժ գույք[51]: Փոքրամասնությունների կողմից գանձապետարանի կամ Կալվածքների տնօրինության նկատմամբ հարուցված դատական հայցերը կամ վճռվեցին հօգուտ պետության, կամ դեռևս մնում են անավարտ: Այդ տեսակետից ուշագրավ է Լևոն Բեղրոս Ակոբյանի դատական գործը, որը սկսվել է 1949-ին և դեռ չի ավարտվել[52]:

Դրա հետ մեկտեղ, թեև օրենքում նշված էր նոր համայնքային կառույցների ստեղծման և ղեկավարման կարգը, իրականում պետությունը ոչ միայն չէր արտոնում, այլև արգելակում էր նման կառույցների ստեղծումը: 1953թ. Գարեգին Խաչատուրյան պատրիարքի օրոք Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հայ պատգամավոր Մկրտիչ Շելեֆյանը կարողացավ ստանալ այն ժամանակվա վարչապետ Ադնան Մենդերեսի հավանությունը Ստամ-

---

[50] İhanet değil, vallahi adalet, - Hürriyet, 22.02.2008

[51] Azınlıklar, Vakıflar yasası'nı 'ileri' buldu, - Referans, 22.02.2008.

[52] Kirecburnu Savaşında ikinci raund, - Taraf, 06.12.2007.

բուլի Ուսքյուդար թաղամասում հիմնադրելու Սուրբ խաչ Դպրեվանք հոգևոր դպրոցը, բայց, հաշվի առնելով, որ Դպրեվանքի վերաբերյալ նախարարների խորհրդի որոշումը չընդգրկվեց Կալվածքների օրենքի մեջ, մինչև այսօր Դպրեվանքի կարգավիճակն իրավական առումով հստակեցված չէ, և այն իրավունք չունի ղեկավար խորհրդի ընտրություններ կատարել, չնայած որ 1957թ. ընտրված խորհրդի անդամներից մի քանիսը մահացել են:

2008 թվականին, Թուրքիայի օրենսդրական դաշտը ԵՄ երկրներում գործող օրենսդրական դաշտին համապատասխանեցման գործընթացի շրջանակներում, կառավարող Արդարություն և զարգացում կուսակցությունը Կալվածքների և դրանց տնօրինության մասին օրենքներում կարևոր փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես եկավ, ինչը հասարակական բուռն քննարկումների առարկա դարձավ[53]: Թուրքիայի նախագահ Ահմեթ Սեզերը վետոյի իրավունք կիրառեց, իսկ Ազգային մեծ ժողովում ԱԶԿ կուսակցության կողմից նախագահի վետոյի հաղթահարումից հետո փոքրամասնությունների նկատմամբ ընդգծված թշնամական վերաբերմունք ունեցող ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական և Ազգայնական շարժում կուսակցությունները, պնդելով, որ արված փոփոխությունները *«հակասում են Լոզանի պայմանագրին, սահմանադրությանը և հանրապետության հիմնադիր գաղափարախոսությանը»,* կառավարող կուսակցությանը մեղադրեցին դավաճանության մեջ[54]:

Փոքրամասնությունների տեսակետից ի՞նչ բարենպաստ փոփոխություններ կատարվեցին Կալվածքների օրենքում: Նախկինում սահմանված էր, որ համայնքի ընտրական միավորը շրջանն է: Եկեղեցիները, ինչպես նաև նրանց կից դպրոցներն ու երգչախմբերը ղեկավարվում են տվյալ թաղամասում բնակվող փոքրամասնության ներկայացուցիչներից ընտրված թաղային

---

[53] Կալվածքների օրենքում փոփոխություններ կատարելու փորձեր ձեռնարկվել էին նաև մինչև 2008թ., սակայն դրանք արդյունք չեն ունեցել: Այսպես, վարչապետ Թուրգութ Օզալը 1987թ. նման հիմնավորում էր ներկայացրել Թուրքիայի Ազգային մեծ ժողով, սակայն այդ օրենսդրական նախաձեռնությանն ընթացք չէր տրվել: Տե՛ս. TBMM Arşivi, Sayı: K.K.Gn.Md. 18/101-2093/04142. 6.7.1987.

[54] Bu kanun ihanet mi?, - Yeni Gazetem Efe, 22.02.2008.

խորհրդի կողմից: Այսպես, օրինակ՝ Բաքըրքյոյ թաղամասում բնակվող հայն իրավունք չուներ ընտրվել Բեյօղլուի թաղային խորհրդի անդամ. սա լրացուցիչ դժվարություններ առաջացրեց համայնքային կալվածքների և կառույցների պահպանման ու զարգացման համար հատկապես Ստամբուլում հայերի թվի նվազման և նախկինում հայաշատ շրջանների հայաթափման պարագայում: 2008թ. փոփոխություններում Կալվածքների օրենքի 29-րդ հոդվածում նշվում է, որ համայնքի դիմումի դեպքում և համապատասխան որոշումից հետո, եթե տվյալ վայրում բավականաչափ հայ չի բնակվում, ապա ընտրական շրջանը կարող է մեծացվել և ընդգրկել ոչ թե թաղամասը կամ շրջանը, այլ հոծ զանգված ունեցող ամբողջ նահանգը, կամ նման նահանգի բացակայության դեպքում՝ փոքրամասնության ներկայացուցիչներով առավել բնակեցված վայրը, այսինքն՝ Ստամբուլը[55]: Հաշվի առնելով, որ Թուրքիայի գավառներում սակավաթիվ հայ բնակչություն է մնացել, օրենքի այս կետը թույլ է տալիս պոլսահայ համայնքին միջոցներ ձեռնարկել Կայսերիում (Կեսարիայում), Դիարբեքիրում, Իսքենդերունում գտնվող հայկական գործող եկեղեցիները և կառույցները պահպանելու համար՝ ղեկավար խորհրդի անդամներ ընտրելով Ստամբուլից[56]: 2008թ. օրենքը հեշտացնում է նաև նոր համայնքային կառույցների հիմնադրման գործընթացը:

Համայնքային հաստատությունների ղեկավար խորհուրդների ընտրությունը իրականացվում է չորս տարին մեկ: Խորհուրդը կարող է լինել երեք հոգուց ոչ պակաս և յոթ հոգուց ոչ ավելի[57]: Ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած տվյալ փոքրամասնությանը պատկանող Թուրքիայի քաղաքացիներ: Ղեկավար խորհրդի անդամ լինելու համար պարտադիր է երկու կետ՝ ունենալ առնվազն նախնական կրթություն և չլինել դատված

---

[55] Kanun No 5737, Vakıflar Kanunu, kabul tarihi: 20/2/2008, - Resmi Gazete, 27 Şubat 2008, sayı 26800, s. 103, Vakıflar Genel Müdürlüğünden: Vakıflar Yonetmenliği, - Resmi Gazete, 27 Eylül 2008, sayı: 27010.

[56] Bebiroğlu M., Vakıflar ve cemaat vakıflar – Faaliyette bulunan vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp?s.

[57] Kanun No 5737, Vakıflar Kanunu, kabul tarihi: 20/2/2008, - Resmi Gazete, 27 Şubat 2008, sayı: 26800.

Թուրքիայի Քրեական օրենսգրքի որոշակի հոդվածներով, որոնց մասին նշված է օրենքի 9-րդ կետում[58]: Իսկ Կալվածքների տնօրինությունում, որը կազմված է 15 հոգուց և փոքրամասնությունների կալվածքների, կառույցների վերահսկման ու տնօրինման բարձրագույն մարմինն է, միայն մեկ ներկայացուցիչ կա հայ համայնքից, որը ներկայացնում է բոլոր համայնքային կառույցները:

2008թ. Կալվածքների ղեկավարման կարգի վերաբերյալ օրենքի 35-րդ հոդվածով առաջին անգամ ճանաչվել է արտասահմանից նվիրատվություն և ֆինանսական օգնություն ստանալու համայնքային կառույցների իրավունքը: Նման նվիրատվություններ կամ գումարներ ստանալու համար հարկավոր չէ հատուկ թույլտվություն, միակ պայմանն այն է, որ այդ գումարները պետք է փոխանցվեն բանկի միջոցով[59]: Այս կետը կարևոր է այն տեսակետից, որ անհրաժեշտության դեպքում տեսականորեն հնարավորություն է տալիս համայնքի տնօրինության տակ գտնվող այս կամ այն պատմամշակութային կառույցի վերանորոգման կամ պահպանման համար անհրաժեշտ գումար նվիրատվության տեսքով փոխանցել Հայաստանից կամ Սփյուռքից:

Ներկայումս հայ առաքելական համայնքին պատկանող 39 հաստատություններից 5-ը համահամայնքային են՝ դրանք են.

1. Յեդիքուլեի Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցը[60],
2. Քարագյոզյան որբանոցը,
3. Քալֆայան որբանոցը,
4. Կեդրոնական վարժարանը,
5. Սուրբ խաչ Դպրեվանքը:

---

[58] Նույն տեղում: Կալվածքների մասին օրենքի 7-րդ կետով սահմանվում է նաև, որ 10 տարվա ընթացքում կառույցի ղեկավար կամ ղեկավար խորհուրդ չկազմելու դեպքում, այդ կառույցի տնօրինությունը, դատարանի որոշմամբ, անցնում է Կալվածքների գլխավոր տնօրինությանը, տե՛ս. Kanun No 5737, Vakıflar Kanunu, kabul tarihi: 20/2/2008, - Resmi Gazete, 27 Şubat 2008, sayı 26800.

[59] Bebiroğlu M., Vakıflar ve Cemaat vakıflar – Faaliyette bulunan vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp?s.

[60] Ստամբուլահայ համայնքի ամենամեծ հաստատությունն է, որն ունի իրեն պատկանող մի շարք կալվածքներ:

Համահամայնքային հաստատություններ են համարվում նաև երեք գերեզմանատները (Ծիշլի, Բալըքլը և Ուսքյուդար), որոնց տնօրինումը, սակայն, փաստացի իրականացնում է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը:

Կալվածքների և դրանց տնօրինման կարգում օրենքների 2008թ. փոփոխության արդյունք կհանդիսանա այն, որ 1936թ. հռչակագրում նշված, սակայն հետագա տարիներին գանձապետարանին անցած երեք փոքրամասնությունների սեփականությունները կվերադարձվեն համայնքներին: Գոյություն ունի նաև 160[61] տարբեր տեսակի անշարժ գույք (բնակարաններ, շենքեր, հողատարածքներ), որոնք 1936-1971թթ. նվիրատվության, կտակի կամ գնման միջոցով ձեռք են բերվել տարբեր համայնքային կառույցների կողմից, սակայն պետությունն առգրավել է դրանք 1974 թվականից հետո[62]: Փոփոխված օրենքը նախատեսում է դրանք համայնքներին վերադարձնելու մեխանիզմ: Ընդդիմությունը մեղադրում է կառավարությանը, որ օրենքն այժմ թույլ է տալիս փոքրամասնություններին պահանջել գանձապետարանում գրանցված 59 կալվածքները, որոնք 10 տարվա ընթացքում հոգաբարձուների խորհուրդ չձևավորելու կամ որոշ շրջաններում համայնք չմնալու պատճառով դարձել են պետության սեփականությունը[63], ինչպես նաև փոքրամասնությունները մեծաքանակ հողային սեփականություն կստանան[64]:

Բոլոր դրական կողմերի հետ մեկտեղ 2008թ. օրենքը պոլսահայ համայնքի համար երկու կարևոր խնդիրների լուծման մեխանիզմ չի նախատեսում: Առաջինը վերաբերում է նրան, որ

---

[61] Դրանցից 18-ի սեփականության վկայականները պատկանում են տարբեր եկեղեցիների, 28-ի սեփականության վկայականները Վճռաբեկ դատարանի կողմից չեղյալ են հայտարարվել, տնօրինման իրավունքը հանձնվել է Կալվածքների հոգաբարձության խորհրդին, 114-ը գտնվում է գանձապետարանի վերահսկողության տակ, տե՛ս. İhanet değil, vallahi adalet, - Hürriyet, 22.02.2008.

[62] Vakıflar Kanunu ileri adım, ama hala eksikler var, - Referans, 22.02.2008.

[63] İhanet değil, vallahi adalet, - Hürriyet, 22.02.2008.

[64] Ազգայնականներին մոտ կանգնած «Օրթադողու» օրաթերթի լրագրող Թայլան Սորգունը նշում է, որ, օրինակ, Հայաստանը կարող է իրավական պահանջներ ներկայացնել Աղթամարի վերաբերյալ, տե՛ս Taylan, Sorgun, Yeni Vakıflar Kanunu tamam. Dönelim mi 9 Haziran 1919'a? - Ortadoğu, 22.02.2008.

օրենքը չի նախատեսում պետության կողմից բռնագրավված գերեզմանոցների տարածքների վերադարձում կամ փոխհատուցում[65]: Հանրապետության շրջանում ճանապարհաշինության կամ այլ պատրվակներով հայ առաքելական (Օրթաքյոյ, Բեշիքթաշ) և կաթոլիկ (Սուրբ Հակոբ) համայնքներին պատկանող գերեզմանների տարածքներ են վերցվել: Հատկապես հայ կաթոլիկ համայնքը մեծ վնաս է կրել, քանի որ Սուրբ Հակոբ գերեզմանոցը գտնվում էր Ստամբուլի կենտրոններից մեկում (Թաքսիմ հրապարակի մոտ), այն ամբողջովին ոչնչացվել է և որևէ հատուցում չի տրվել:

Երկրորդ՝ ընդունված օրենքում որևէ խոսք չկա գանձապետարանի կողմից երրորդ անձանց համայնքային կալվածքների վաճառման դեպքում փոխհատուցում տրամադրելու մասին: Նման կալվածքները վերադարձնելու կամ փոխհատուցում ստանալու համար թուրքահայ համայնքը պետք է դիմի դատական ատյաններին, կամ, Թուրքիայում հնարավորությունների սպառման դեպքում, Եվրոպայի մարդու իրավունքների դատարան[66]:

Համայնքին պատկանող սեփականության և դրանց վարձակալումից ստացված գումարների հարցում ստամբուլահայ համայնքի խնդիրն այն է, որ ոչ բոլոր թաղամասերում գտնվող սեփականություններն են եկամտաբեր: Եթե Բեյօղլու թաղամասի հոգաբարձուների խորհուրդը կարողանում է սեփականության վարձակալումից ստացված եկամուտներով ապահովել Եսայան դպրոցի բյուջեն և մի շարք կառույցների գործունեությունը, ապա Օրթաքյոյի հոգաբարձուների խորհուրդը ստիպված է դպրոցի բյուջեի տարեկան բացը լրացնելու համար «սիրո սեղան» կազմակերպել և նվիրատվություններ ակնկալել: Հոգաբարձուների կամ թաղային խորհրդի նյութական կարողություններն ազդում են նաև համայնքային կյանքում նրա խաղացած դերի և նշանակության վրա:

Ի տարբերություն հայ առաքելական համայնքի՝ Ստամբուլի հայ կաթոլիկ համայնքի սակավաթվության պայմաններում հա-

---

[65] Vakıflar Kanunu ileri adım, ama hala eksikler var, - Referans, 22.02.2008.
[66] Vakıflar Yasa tasarısı tazminatın onunu açar, - Referans, 06,12,2007.

մայնքային սեփականությունից ստացվող եկամուտները բավարարում են դպրոցների և այլ հայ կաթոլիկ հաստատությունների պահպանմանը: Հարկ է նշել, որ հայ կաթոլիկ համայնքին պատկանող մի քանի կարևոր հաստատություններ, ինչպես Սուրբ Հակոբ հիվանդանոցը, Մխիթարյան վարժարանը, գտնվում են Ստամբուլի կենտրոնում, և նրանց սեփականություն հանդիսացող շենքերի վարձակալությունից զգալի գումարներ են ստացվում: 2005թ. հայ կաթոլիկ համայնքն իրավունք ստացավ առևտրական կենտրոն հիմնել 1980-ական թթ. հրկիզված «Շան» կինոթատրոնի տեղում, ինչը զգալի եկամուտ կբերի համայնքին:

Կրթական խնդիրներ

Կրթությունը միշտ կարևոր տեղ է զբաղեցրել հայության կյանքում, աշխարհի տարբեր վայրերում հաստատված հայերը հիմնադրել ու զարգացրել են ազգային դպրոցներ: Պատահական չէ, որ 19-րդ դարի վերջին Պոլսում եղել է շուրջ 90 հայկական դպրոց, որոնցից 40-ը՝ թաղային, իսկ 50-ը՝ մասնավոր[67]: Այդ նույն ժամանակաշրջանում Պոլսի 454 դպրոցներից 174-ը պատկանում էին ոչ մուսուլմաններին (հայերին, հույներին, հրեաներին), իսկ այդ դպրոցներում գրանցված էր Ստամբուլի ընդհանուր աշակերտության մոտ կեսը՝ 16.248-ը[68]: Արդեն 1914թ. Պոլսում գործել է 64 հայկական դպրոց, որտեղ ուսանել է 25 հազար աշակերտ[69]:

Թուրքական աղբյուրները, խոսելով Օսմանյան կայսրության շրջանում բացված և գործող հայկական դպրոցների մասին, դրանք մեծ մասամբ ներկայացնում են որպես հակապետական, իմա՝ հակաթուրքական գաղափարներ ձևավորող օջախներ, որտեղ այդ տրամադրություններն էլ ավելի էին ակ-

---

[67] Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 181:
[68] Alkan M. Ö., Tanzimat'tan Cumhuriyet'e modernleşme sürecinde eğitim istatistikleri, Tarihsel istatistikler dizisi, Devlet İstatistik Kurumu, sayı 6, s. 18.
[69] Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 181:

տիվանում Օսմանյան կայսրությունում արևմտյան միսիոներական կազմակերպությունների գործունեությանը զուգահեռ: Միսիոներներին ազգային-կրոնական փոքրամասնությունները և հատկապես հայերը, ըստ թուրքական աղբյուրների, դիտում էին որպես իրենց «անջատողական ձգտումներին» աջակցող ուժեր[70]: Ավելի ծայրահեղական դիրքորոշում ունեցող թուրք հեղինակները գտնում են, որ *«Օսմանյան կայսրությունը քանդել, մասնատել ձգտող իմպերիալիստական արևմտյան պետությունները համագործակցել են ազգային փոքրամասնությունների հետ, որոնց դպրոցներում կրթություն են ստացել հետագայում իրենց համար աշխատող հոգևորականներ և լրտեսներ»*[71]:

Թուրքիայի Հանրապետությունում հայերի կրթական և հայկական վարժարաններ ունենալու իրավունքը հաստատված է Լոզանի պայմանագրի 40 և 41-րդ հոդվածներով[72]: Պոլսո հայկական դպրոցներն իրենց կառուցվածքները համապատասխանեցնում են Թուրքիայի ընդհանուր կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին, և այսօր դրանցում ուսումնառությունը եռաստիճան է. մանկապարտեզ՝ 1 կամ 2 տարի, նախակրթարան՝ 8 տարի, լիցեյ՝ 3 տարի[73]: Ներկայումս Ստամբուլի հայ համայնքի կրթական խնդիրները մասն են կազմում ընդհանրապես Թուրքիայի ազգային փոքրամասնությունների կրթական խնդիրների, և այս առումով հետաքրքիր փաստեր են հրապարակվել 2009թ. Եվրամիության աջակցությամբ պատրաստված «Թուրքիայում խտրականության դեմ պայքարը և փոքրամասնությունների իրավունքների աջակցությունը» զեկույցում: Այսպես, ըստ այդ զեկույցում տեղ գտած տվյալների՝ որոշակիորեն երևում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունը-

---

[70] Haydaroğlu P., Osmanlı İmparatorluğunda yabancı okullar, Ankara, 1990, s. 180.
[71] Kılıç R., Osmanlı Türkiye'sinde azınlık okulları (19. yüzyıl), - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=374&DilId=1
[72] Գույումճեան Ս., Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստանպուլ, 2010, էջ 24:
[73] Նույն տեղում, էջ 11:

ների դպրոցների և աշակերտների թվի նվազում, ինչը մեծապես կապված է պետության վարած քաղաքականության հետ, որտեղ գերիշխում են ձուլման տարրերը: Ընդ որում, զեկույցի այն հատվածը, որը վերաբերում է կրթական վիճակին, վերնագրված է բավական խոսուն. «Մոռանա՞լ, թե՞ ձուլում. փոքրամասնությունները Թուրքիայի կրթական համակարգում»[74]: Ըստ ներկայացված տվյալների, 1930-31թթ. Թուրքիայում եղել է փոքրամասնությունների 117 դպրոց, իսկ 1995-96թթ. դրանց թիվը իջել է 34-ի[75]:

Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարում՝ 1923-ին, Ստամբուլում եղել է 47 հայկական դպրոց[76], 1972-73 ուստարում դրանց թիվն իջել է 32-ի՝ 7366 աշակերտով, 1999-2000 ուստարում՝ 18-ի՝ 3786 աշակերտով, իսկ 2009-2010-ին արդեն 16-ի՝ 3029 աշակերտով[77]: Ինչպես տեսնում ենք, ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության հետևանքով 40 տարվա (1972-2010թթ.) ընթացքում հայ համայնքը կորցրել է իր դպրոցների և աշակերտության կեսը: Ըստ պոլսահայ մանկավարժ Կարո Փայլանի. *«Ամեն տարի 150-200 աշակերտ ենք կորցնում, և եթե այսպես շարունակվի, ապա առաջիկա տարիներին ստիպված կլինենք 6-7 դպրոց փակել»*[78]:

Թուրքիայում հայկական դպրոցների թվաքանակի անկումը հիմնականում կապված է աշակերտների թվի նվազման հետ, որն ունի մի քանի պատճառ: Սակայն, հարկ է նշել, որ թուրքական պետական քաղաքականությունը ևս նպաստել է տարատեսակ խնդիրների ի հայտ գալուն: Այսպես, 1924թ. մարտի 3-ին Թուրքիայում ընդունվում է օրենք «Կրթության

---

[74] Unutmak mı, asimilâsyon mu? Türkiye'nin eğitim sisteminde azınlıklar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=409&DilId=1

[75] Cumhuriyet dönemi İstanbul istatistikleri, Eğitim İstanbul I (İlk, Orta, Lise, 1928 - 1996), İstanbul Külliyatı, İstanbul, 1998, s. 14.

[76] Özdoğan G., Üstel F., ... նշված աշխ., էջ 194.

[77] Գույումճեան Ս., նշված աշխ., էջ 51:

[78] Unutmak mı, asimilâsyon mu? Türkiye'nin eğitim sisteminde azınlıklar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=409&DilId=1

նույնականացման» մասին, որը պահանջում էր Թուրքիայի տարածքում բոլոր կրթական հաստատություններին իրենց գործունեությունը համապատասխանեցնել լաիցիզմի (աշխարհիկության) սկզբունքներին: Այն պոլսահայ կրթական հաստատությունների համար լուրջ դժվարություններ առաջ բերեց, քանի որ ազգային կրթօջախներում դասավանդում էին նաև հոգևորականները, իսկ այդ օրենքի պահանջով նրանց մուտքը դպրոց արգելվեց: Բացի այդ, հայկական դպրոցներում դասավանդող ուսուցիչները ստիպված եղան որակավորման քննություններ հանձնել ստեղծված պետական հանձնաժողովներում, ձեռք բերել համապատասխան վկայականներ և նոր միայն իրավունք ստանալ դասավանդել հայկական դպրոցներում: Հարկ է նշել, որ կրթության նախարարության մասնավոր կրթական հաստատությունների 26810 թվակիր հրահանգի 32-րդ հոդվածի ե) կետում հատուկ նշվում է, որ *«դպրոցներում պաշտոնավարող Թուրքիայի քաղաքացիների համար պայման է հանդիսանում թուրքերենի իմացությունը, թուրքերենի ճիշտ և կանոնակարգված օգտագործումը: Անհրաժեշտության դեպքում այդ դասախոսները պետք է թուրքերենի քննություն հանձնեն»*[79]: 1937թ. Թուրքիայի կրթության նախարարության կողմից ընդունվեց մի օրենք, որը պարտավորեցնում էր ազգային փոքրամասնությունների դպրոցներում պարտադիր ունենալ թուրք փոխտնօրեն՝ աշակերտներին *«թուրքական մշակույթին համապատասխան դաստիարակելու համար»*[80]: Ուշագրավ է, որ շատ հաճախ փոխտնօրենի պաշտոնին նշանակվում են ազգայնամոլական կողմնորոշում ունեցող մարդիկ: Փոքրամասնությունների դպրոցներում «Թուրքիայի պատմություն» և «Քաղաքացիական պաշտպանություն» առարկաները պարտադիր դասավանդում են ազգությամբ թուրք

---

[79] T.C. Resmi Gazete, 8 Mart 2008, sayı: 26810.
[80] Özdoğan G., Üstel F.,.....նշված աշխ., էջ 195-196:

մասնագետներ: Փոքրամասնություններին պատկանող դպրոցներում ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկողության սահմանման խնդիրները կարգավորվում են կրթության նախարարության մասնավոր կրթական հաստատությունների 26810 թվակիր հրահանգով, որի հիմք հանդիսանում է 8/2/2007 թվականի 5580 թվակիր Հատուկ կրթական հաստատությունների մասին օրենքը[81]:

Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու գործընթացի համատեքստում մի շարք հետազոտություններ են անցկացվում այդ երկրում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ: Հետազոտություններից մեկում ազգային փոքրամասնությունների կրթական վիճակի հետ կապված խորհուրդներ կան՝ ուղղված թուրքական կառավարությանը, որոնք են՝ վերացնել փոքրամասնությունների դպրոցներում փոխտնօրենի և թուրքական մշակույթի ուսուցչի պարտադիր թուրք լինելու պայմանը[82]:

Ինչպես նշվեց վերևում, այսօր Ստամբուլում գործում է հայկական ընդամենը 16 կրթօջախ: Վերջին տարիներին աշակերտների թվի նվազման և ֆինանսական խնդիրների պատճառով փակվել են Բանգալթքի Անարատ հղության և Ներսեսյան-Երմոնյան նախակրթարանները: Ստորև մեջբերում ենք ներկայումս Ստամբուլում գործող հայկական կրթօջախների և աշակերտության 2009-2010 ուսումնական տարվա թվաքանակի մասին ամենաթարմ տվյալներ պարունակող մի աղյուսակ, որը պատրաստել է Ստամբուլի Կեդրոնական վարժարանի բազմամյա տնօրինուհի Սիլվա Գույումջյանը[83].

---

[81] T.C. Resmi Gazete, 8 Mart 2008, sayı: 26810.

[82] Ակօս, 14.12.2007:

[83] Գույումճեան Ս., նշված աշխ., էջ 50: Աղյուսակում հանդիպող (–) նշանը ցույց է տալիս, որ տվյալ վարժարանը համապատասխանաբար չունի մանկապարտեզ, նախակրթարան կամ լիցեյ:

	Վարժարան	Մանկապարտեզ			Նախակրթարան			Լիցեյ			Ընդամենը		
		Իգական	Տղա	Ընդհանուր	Իգական	Տղա	Ընդհանուր	Իգական	Տղա	Ընդհանուր	Իգական	Տղա	Ընդհանուր
1	Սահակյան-Նունյան	22	27	49	104	94	198	117	56	173	243	177	420
2	Տատյան	38	35	73	163	152	315	-	-	-	201	187	388
3	Եսայան	10	11	21	59	61	120	116	65	181	185	137	322
4	Մխիթարյան	21	20	41	95	80	175	36	29	65	152	129	281
5	Կեդրոնական	-	-	-	-	-	-	138	99	237	138	99	237
6	Եշիլգուղ	31	19	50	91	84	175	-	-	-	122	103	225
7	Մերամերչյան	17	19	36	79	85	164	-	-	-	96	104	200
8	Բարազոզյան	30	36	66	46	73	119	-	-	-	76	109	185
9	Թարգմանչաց	15	16	31	68	54	122	-	-	-	83	70	153
1	Արամյան-Ունջյան	24	13	37	66	45	111	-	-	-	90	58	148
11	Բեզջյան	7	13	20	53	71	124	-	-	-	60	84	144
12	Լևոն Վարդուհյան	5	11	16	43	47	90	-	-	-	48	58	106
13	Գալֆայան ճեմարան	3	6	9	55	22	77	-	-	-	58	28	86
14	Սամաթիայի Անարատ հղության	6	7	13	20	27	47	-	-	-	26	34	60
15	Սուրբ խաչ Դպրեվանք	-	-	-	-	-	-	27	23	50	27	23	50
16	Բոմոնթիի Մխիթարյան	1	-	1	5	18	23	-	-	-	6	18	24
Ընդհանուր գումարը		230	233	463	947	913	1860	434	272	706	1611	1418	3029

Պոլսահայ վարժարանների վիճակի աստիճանական անկումն ունի իր հիմնավոր պատճառները, որոնցից առանձնացնենք մի քանիսը.

1. Ամենամտահոգիչ խնդիրներից է հայ աշակերտների թվաքանակի տարեցտարի նվազումը[84]. տարիներ առաջ հայ ծնողների մեծ մասը երեխաներին ուղարկում էր գոնե հայկական նախակրթարան, որտեղ ընդհանուր գիտելիքներին զուգահեռ սովորում էին նաև հայերեն[85]: Սակայն այժմ պատկերն այլ է, և շատերը նախընտրում են իրենց երեխաներին տալ թուրքական, անգլիական, գերմանական դպրոցներ (լիցեյներ), որտեղ կրթական որակը բավական բարձր է[86] և զգալիորեն դյուրացնում է հետագայում համալսարաններ ընդունվելու հարցը:

Աշակերտների թվի նվազումն ուղղակիորեն կապված է նաև պոլսահայերի արտագաղթի հետ: Հարկ է շեշտել, որ Ստամբուլի հայկական դպրոցների աշակերտության թիվը պահպանվել կամ շեշտակի չի նվազել, օրինակ՝ 1960-ականներին, նաև շնորհիվ այն բանի, որ գավառներից բազմաթիվ հայեր սկսեցին տեղափոխվել Ստամբուլ ու իրենց երեխաներին ուղարկել հայկական դպրոցներ:

2. Հայկական դպրոցների կարևոր խնդիրներից են հայերեն դասագրքերի սակավությունն ու որակը: Բացի այդ, արգելվում է դասավանդումը արտերկրում (օրինակ՝ Հայաստանում) տպագրված դասագրքերով:

3. Կարևոր խնդիր է նաև դպրոցներում դասավանդող ուսուցիչների պատրաստվածության մակարդակը: Առօրյայում և ընտանիքում օրեցօր ծավալվող թուրքախոսության մակարդակը ևս ազդում է դպրոցների վրա, և ցավով պետք է նշել, որ հայոց լեզուն հայկական դպրոցներում շարունակաբար նահանջում է: Ուսուցիչները չեն տիրապետում հայերենին այն աստիճան, որ

---

[84] Պոլսի Կեդրոնական վարժարանի տնօրինուհի Սիլվա Գույումջյանի ներկայացրած տվյալներն ի ցույց են հանում նաև վերջին տասը տարում ստամբուլահայ աշակերտների թվաքանակի աստիճանական և, ցավոք, հաստատուն անկումը: Ստորև մեջբերում ենք այդ տվյալներն ըստ ուսումնական տարիների. 2000-2001 ուստարի՝ 3711 աշակերտ, 2001-2002՝ 3530, 2002-2003՝ 3401, 2003-2004՝ 3289, 2004-2005՝ 3210, 2005-2006՝ 3162, 2006-2007՝ 3099, 2007-2008՝ 3023, 2008-2009՝ 3045, 2009-2010՝ 3029: Տե՛ս Գույումճեան Ս., նշված աշխ., էջ 47:

[85] Նույն տեղում, էջ 28:

[86] Լոքմագյոզյան Տ., Ստամբուլի հայկական դպրոցները, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2008, թիվ 3, էջ 22:

կարողանան դասավանդել մայրենիով, իսկ աշակերտության շրջանում մեծ նախանձախնդրություն չի նկատվում: Ինչպես նշում է Սիլվա Գյումջյանը. *«Հայերէն լեզուի ուսուցումը այսօր իջած է այնպիսի մակարդակի մը, որ կարելի չէ այլեւս հանդիպիլ՝ հայերէնի քաջատեղեակ երիտասարդի մը»*[87]: Գյումջյանը նշում է նաև, որ մինչև 1970-ական թվականները դասավանդել են լավ պատրաստված մանկավարժներ, ովքեր նաև լավագույնս տիրապետել են մայրենիին: Այդ սերնդին հաջորդած նրանց աշակերտներն արդեն զգալիորեն զիջել են մայրենիի տիրապետման մակարդակով, որն ազդում է նրանց դասավանդման որակի և աշակերտության վրա: Ուստի, հաճախ թերի հայերենով դասավանդելու փոխարեն ուսուցչուհիները նախընտրում են թուրքերենով դասավանդումը: Այսօրվա Պոլսի հայկական դպրոցների ուսուցիչների մասնագիտական մակարդակի մասին չափազանց խոսուն է Սիլվա Գյումջյանի հետևյալ միտքը. *«Այսօր, մասնաւորաբար մեր նախակրթարաններուն մէջ չունինք այլ ուսուցիչներ. իսկ կիներ ընդհանրապէս իրենց տանտիկնութեան կողքին կ'ուսուցչագործեն (ընդգծումը մերն է Ռ. Մ.)»*[88]: Հարկ է ավելացնել նաև, որ Թուրքիայի տարածքում գործող փոքրամասնությունների դպրոցներում իրավունք չունեն դասավանդել անձինք, ովքեր Թուրքիայի քաղաքացի չեն[89]: Պետությունն օրենսդրորեն վերահսկողություն է սահմանում թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ դպրոցի ղեկավարման և ուսուցիչների նշանակման ոլորտներում:

---

[87] Գյումճեան Ս., նշված աշխ., էջ 13:

[88] Նույն տեղում, էջ 19:

[89] Կրթության նախարարության մասնավոր կրթական հաստատությունների 26810 թվակիր հրահանգի 32-րդ հոդվածի Բ կետում նշվում է, որ «փոքրամասնությունների որոշ դպրոցներում մշակութային պայմանագրերի համաձայն կամ փոխադարձության սկզբունքի հիման վրա, նախարարության կողմից փաստաթղթերի ստուգման և դրական կարծիքի դեպքում կարող են պաշտոնավարել նաև օտարահպատակները» (T.C. Resmi Gazete, 8 Mart 2008, sayı: 26810), բայց գործնականում դա վերաբերում է միայն հունական և հրեական դպրոցներին՝ հաշվի առնելով Հունաստանի և Իսրայելի հետ կնքված մշակութային համագործակցության վերաբերյալ պայմանագրերը:

Վերջին տարիներին խնդիր է ծագել նաև Ստամբուլում ապօրինաբար բնակվող ՀՀ քաղաքացիների երեխաների՝ հայկական դպրոցներում ուսանելու հետ կապված: Խնդիրը հայ համայնքի ներկայացուցիչները բարձրացրել են Թուրքիայի վարչապետ Էրդողանի մոտ, որը խոստացել է ընթացք տալ: Սակայն մինչև խնդրի լուծումը, այսօր Ստամբուլում, ըստ մեզ հասած տեղեկության, կա ոչ օրինական՝ ընդհատակյա հայկական վարժարան, որտեղ ուսանում է շուրջ 60 հայաստանցի երեխա, այնտեղ դասավանդում է 6-10 ուսուցչուհի:

Լեզվական խնդիրներ

Ստամբուլի հայ համայնքի ներկայիս կարևոր խնդիրներից է նաև հայոց լեզվի վիճակը. Պոլսում, որը համարվում էր արևմտահայերենի երբեմնի միջնաբերդը, հայախոսությունը շարունակաբար անկում է ապրում, սա կապված է տարբեր հանգամանքների հետ, սակայն կարևոր տեղ պետք է հատկացնել նաև պետության քաղաքականությանը, որը, մեղմ ասած, բարյացակամ չէ ոչ թուրքախոսության հանդեպ: Որպես պետական քաղաքականության դրսևորում կարելի է հիշել հանրապետական Թուրքիայում տարբեր տարիներին բուռն ծավալում գտած *«Հայրենակից, թուրքերե՛ն խոսիր»* ակցիաները, որոնց նպատակն էր հատկապես հասարակական վայրերում արգելել բացի թուրքերենից այլ լեզվի կիրառումը: Այս ամենն ուղեկցվում էր տարատեսակ հալածանքների դրսևորումներով, դրա հետևանքներից է նաև այսօրվա պատկերը: Հասարակական վայրերում հայախոսության անկմանը հետևեց նաև տանը թուրքերենի գործածումը: Հայերենի մակարդակի անկման մասին ներհամայնքային մի քննարկման ժամանակ նույնիսկ կարծիք է հնչել, որ հայերենը վերածվել է *«միջանկյալ լեզվի»* կամ *«մայրենի լեզվից թույլ, օտար լեզվից ուժեղ կարգավիճակի»*: Նույնիսկ կարծիք կա, որ հայերենն այսօր *«ոչ թե հայկական համայնքի, այլ ուսուցիչների լեզուն է»*[90]: Ներկայումս համայնքի

[90] Agos, 11.10.1996.

որոշ եկեղեցիներում երբեմն ստիպված քարոզը կարդացվում է նաև թուրքերեն՝ թրքախոս հատվածին հասկանալի լինելու համար: Թրքախոսների թիվը հատկապես շատ է գավառներից Ստամբուլ տեղափոխվածների (որն ունի իր օբյեկտիվ պատճառները) և երիտասարդության շրջանում:

Վերջերս Ստամբուլի հայ համայնքում կատարվել է հետազոտություն՝ ըստ տարիքային խմբերի հայերենի գործածման վերաբերյալ, և ունենք հետևյալ պատկերը.

<u>Ըստ տարիքային խմբերի՝ ամենաշատ կիրառվող լեզու</u>[91]

Տարիքային խումբ	13-18	19-24	25-34	35-44	45-60	60+	Ընդհանուր
Հայերեն	26.7	8.8	17,5	22,4	22,2	33,3	18,4
Թուրքերեն	73.3	90.0	77,5	76,6	76,6	66,7	80,1

Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ հայերեն կիրառում է համայնքի ընդամենը 18 տոկոսը, և ներկա գործընթացները հույս չեն ներշնչում, որ հայախոսների թիվը կավելանա: Ցավոք, ավելի իրատեսական են հակառակ կանխատեսումները:

[91] Özdoğan G., Üstel F., ...նշված աշխ., էջ 309.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1461թ. հիմնադրված Պոլսո Հայոց պատրիարքությունը մինչև օրս ունեցել է 84 գահակալ: Օսմանյան շրջանի վերջին Հայոց պատրիարքն է եղել Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը, ում գահակալությունն ընթացել է երկու փուլով՝ 1913-1916 և 1918-1922թթ.: Նրա պատրիարքության տարիները համընկել են ողջ հայության և, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի պատմության, թերևս, ամենադժվար և ողբերգական շրջանին: Հայոց ցեղասպանության տարիներին Զավեն պատրիարքն ակտիվորեն աշխատել է իր հոտի փրկության ուղղությամբ, ինչն, անշուշտ, շոշափելի արդյունքներ չէր կարող տալ: Սակայն հիշատակության արժանի են պատրիարքի երբեմն հուսահատ ջանքերը՝ ինչ-որ կերպ ազդել ստեղծված իրավիճակի վրա, որի համար դիմել է և՛ արտասահմանյան երկրների դեսպաններին, և՛ Օսմանյան կայսրությունից դուրս ապրող հայությանը՝ խնդրելով միջամտել, որպեսզի կանխվի հայերի սպանդը կամ օգնել արդեն տարագրվածներին: Բավական խոսուն է այն հանգամանքը, որ Զավեն պատրիարքն իր այդ ժամանակվա հոգեվիճակն արտահայտել է նաև բազմաթիվ նամակների կամ դիմումների տակ թողած ստորագրություններով, օրինակ՝ *«Նահատակ Թրքահայութեան վշտակիր Պատրիարք»*[92] կամ *«Դժբախտ Պատրիարք Հայոց Թուրքիոյ»*[93]:

Օսմանյան իշխանությունները 1916թ. որոշում են փոփոխություններ կատարել 1863թ. ընդունված Հայոց Ազգային Սահմանադրությունում. 1916թ. օգոստոսի 10-ին շրջանառության մեջ մտած փոփոխությունների համաձայն՝ փակվում է Պոլսո Հայոց պատրիարքությունը, նրա արխիվի մեծ մասը տեղափոխվում է

---

[92] Զաւէն Արքեպս., Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 136:
[93] Նույն տեղում, էջ 149:

Երուսաղեմ[94]: Այդ ամենից հետո Զավեն պատրիարքը, կիսելով իր տարագիր ժողովրդի ճակատագիրը, աքսորվում է Բաղդադ: Սակայն իրավիճակը փոխվում է Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո: 1918թ. սուլթանը ստորագրում է հրամանագիր 1863թ. Հայոց Սահմանադրությունը կրկին շրջանառության մեջ դնելու վերաբերյալ, և Պոլսո Հայոց պատրիարքությունը վերաբացվում է: 1918թ. փետրվարի 19-ին աքսորյալ Զավեն Սրբազանը վերադառնում է Պոլիս և կրկին ստանձնում պատրիարքի պարտականությունները: Այս շրջանում ստեղծված պայմանները թույլ են տալիս պատրիարքին ավելի ակտիվ և արդյունավետ աշխատանքներ տանել: Մասնավորապես, նա լծվում է ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից առևանգված հայ կանանց և երեխաների վերադարձման գործին[95]: Վիճակը փոխվում է քեմալական շարժման ծավալման և հաջողության հասնելուց հետո: Քեմալականները հենց սկզբից բացասական վերաբերմունք են դրսևորում Զավեն պատրիարքի նկատմամբ, անձամբ Մուսթաֆա Քեմալը 1919թ. օգոստոսի 22-ին Էրզրումի իր հայտնի ելույթում քննադատում է Հայոց պատրիարքին: Ավելի ուշ արդեն իշխանությանը տիրացած քեմալականները շարունակել են ընդգծված բացասական վերաբերմունք ունենալ Զավեն Սրբազանի հանդեպ: Նաև նրանց պարտադրանքով 1922թ. վերջին պատրիարքը ստիպված հեռանում է Թուրքիայից: Ցավալին այն է, սակայն, որ Զավեն պատրիարքի դեմ իշխանությունների հրահանգով և նաև նրանց դուր գալու մարմաջով այդ ժամանակ գործել են հայ համայնքի մի շարք ներկայացուցիչներ: Պատրիարքի հեռանալուց հետո, թեև նա հրաժարական չէր տվել, 1922թ. դեկտեմբերի 20-ին տեղապահ է ընտրվել Գևորգ եպիսկոպոս Արսլանյանը, որն այդ պաշտոնը վարել է մինչև 1927 թվականը[96]:

---

[94]Bebiroğlu M., Cumhuriyet döneminde Ermeni Patrikleri ve önemli olaylar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=442&DilId=1

[95] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի «Պոլսո Հայոց պատրիարքարանի դիրքորոշումը Թուրքիայի բռնի կրոնափոխ հայերի վերաբերյալ» ենթագլխում:

[96] Bebiroğlu M., Cumhuriyet döneminde Ermeni Patrikleri ve önemli olaylar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=442&DilId=1

Թուրքիայի Հանրապետությունում առաջին անգամ Հայոց պատրիարքի ընտրություններ տեղի են ունեցել 1927թ., և պատրիարք է ընտրվել Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը (1927-1944թթ.): Սակայն ընտրությունից հետո թուրքական իշխանությունները հինգ տարի դե-յուրե չեն ճանաչել Նարոյան պատրիարքին: Նրա գահակալության տարիները համընկան քեմալական ազգայնականության ձևավորման ու զարգացման հետ, հենց այդ ժամանակաշրջանում տեղի ունեցավ Թուրքիայի փոքրամասնությունների կյանքում բախտորոշ մի քանի իրադարձություն: Արդեն 1920-ականների վերջերին պետական մակարդակով սկսեց կիրառվել փոքրամասնությունների լեզուների դեմ մի պայքար, որն անվանվեց «Հայրենակի՛ց, թուրքերեն խոսիր»: Թուրքական իշխանությունների այս լեզվաքաղաքականությունը չէր հանդուրժում թուրքերենից բացի այլ լեզուների կիրառում, և սա Թուրքիայում շարունակվեց նաև հետագայում: 1934թ. հունիսի 21-ին Թուրքիայում ընդունվեց, այսպես կոչված, «Ազգանվան մասին օրենք», որով արգելվեցին ոչ թուրքական ազգանունները և որոշ վերջածանցներ, ինչպիսիք են «յան», «պուլոս», «իս» և այլն[97]: Այդ ժամանակ հայկական ազգանունների մեծ մասը թուրքացվեց, միայն հատուկենտ դեպքերում եղան բացառություններ, և պահպանվեցին «յան»-ով ավարտվող ազգանունները: Մեսրոպ պատրիարքի գահակալման տարիներին են անցկացվել նաև «20 դասակարգի զինակոչը», «Ունեցվածքի հարկը», այդ թվականներին են տեղի ունեցել գավառահայերի պարտադրված արտագաղթերը: Հարկ է նկատել, որ արդեն 1930-ականներին հայ համայնքում վախի և հալածանքի մթնոլորտը մեծ ծավալներ է ընդունում ու ստիպում ստամբուլահայերի մի մասին քայլեր կատարել ընդհանուր հայությունից տարանջատվելու և իրենց գոյությունը պաշտպանելու համար: Մասնավորապես՝ դրա ամենացայտուն օրինակներից է այն, որ 1935թ. դեկտեմբերի 15-ին Բանգալթքի հայոց եկեղեցում մի խումբ հայեր թուրքական պետությանն իրենց հավատարմությունն ապացուցելու համար ցու-

---

[97] Նույն տեղում:

ցաղրաբար այրում են «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործությունը՝ այն պատճառով, որ գիքրը պարունակում էր *«թուրք ազգի մասին զրպարտություններ»*[98]:

1944թ. Մեսրոպ պատրիարքը վախճանվում է, և պատրիարքական գահը կրկին թափուր է մնում: Գևորգ եպիսկոպոս Արսլանյանը երկրորդ անգամ է դառնում տեղապահ (1944-1950թթ.): Բազմաթիվ աղբյուրներ նշում են, որ նրա երկրորդ տեղապահության տարիներին հայ համայնքում էլ ավելի են սրվել ներքին երկպառակությունները, բազմացել խնդիրները: Անհասկանալի պատճառով շուրջ յոթ տարի Հայոց պատրիարք ընտրելու թույլտվություն չի տրվել: Կարծիքներ կան, թե մեղավորը թուրքական իշխանություններն են, սակայն ենթադրելի է, որ այդ ամենում դեր է խաղացել տեղապահ Գևորգ եպիսկոպոսի անձնական շահախնդրությունը: Ինչևէ, համայնքում ստեղծված վիճակի դեմ բողոքի ալիք է բարձրանում, 1948թ. Հայոց պատրիարքության մի շարք հոգևորականներ նույնիսկ ընդվզում են տեղապահ Գևորգ եպիսկոպոսի դեմ[99]: Սկսված վեճերին միջամտել են Ամենայն Հայոց Գևորգ Զ. և Կիլիկիայի Գարեգին Ա. կաթողիկոսները, ի վերջո, 1950 թվականի վերջին անց են կացվում պատրիարքի ընտրություններ: Պատրիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, որն այդ ժամանակ Լատինական Ամերիկայի Հայոց հոգևոր առաջնորդն էր: 1951թ. վերադառնալով Թուրքիա՝ մարտի 16-ին նա ստանձնում է պատրիարքի պարտականությունները: Գարեգին պատրիարքի գահակալման տարիները (1951-1961թթ.) համընկան Թուրքիայում միակուսակցական համակարգի վերացման և Ժողովրդա-հանրապետական կուսակցության պարտության հետ: Իշխանության եկած Դեմոկրատական կուսակցությունն արտաքուստ հռչակել էր ժողովրդավարական արժեքներին հավատարմություն: Հայ համայնքում և պատրիարքությունում, օգտվելով դրանից, տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Նորընտիր Հայոց

---

[98] Նույն տեղում:

[99] Զաւէն Ա. քինյ. Արզումանեան, Թուրքիոյ Պատրիարքութիւնը, Ազգապատում, հատոր դ., գիրք բ., Նիւ Եորք, 1997, էջ 78:

պատրիարքը Արմաշի հայտնի հոգևոր դպրոցի սան էր և ծրագրել էր Ստամբուլում հիմնել նմանատիպ մի կրթական հաստատություն, որը կլիներ նաև Արմաշի դպրոցի շարունակությունը: Այս մտադրության մասին Գարեգին Խաչատուրյանը հայտնել էր համայնքի իր կողմնակիցներին նաև մինչև պատրիարքական ընտրությունները, և դա յուրահատուկ նախապայմանի բնույթ էր կրել[100]: 1953թ. բացված Սուրբ Խաչ Դպրեվանք հոգևոր դպրոցը կոչված էր նաև Թուրքիայի տարբեր գավառներում մնացած հայության բեկորներին վերադարձնել ակունքներին, այսինքն՝ պայքարել լիակատար ուծացման դեմ, և կարելի է ասել, որ երջանկահիշատակ պատրիարքը նվիրումով է լծվել այդ գործին: Նրա նախաձեռնության շնորհիվ բազմաթիվ հայորդիներ վերադարձան իրենց արմատներին, հիմք դրվեց նաև հետագայում այս գործի շարունակության համար:

1961թ. հունիսի 22-ին Սրբոց Թարգմանչաց տոնի պատարագի ժամանակ սրտի տագնապի պատճառով եկեղեցում հոգին ավանդեց Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը: Երջանկահիշատակ Գարեգին պատրիարքի մահից հետո Պոլսո պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը[101], որն այդ աթոռի ամենաերկարակյաց գահակալներից էր (1961-1990թթ.): Հարկ է նկատել, որ Երուսաղեմի պատրիարքությունում հոգևոր ծառայություն իրականացնող Շնորհք Սրբազանը 1960թ. տեղափոխվում է Ստամբուլ հենց Գարեգին պատրիարքի հրավերով, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Գարեգին պատրիարքի նախընտրելի իրավահաջորդն է եղել: Շնորհք Գալուստյան պատրիարքի ջանքերով համայնքային կյանքում աշխուժություն է նկատվում, շարունակվում են աշխատանքները գավառահայության վիճակի բարելավման և ուծացումից փրկելու ուղղությամբ: 1966թ. Մուշի Վարթո գավառում տեղի է ունենում երկրաշարժ, որից հետո այնտեղ բնակվող հազարավոր հայեր

---

[100] Նույն տեղում, էջ 82:

[101] Ավելորդ չէ նշել, որ Գարեգին պատրիարքի մահվան և Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի ընտրության ժամանակ Պոլսում ներա է գտնվել նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն:

գաղթում են Ստամբուլ: Շնորհք պատրիարքի գլխավորությամբ ստեղծվում է «Գավառացի կարիքավորների օգնության հանձնաժողով», որը զբաղվել է տուժածների համար ապաստան և աշխատանք գտնելու գործով: 1967թ. Ստամբուլի մերձակա Քընալը կղզում պատրիարքը հայ երեխաների համար բացում է կազդուրման կայան-ճամբար[102]: Շնորհք պատրիարքի գահակալությունը համընկնում է միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության խնդրի ակտիվացման ժամանակաշրջանի հետ, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում համայնքի և անձամբ պատրիարքի համար: Այսպես, 1965թ., Հայոց ցեղասպանության 50-ամյակին, թուրք լրագրողներն ուղղակիորեն հարցրել էին Շնորհք պատրիարքին, թե արդյոք եղել է ցեղասպանություն: Շնորհք պատրիարքը խուսափողական պատասխան է տվել, թե ինքը պատմաբան չէ, թող պատմաբանները պատասխանեն: Սակայն երբ թուրք լրագրողները պնդել են իրենց հարցը, պատրիարքը տվել է հետևյալ հստակ պատասխանը. *«1915-ին ես 7 տարեկան էի, մեր 70 հոգանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս էլ կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Հիմա դուք ինձ պատասխան տվեք, թե ո՞ւր են իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաև պատասխանած կլինեք ցեղասպանությունը եղե՞լ է, թե՞ ոչ հարցին»*[103]:

Շնորհք պատրիարքի գահակալության տարիներին ստեղծվել է պատրիարքության խորհրդակցական մարմին, որի կազմի մեջ են մտել համայնքի մտավորականներ և ճանաչված անձինք: Աշխարհիկ այս կառույցը մեծ նշանակություն և կարևորություն է ունեցել, սակայն, Շնորհք պատրիարքի մահից հետո փակվել է: Ավելորդ չէ նշել, որ նման կառույցի անհրաժեշտություն կա նաև մեր օրերում:

---

[102] Bebiroğlu M., Cumhuriyet döneminde Ermeni Patrikleri ve önemli olaylar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=442&DilId=1

[103] Ermeni Patriği Şınork Kalustyan'ın üvey kardeşi Diyanet işleri başkanı Lütfi Doğan, - www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html

1990թ. Շնորհք պատրիարքի մահից հետո Պոլսո Հայոց 83-րդ պատրիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս Քազանջյանը (1990-1998թթ.): Նա եղել է 1953թ. բացված Սուրբ Խաչ Դպրեվանքի առաջին տնօրենը: Գարեգին պատրիարքի գահակալության տարիները համընկան Հայաստանի անկախության և հայ-թուրքական լարված հարաբերությունների նոր փուլի սկզբնավորման հետ:

Գարեգին Բ պատրիարքի վախճանից հետո՝ 1998թ. համայնքի առջև ծառանում է նոր պատրիարք ընտրելու խնդիրը: Հարկ է նկատել, որ թուրքական պետությունը տարատեսակ բյուրոկրատական խնդիրներ է ստեղծում պատրիարքական ընտրությունների համար և դրան զուգահեռ լարվում է մթնոլորտը հենց հայ համայնքի ներսում: Պատրիարքական աթոռի հիմնական հավակնորդներն էին Պոլսո Հայոց պատրիարքության Կրոնական ժողովի նախագահ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը և Շահան արքեպիսկոպոս Սվաջյանը: Համայնքում ձևավորվում են երկու թեկնածուներին աջակցող թիմեր, որոնց միջև պայքարը գնալով խորանում է: Այս ամենից անմասն չի մնում նաև պոլսահայ մամուլը, և «Ակօս» ու «Ժամանակ» թերթերը պաշտպանում են Մեսրոպ Մութաֆյանի, իսկ «Նոր Մարմարա»՝ Շահան Սվաջյանի թեկնածությունները: Հայոց պատրիարքի ընտրությունը դարձել էր նաև թուրքական առաջատար մամուլի քննարկման առարկա, և մի շարք թերթեր, վերլուծաբաններ անդրադարձել են խնդրին: Տարբեր փաստեր թույլ են տալիս պնդել, որ նախընտրական շրջանում Մեսրոպ Մութաֆյանն ամենևին չէր վայելում թուրքական պետության համակրանքը, ինչը ստիպում էր նաև համայնքի պահպանողական հատվածին պաշտպանել Շահան Սրբազանի թեկնածությունը: Մութաֆյանն ընկալվում էր որպես հոգևորականների երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, որը եռանդ ու ցանկություն ուներ լուծել հայ համայնքի առջև ծառացած խնդիրները: Ի վերջո, 1998թ. հոկտեմբերի 14-ին ձայների գերակշիռ մեծամասնությամբ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանն ընտրվում է Պոլսո Հայոց 84-րդ պատրիարք՝ դառնալով նաև պատրիարքության

պատմության մեջ այդ աթոռի ամենաերիտասարդ գահակալը (42 տարեկան): Ընտրություններից հետո Մեսրոպ պատրիարքն իր հարցազրույցներով և հրապարակային գործունեությամբ փորձեց ապացուցել, որ ինքը Թուրքիայի Հանրապետությանը հավատարիմ քաղաքացի է և նախընտրական շրջանում նրա հանդեպ թուրքական պետության ունեցած անվստահությունը զուրկ է լուրջ հիմքերից: Իր գահակալության շրջանում Մեսրոպ պատրիարքը որոշակի ոլորտներում ակտիվություն մտցրեց, սակայն, ցավոք, հենց այս շրջանում է, որ Պոլսո Հայոց պատրիարքությունը չափից ավելի քաղաքականացվեց: Դա հատկապես դրսևորվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին զուգահեռ: Մեսրոպ պատրիարքը քանիցս ելույթներ և հայտարարություններ ունեցավ ցեղասպանության խնդրի առնչությամբ, որոնք մեծապես համապատասխանում էին թուրքական պաշտոնական տեսակետին: Այս ամենի հետևանքով էլ ավելի խորացան անջրպետները Պոլսո պատրիարքության և Հայաստանի ու Սփյուռքի միջև: Ցավոք, անհամաձայնությունն ու անջրպետները զգացվեցին նաև Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի և Պոլսո պատրիարքության հարաբերություններում: Մեսրոպ պատրիարքի չափից ավելի քաղաքականացումը, ինչպես նաև համայնքային խնդիրներին նրա մոտեցումները լուրջ դժգոհություններ առաջացրին նաև համայնքի ներսում, և ընտրությունների ժամանակ նրան սատարած մարդկանց մի մասը բացահայտ անհամաձայնություն հայտնեց Մութաֆյանի գործունեությանը: Օրինակ՝ սրվեցին Հրանտ Դինքի և «Ակօս»-ի մերձավոր շրջապատի հարաբերությունները պատրիարքի հետ, որի հիմնական պատճառներից էր համայնքի կառավարման աշխարհիկ կառույցի վերականգնման հարցը, ինչին դեմ էր Մութաֆյանը: Ստեղծված անառողջ մթնոլորտն էլ ավելի խորացրեց համայնքի ճահճացած վիճակը և պատճառ դարձավ նոր խնդիրների, որոնք այսօր էլ մնում են չլուծված: 2008թ. Մեսրոպ Մութաֆյանի մոտ հայտնաբերվեց հիշողության կորստի հետ կապված հիվանդություն, որն ավելի ծավալվեց, և, ի վերջո, պարզ դարձավ, որ դա անբուժելի է և, փաստորեն, անգործունյա է դարձրել պատրիար-

քին: Ներեկեղեցական կարգի համաձայն, ընտրված պատրիարքը, անկախ տարբեր հանգամանքներից, ցմահ կրում է այդ տիտղոսը, սակայն Մութաֆյանի առողջական խնդիրները լուրջ ազդեցություն են ունենում նաև համայնքային կյանքի տարբեր ոլորտների վրա, քանի որ շարունակելով օսմանյան «ավանդույթները»՝ թուրքական իշխանություններն այսօր էլ հայ համայնքի դե-ֆակտո ղեկավար են ճանաչում պատրիարքին, որի փաստացի բացակայությունը ստեղծում է անկազմակերպ վիճակ:

Մութաֆյան պատրիարքի անգործունյա վիճակը ստիպեց պատրիարքությանն ու համայնքին ստեղծված վիճակից ելքի ուղիներ փնտրել, և հիմք ընդունելով Հայ Առաքելական եկեղեցու կանոնադրական որոշակի նորմեր՝ որոշում կայացվեց անցկացնել աթոռակից պատրիարքի ընտրություններ: Ըստ թուրքական օրենքների, պատրիարքի ընտրության թույլտվություն է տալիս Ստամբուլի նահանգապետարանը, որն էլ իր հերթին դա ստանում է ներքին գործերի նախարարությունից: 2009թ. վերջին Պոլսո Հայոց պատրիարքության անունից դիմում էր ներկայացվել Ստամբուլի նահանգապետարան՝ աթոռակից պատրիարքի կամ համապատրիարքի ընտրություններ անցկացնելու թույլտվության խնդրանքով, իսկ որոշ ժամանակ անց համայնքի անդամներից ձևավորված Նախաձեռնող մարմինն իր հերթին դիմել էր նահանգապետարան՝ խնդրելով պատրիարք ընտրելու թույլտվություն: Այսինքն՝ հայ համայնքի կողմից երկու տարբեր դիմումներ են ներկայացվել, որտեղ կար մի կարևոր իրավական տարբերություն՝ ընտրել պատրիա՞րք, թե՞ աթոռակից պատրիարք: Այս հարցը որոշակի խնդիրներ ի հայտ բերեց համայնքում, և արդեն իսկ առկա տարաձայնություններն էլ ավելի խորացան, իսկ թուրքական իշխանություններն այս իրավական անորոշությունը պատրվակ համարելով՝ ամիսներ շարունակ անպատասխան թողեցին երկու դիմումներն էլ: Հարկ է նկատել, որ համայնքային խնդիրները խորանում են նաև առկա լճացած պայմանների հետևանքով, և ձևավորված ստատուս քվոյի պահպանումը կարող է կործանարար լինել: Թուրքական իշխանութ-

յուններին, իհարկե, ձեռնտու չեն ակտիվ հովվապետի ընտրությունն ու հայ համայնքի առողջացումը և կազմակերպվածությունը, ուստի կանխատեսելի էր, որ նրանք ամեն ինչ անելու էին ճահճացած իրավիճակի պահպանման համար:

Սկսված գործընթացը ենթադրում էր նաև թեկնածուների առաջադրում. ըստ Հայոց եկեղեցու և Թուրքիայի օրենքների՝ Հայ Առաքելական եկեղեցու միայն ութ բարձրաստիճան հոգևորական իրավունք ունեին հավակնել պատրիարքի աթոռին[104], որոնցից հինգը հենց սկզբից հրաժարվեցին մասնակցել ընտրություններին: Մնացած երեքը՝ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը և Պոլսի պատրիարքության Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, հայտարարեցին, որ մասնակցելու են ընտրություններին: Սկզբից ևեթ ակնհայտ էր, որ ըստ ձևավորված սովորույթի՝ թուրքական իշխանություններն անպայման միջամտելու էին այս խնդրին և փորձելու էին պատրիարքի գահին տեսնել իրենց նախընտրած թեկնածուին, որը, շատերի կարծիքով, Թուրքիայի քաղաքացի Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն էր: Սակայն սկսված քարոզարշավը հետաքրքիր ընթացք ունեցավ, և թեկնածուների այցերն ու հանդիպումները համայնքի հետ էապես փոխեցին թուրքական իշխանությունների նախատեսած սցենարը: Գարեգին և Սեպուհ Սրբազաններն այցելեցին Ստամբուլ և հանդիպումներ ունեցան համայնքի հետ, որոնք հետաքրքիր և բազմամարդ էին: Հատկապես տպավորիչ հանդիպումներ ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Սրբազանը, որը համարձակ, սկզբունքային գաղափարներով ու հայացքներով նոր խոսք ասաց և նոր շունչ հաղորդեց քարոզարշավին: Այս ամենի արդյունքում համայնքում լուրջ ոգևորություն առաջացավ, և, կարելի է ասել, հենց հայաստանցի թեկնածուն էլ դարձավ ընտրությունների հավանական ֆավորիտը:

---

[104] Պոլսո Հայոց պատրիարքի աթոռին իրավունք ունեն հավակնելու այն հոգևորականները, ովքեր կամ Թուրքիայի քաղաքացի են, կամ ծնունդով Թուրքիայից են:

Համայնքում աթոռակից պատրիարքի ընտրության հետ կապված սպասողական վիճակը տևեց մի քանի ամիս, և միայն 2010թ. հունիսի 29-ին Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը Ստամբուլի նահանգապետարանի միջոցով, ի վերջո, պատասխանեց հայ համայնքի դիմումներին: Նշվում էր, որ իշխանությունները նպատակահարմար չեն գտնում ո՛չ պատրիարքի և ո՛չ էլ աթոռակից պատրիարքի ընտրությունները, այլ թույլտվություն են տալիս ընտրել պատրիարքի ընդհանուր փոխանորդ: Նկատենք, որ արդեն իսկ կար պատրիարքի փոխանորդ ի դեմս Պոլսո աթոռի ամենատարեց հոգևորական Շահան արքեպիսկոպոս Սվաջյանի, որը հիշյալ պատասխանից անմիջապես հետո հրաժարական տվեց, և մի քանի ժամ անց պատրիարքության հոգևոր խորհուրդը հապշտապ պատրիարքի ընդհանուր փոխանորդ ընտրեց Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին: Սակայն այստեղ կա նաև հստակ իրավական խնդիր. պատրիարքական ընդհանուր փոխանորդին նշանակում է հենց ինքը՝ պատրիարքը, այլ ոչ թե ընտրում է հոգևոր խորհուրդը: Այսինքն՝ թույլ է տրվել օրենքի խախտում: Այս ամբողջ գործընթացն ապացուցում է, որ թուրքական իշխանությունները մեծապես հետաքրքրված էին և ուղղակի միջամտեցին հարցին: Մյուս կողմից, նրանց քայլերի տրամաբանությունը հուշում է, որ փոխանորդ ընտրելու թույլտվության որոշմանը նրանք գնացել են այն բանից հետո, երբ հասկացել են, որ առկա ռեսուրսները բավարար չեն իրենց նախընտրելի թեկնածուին համահամայնքային ընտրություններում հաղթելու համար:

Այս ամենը բավական բացասական ազդեցություն ունեցավ Թուրքիայի հայության վրա, և այն ոգևորությունը, որ նկատվում էր համայնքում նախընտրական քարոզարշավի ժամանակ, անմիջապես տեղը զիջեց հուսախաբությանն ու անորոշությանը: Բացի այդ, ներհամայնքային երկպառակությունները և խմբավորումների միջև պայքարն էլ ավելի սրվեցին: Այսօր էլ համայնքում պատրիարքի ընտրության հետ կապված խմորումները չեն դադարել, ընդհակառակը, մեծ թափ են ստանում. մասնավորապես՝ ընթանում է ստորագրահավաք, որով պահանջում են հա-

մապատրիարքի ընտրություններ և իրենց բողոքն են հայտնում փոխանորդության դեմ:

Ավելորդ չէ շեշտել, որ նմանատիպ վիճակ, երբ արգելվել է ընտրել Հայոց պատրիարք, Թուրքիայում ստեղծվել է երկու անգամ. առաջինը՝ երբ իշխանության եկան քեմալականները և ծավալվեց քեմալական ազգայնականությունը, և երկրորդը՝ 1940-ական թվականներին, երբ երկրում աճում էին ազգայնամոլությունն ու պանթուրքիզմը: Երկու դեպքում էլ համայնքում հետընթաց, խնդիրների սրում և երկպառակության խորացում արձանագրվեցին: Կանխատեսելի է, որ նմանատիպ ապագա է սպասվում համայնքին նաև երրորդ փոխանորդության շրջանում:

* * *

Լոզանի պայմանագրից սկսած մինչև օրս Պոլսի Հայոց պատրիարքության իրավական կարգավիճակը հստակեցված չէ, օրենքի տեսակետից այդ կառույցն իրավաբանական անձ չի հանդիսանում և սեփականության իրավունք չունի: Օրենսդրորեն Պոլսի պատրիարքությունը Քումքափիի Մայր եկեղեցուն կից հաստատություն է: Այդ իսկ պատճառով այն իրավունք չունի անշարժ և շարժական գույք գնել, և գնված սահմանափակ գույքը գրանցվում է պատրիարքի անունով: Օրենսդրորեն նույնանման խնդիր գոյություն ունի նաև Պոլսի պատրիարքի հանգամանքի կամ կարգավիճակի հետ, որը հանդիսանում է հայ առաքելական համայնքի հոգևոր առաջնորդը:

Պոլսի Հայոց պատրիարքի ընտրությունները կանոնակարգվում են 18.09.1961թ. ընդունված Թուրքիայի Հանրապետության նախարարների խորհրդի թիվ 5/1654 որոշմամբ, որով սահմանվում են համայնքի կողմից երկաստիճան ընտրություններ: Ընտրությունից հետո Թուրքիայի նախարարների խորհուրդը շնորհավորական նամակ է հղում նորընտիր պատրիարքին, և դա համարվում է ընտրության արդյունքի պաշտոնական ճանաչում: Այդ նամակից հետո նորընտիր պատրիարքը, համաձայն 1934թ. ընդունված 259 թվակիր տարազի (սքեմի) մասին օրենքի, իրա-

վունք ունի եկեղեցու տարածքից դուրս ևս կրել կրոնական հանդերձանք՝ բացառիկ իրավունք, որից օգտվում են մուսուլմանների Կրոնական գործերի նախագահը, հույն պատրիարքը և հրեա համայնքի կրոնապետը:

Համայնքի կարևոր խնդիրներից է հոգևոր բարձրագույն կրթական հաստատության բացակայությունը (հոգևորական պատրաստող Սուրբ խաչ Դպրեվանքի 1969թ. փակումից հետո), ինչի պատճառով զգացվում է հայ հոգևորականների պակաս: Թուրքիայի օրենսդրությունն արգելում է օտարահպատակին հոգևորական պաշտոն զբաղեցնել: Մի քանի տարի առաջ Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը բարձրացրել է այս հարցը՝ առաջարկելով նույնիսկ համալսարաններից մեկում համապատասխան ֆակուլտետ ստեղծել: Պոլսի պատրիարքությունը հոգևոր կրթություն ստանալ ցանկացողներին գործուղում է Երուսաղեմ կամ Էջմիածին, սակայն, այնուամենայնիվ, հոգևորականների պակաս գոյություն ունի: Այդ իսկ պատճառով մի հոգևորական ստիպված է մի քանի եկեղեցի սպասարկել: Ստամբուլում այսօր քիչ չեն այն թաղամասերը, որոնց եկեղեցիները գործում են տարին կամ ամիսը մեկ օր: Ավելի անմխիթար վիճակ է տիրում գավառների հայ եկեղեցիներում, որտեղ տարվա որոշակի ամիսներին է միայն հոգևորական գործուղվում Ստամբուլից: Նշենք, որ հոգևոր դպրոցի խնդիրը վերաբերում է ոչ միայն Թուրքիայի հայ համայնքին, այն ավելի սուր է արտահայտվում հունաց համայնքի պարագայում: 1971թ. զինվորական միջամտությունից հետո փակվել է Հեյբելի կղզում գտնվող հունական հոգևոր դպրոցը, ինչի հետևանքով այսօր Հունաց տիեզերական պատրիարքությունը չի կարողանում հոգևորականներ պատրաստել: Հունական համայնքի հոգևորականների առաջացած տարիքը և երիտասարդ սերնդի փաստացի բացակայությունն օրհասական վիճակ են ստեղծել Հունաց պատրիարքության համար, ուստի և պատրիարք Բարդուղիմեոսը հնարավոր բոլոր ատյաններում բարձրացնում է այս հարցը: Կարելի է ասել, որ հունական հոգևոր դպրոցի հարցը այսօր թուրք-հունական միջպետական հարաբերություններում զբաղեցնում է ամենակարևոր տեղերից մեկը: Այս

ամենին զուգահեռ Հայոց պատրիարքությունը ևս բարձրաձայնում և օրակարգում է պահում հայկական Սուրբ խաչ Դպրեվանք հոգևոր դպրոցի վերաբացման հարցը, որն անհամեմատ ավելի քիչ պրոբլեմային կարող է լինել:

* * *

Արդեն 17-րդ դարի սկզբին Պոլսո պատրիարքությանն էին պատկանում Օսմանյան կայսրության տարածքում գոյություն ունեցող բոլոր առաքելական վանքերն ու եկեղեցիները[105]: 1900-ական թվականների սկզբին պատրիարքությունն ունեցել է 1181 եկեղեցի և 132 վանք[106]: Այսօր Պոլսո պատրիարքության իրավասության տակ է գտնվում ընդհանուր առմամբ 43 եկեղեցի, որոնցից 42-ը՝ Թուրքիայում, մեկը՝ Կրետե կղզում[107]: Թուրքիայի 42 հայկական եկեղեցիներից 6-ը գտնվում են Ստամբուլից դուրս՝ Կեսարիայում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Դիարբեքիրում՝ Սուրբ Կիրակոս, Մարդին-Դերիքում՝ Սուրբ Գևորգ, Իսքենդերունում՝ Սուրբ Քառասուն մանկանց, Քըրքիանում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (կիսականգուն) և Սամանդաղ Վաքըֆլըում՝ Սուրբ Աստվածածին[108]:

Պոլսո Հայոց պատրիարքության խնամքի ներքո են գտնվում Ստամբուլի 16 հայկական գերեզմանատները՝ Բաղլարբաշըի Սուրբ խաչ և Սուրբ Կարապետ, Քադըքյոյում, Քընալը կղզում, Քուրուչեշմեում, Բալըքլըում, Էդիրնեքափըում, Հալըջըօղլուում (Հասքյոյ), Բաքըրքյոյում, Օրթաքյոյում, Ռումելիհիսարի Բօյաջըքյոյում, Յենի քյոյում, Բույուքդերեում, Քանդիլլիում, Շիշլիում[109]: Ի դեպ, Շիշլիի հայկական գերեզմանատան պանթեոնում են հանգչում Հայոց պատրիարքներ, մտավորականներ և մշակույթի գործիչներ, համայնքի հայտնի անձինք:

---

[105] Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 183:
[106] Նույն տեղում, էջ 184:
[107] Bebiroğlu M., Patrik, cemaat ve vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp.
[108] Ulu C., նշված աշխ., էջ 350:
[109] Özdoğan G., Üstel F.,..... նշված աշխ., էջ 536:

Բացի Ստամբուլից, Թուրքիայի այլ վայրերում հայոց գերեզմանատները կամ ավերված են, կամ իսպառ ոչնչացված, կամ էլ գտնվում են անխնամ վիճակում. դրանք չունեն նաև իրավական կարգավիճակ: Այսօր Թուրքիայում հայկական գերեզմանատներ պահպանվել են Կայսերիում (Կեսարիա), Մալաթիայում, Վաքըֆլըում, Սեբաստիայում, Արաբկիրում:

* * *

Պոլսո հայությունն ունի նաև երկու հիվանդանոց, որոնցից մեկը պատկանում է առաքելական, իսկ երկրորդը՝ կաթոլիկ համայնքին: Պոլսո հայկական հաստատությունների մեջ առանձնահատուկ տեղ ունի Սուրբ Փրկիչ հիվանդանոցը, որը կառուցվել է 1832-33թթ. Գ-ազազ Արթին (Հարություն) ամիրա Բեզջյանի կողմից, իսկ գործունեությունը սկսել է 1834 թվականից: Շենքը գտնվում է Յեդիքուլեում, որը 19-րդ դարի սկզբին դուրս էր Ստամբուլի վարչական տարածքից, իսկ այսօր քաղաքի թաղամասերից մեկն է: Հիվանդանոցի շենքի ճարտարապետերն են հռչակավոր Կարապետ Պալյանը և նրա փեսա Օհանես բեյ Սերվերյանը[110]: Հիվանդանոցը, համալրված լինելով լավագույն սարքավորումներով և մասնագետներով, համարվում է Ստամբուլի կարևոր առողջապահական հիմնարկներից մեկը, որի ծառայություններից օգտվում են ոչ միայն հայ համայնքը, այլև տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Սուրբ Փրկիչ հիվանդանոցն այսօր ունի հիվանդների համար նախատեսված 280 մահճակալ, մեկ պոլիկլինիկա, դեղատուն և, բացի այդ, հիվանդանոցին կից կա ծերանոց (270 հոգու համար) ու հոգեմտավոր խանգարում ունեցողների կայան: Յեդիքուլեի Սուրբ Փրկիչ հիվանդանոցը նաև հայ համայնքի ամենամեծ և հարուստ հաստատությունն է (կալվածքը): Հիվանդանոցի բակում է գտնվում Սուրբ Փրկիչ մատուռ-եկեղեցին:

---

[110] Նույն տեղում, էջ 538:

Հայ կաթոլիկ համայնքին է պատկանում Ստամբուլի Էլմադաղ թաղամասում գտնվող Սուրբ Հակոբ հիվանդանոցը, որն ուներ հիվանդների համար նախատեսված 50 մահճակալ և ծերանոց, ուր կարող էին ապաստանել 50 հոգի: Այս հիվանդանոցը կառուցելու նախաձեռնությունը պատկանում է մի շարք հայ կաթոլիկ բարեգործների՝ Գ-րիգոր Քըլըչյանի գլխավորությամբ: 1836թ. սկսված շինարարությունն ավարտվում է 1837-ին, և հենց նույն տարի էլ բացվում է Սուրբ Հակոբ հիվանդանոցը: 1949թ. հիվանդանոցի կառավարման խորհուրդը որոշում է ընդունում արդիականացնել առողջապահական հաստատությունը, և 1953թ. քանդելով 19-րդ դարի փայտաշեն կառույցը՝ սկսում են նոր շենքի շինարարությունը: Սակայն ֆինանսական խնդիրների պատճառով շինարարությունը տևում է 10 տարի. 1963թ. բացվում է ծերանոցը, իսկ 1968-ին՝ ամբողջ համալիրը: Նորակառույց հինգհարկանի շենքի ճարտարապետն է Արամ Տեր-Հակոբյանը: Սուրբ Հակոբ հիվանդանոցն այսօր ունի հարյուր հիվանդասենյակ, պոլիկլինիկա, ծերանոց, դեղատուն և լաբորատորիա[111]:

Պոլսո Հայոց պատրիարքության դիրքորոշումը Թուրքիայի բռնի կրոնափոխ հայերի վերաբերյալ

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը, բացի հոգևոր-կրոնականից, ունեցել է և ունի նաև աշխարհիկ-քաղաքական գործառույթներ՝ կապված Թուրքիայում ապրող հայության հետ: Օսմանյան կայսրությունում և այնուհետև Թուրքիայի Հանրապետությունում բնակվող հայության տարբեր խնդիրների նկատմամբ Պատրիարքության կեցվածքին և արած քայլերին զուգահեռ՝ հետաքրքրիր է դիտարկել նաև նրա մոտեցումներն ու քաղաքականությունը հատկապես Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայերի հարցի վերաբերյալ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, պարտված Օսմանյան կայսրության ղեկավարության առջև Անտանտի ուժերի աջակցությամբ բարձրացվել է Հայոց ցեղասպանության

---

[111] Նույն տեղում, էջ 541-42:

տարիներին առևանգված և բռնի իսլամացված հայերի խնդիրը: Մասնավորապես, պահանջվել է մուսուլմանների կողմից առևանգված հայ կանանց և երեխաներին վերադարձնել իրենց ընտանիքներին, իսկ ծնողազուրկներին ու ընտանիք չունեցողներին՝ հայկական կամ քրիստոնեական կազմակերպություններին: Այս հարցում լուրջ դերակատարում է վերապահվել Պոլսո Հայոց պատրիարքությանը, որը դարձել է Հայոց մնացորդաց փրկության գործի առաջամարտիկը: Մասնավորապես, ստեղծվել են հանձնախմբեր, որոնք ուսումնասիրել և տեղեկություններ են հավաքել այդ տարիներին առևանգված ու բռնի կրոնափոխված հայերի բնակության վայրերի և կարգավիճակների մասին, որից հետո սկսվել է այդ բեկորների փրկության, այն է՝ մուսուլմանական ընտանիքներից ազատելու գործընթացը:

Հայ որբերի և կանանց ազատելու հետ կապված աշխատանքներն առավել ակտիվ սկսվում են 1919թ., Պոլսո պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի երկրորդ գահակալության տարիներին: Այն ժամանակվա օսմանյան կառավարությունը, ի դեմս ներքին գործերի նախարարության, 1919թ. փետրվարի 5-ին հատուկ հրաման է ուղարկում նահանգներ, որտեղ ասվում էր. *«Մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»*[112]: Այս հրամանը, որը ներկայումս էլ պահվում է Թուրքիայի վարչապետի աշխատակազմի օսմանյան արխիվում, ոչ թե կառավարության բարի կամքի դրսևորումն էր, այլ արտաքին ճնշման և պարտադրանքի արդյունք: Ուշագրավ է, որ անդրադառնալով այս հրամանին՝ շատ թուրք գիտնականներ այն քննադատում և համարում են ժամանակի կառավարության թուլության ապացույց:

Իհարկե, հայության բեկորներին փրկելու գործընթացը բախվում էր մի շարք խոչընդոտների, որոնցից էր, օրինակ, այն, որ շատ հայուհիներ երեխաներ էին ունեցել իրենց առևանգիչներից (թուրք, քուրդ, արաբ) և կանգնած էին բարդ երկընտրանքի առջև՝ թողնել երեխային և վերադառնալ ակունքների՞ն, թե՞

---

[112] Atnur İ., Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 189.

մնալ մուսուլմանական ընտանիքում: Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում եղել են դեպքեր, երբ որոշ թվով հայուհիներ, անչափահաս հայ աղջիկ երեխաներ ամոթից ու նաև մերժվածությունից և պարսավանքից խուսափելու համար նախընտրել են մնալ իրենց առևանգիչների հետ: Հենվելով այս հանգամանքի վրա՝ թուրքական մի շարք աղբյուրներ անհեթեթ պնդում են, որ այդ հայուհիները կամովին էին ընտրել իրենց ամուսիններին, և հանձնաժողովը բռնանում էր նրանց կամքի վրա ու ստիպողաբար վերադարձնում դեպի հայկականություն:

Ինչևէ, ստեղծված հանձնախմբերի չորսամյա (1919-1922թթ.) գործունեության արդյունքում հազարավոր հայեր են ազատվում մուսուլմանական ընտանիքներից և վերադառնում իրենց ակունքներին ու կրոնին: Ամփոփելով աշխատանքների այդ փուլը՝ 1921թ. սկզբին Պոլսո Հայոց պատրիարքությունը պատրաստել է զեկույց, որի անգլերեն տարբերակն ուղարկվել է ԱՄՆ արտաքին գործերի նախարարություն: Ըստ այդ զեկույցի, 1921թ. դրությամբ մուսուլմանների ընտանիքներում դեռևս մնում էին 63.000 հայ որբեր[113]:

Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայ երեխաների և կանանց հարցով զբաղվել է նաև Ազգերի լիգան, որի որոշումով ստեղծվում է հետաքննող հանձնաժողով: Վերջինիս պատրաստած զեկույցում նշվում է հայ երեխաներին և կանանց մուսուլմանական ընտանիքներից ազատելու հետ կապված տարատեսակ խոչընդոտների առկայության մասին, տրվում է նաև դրա բացատրությունը. *«Այդ հանցանքին մեղսակից էր ողջ ժողովուրդը»*: Ավելորդ չէ նշել, որ այդ տարիներին հայ որբերի փրկության գործով զբաղվող միսիոներական և բարեգործական ընկերությունները, բազմաթիվ հայ երեխաների փրկելով մուսուլմանական ընտանիքներից, նրանց տեղափոխում էին արտասահման, հիմնականում Եվրոպա, ԱՄՆ:

Գավառներում մնացած և ուծացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի հարցը, այս կամ այն չափով,

---

[113] Özdemir H., Çiçek K., Turan Ö., Çalık R., Halaçoğlu Y., Ermeniler. Sürgün ve Göç, Ankara, 2004, s. 120, 122-123.

եղել է Պոլսո Հայոց պատրիարքության ուշադրության կենտրոնում նաև հետագայում: Մասնավորապես, կրոնափոխ հայերի խնդրի ուսումնասիրման և նրանց իրենց ակունքներին վերադարձնելու աշխատանքներ են կատարվել Գարեգին Խաչատուրյան պատրիարքի օրոք: Այդ տարիներին սկսում են Թուրքիայի արևելյան գավառներից քրդախոս հայ երեխաներ բերել Ստամբուլի հայկական կրթօջախներ: 1961թ. Պոլսո Հայոց պատրիարք ընտրված Շնորհք Գալուստյանը ոչ միայն ակտիվորեն զբաղվում է ուծացած հայության հարցերով, այլև գիտական հետազոտության է ենթարկում խնդիրը, տալիս Թուրքիայում բնակվող հայության խմբային բաժանումներ, որոնք մինչև այժմ էլ օգնում են թեմայով զբաղվողներին: Այսպես, 1980թ. Երուսաղեմում խոսելով Թուրքիայում բնակվող գավառահայության մասին՝ երջանկահիշատակ պատրիարքը նրանց բաժանում է չորս խմբի.

«ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզուել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թուով:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնւում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն:

գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատուելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժուարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր

Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»[114]:

Հատկանշական է, որ հենց Շնորհք պատրիարքի գահակալության տարիներին և մեծապես նրա ջանքերով է «Վարթո Էրմենի աշիրեթի» անվամբ հայտնի քրդախոս հայերի ցեղախումբը տեղափոխվում Ստամբուլ, սկսում շփվել հայ համայնքի հետ: Հետագայում այդ ցեղախումբը տեղափոխվում է Բելգիա, և այժմ հիմնականում բնակվում են այնտեղ: Ի դեպ, Վարթո ցեղախմբի անդամ է նաև Հրանտ Դինքի կինը՝ Ռաքել Դինքը:

Պոլսո պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը ևս բազմիցս անդրադարձել է իսլամացված հայության խնդրին: 2007թ. մայիսի 30-ին, օրինակ, մի հանդիպման ժամանակ նա հայտարարել է. *«Պետք չէ մոռնալ նաեւ, որ տեղահանութեան ընթացքին, տեղահան ըլլալէ փրկուելու համար, մեծ թիւով հայեր մահմեդականութիւնը ընդունեցին: Մենք զանոնք եւս մեզմէ կը նկատենք»*[115]:

Թուրքիայի իսլամացված հայերի խնդրին է անդրադարձել նաև ներկայումս Պոլսո պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Թուրքական հայտնի «Հյուրիյեթ» թերթին տված հարցազրույցում Արամ Սրբազանն ասել է, որ իսլամացումներ տեղի են ունեցել նաև հանրապետական շրջանում, որից զերծ չի մնացել նաև իր ընտանիքը: Մասնավորապես, նրա քույրն ու փեսան 1950-ական թվականներին ստիպված ընդունել են իսլամ և այսօր էլ ապրում են Դիարբեքիրում՝ որպես մուսուլման: Լրագրողի այն հարցին, թե քրիստոնեության և իր արմատներին վերադառնալ ձգտող էթնիկ հայերի նկատմամբ ինչպիսին է պատրիարքության վերաբերմունքը, Աթեշյանը պատասխանել է. *«Թուրքիայում ցանկացած քաղաքացի կարող*

---

[114] Ալիք, Թեհրան, 18.12.1980, նույնը տե՛ս նաև Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005), Անթիլիաս, 2009, էջ 27:

[115] Սասունեան Յ., Ի՞նչն է Մեսրոպ պատրիարքին քաղաքական յայտարարութեանց դրդապատճառը, - Ազդակ, Բեյրութ, 08,06,2007, նույնը տե՛ս նաև Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009, էջ 32:

է դիմել անձնագրային բաժին և փոխել իր կրոնը: Սակայն չի նշանակում, որ քրիստոնեություն ընդունած մարդը մեր կողմից միանգամից հայ է ընկալվում: Դրա համար բավական ժամանակ է պահանջվում: Կա վեցամսյա դասընթաց, որի ընթացքում նայում ենք, թե նա ինչքան է հավատարիմ իր արմատներին, և եթե տեսնում ենք իր արմատներին վերադառնալու հաստատակամություն, ապա պատրիարքությունը տալիս է համապատասխան փաստաթուղթ, որով տվյալ անձը կարող է գնալ անձնագրային բաժանմունք և փոխել կրոնը՝ ընդունելով քրիստոնեություն: Այնուհետև այդ մարդը կնքվում է և դառնում Հայ Առաքելական եկեղեցու անդամ»[116]:

Այնուամենայնիվ, հարկ է հաշվի առնել, որ թուրքական իշխանություններն ու հասարակությունն անհանդուրժող և խիստ բացասական վերաբերմունք ունեն քրիստոնեություն վերընդունողների նկատմամբ, և շատերը, ցանկության դեպքում էլ, վախենում են նման քայլի դիմել:

---

[116] Konuralp O., Türkiye Ermenilerinin gizli kalmış travması, - Hürriyet, 22.11.2009.

ԽԱՌՆԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խառնամուսնությունների և ներքին ամուսնությունների երևույթները հարկ է դիտարկել Թուրքիայի հայության երկու տարբեր խմբերի օրինակով՝ առաքելադավան և բռնի կրոնափոխ:

Հայության շրջանում էնդոգամիան (ներքին ամուսնությունները) լայն տարածում ունի, և փորձ է արվում դա հատկապես պահպանել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս: Պոլսի համայնքում ևս էնդոգամիային մեծ ուշադրություն է հատկացվել, սակայն տեղի ունեցող մի շարք գործընթացներ իրենց ազդեցությունն են թողել նաև այս երևույթի վրա, և այսօր համայնքում խառնամուսնությունները հետզհետե շատանում են, նույնիսկ հնչում են տեսակետներ, թե դրանք հասել են 40-50 տոկոսի: Այս ամենը մտահոգիչ է. հարցին պետք է մոտենալ նաև այն տեսանկյունից, որ խառնամուսնություններն իրենց հետ բերում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ այդ ամուսնություններից ծնված երեխաների կրոնական պատկանելության և ազգային ինքնագիտակցության հարցերը:

Փաստենք, որ և՛ «բնիկ» պոլսահայերը, և՛ հատկապես տարբեր տարիներին Ստամբուլ տեղափոխված գավառահայերը նախկինում խստորեն պահպանում էին ներքին ամուսնությունների սովորույթը, և կարելի է ասել, որ մի քանի տասնամյակ առաջ համայնքում խառնամուսնություններ գրեթե չկային կամ էլ փոքր թիվ էին կազմում: Բացի այդ, կարևոր էր այն հանգամանքը, որ պոլսահայ համայնքն ինքը հանդուրժողական չէր խառնամուսնությունների նկատմամբ, ինչը ևս կանխարգելիչ դեր էր խաղում: Հայ համայնքի անդամներն անգամ չէին էլ մասնակցում այդօրինակ հարսանյաց հանդեսներին: Հայոց պատրիարքությունը՝ ի դեմս եկեղեցու, նույնպես ընդգծված բացասական վերաբերմունք ուներ խառնամուսնություններին: Սակայն այժմ վիճակը փոխվել է, տարբեր հանգամանքներ, ինչպիսիք են՝ համայնքի կենսակերպի և մտածելակերպի փոփոխումը, ավանդական կյանքի ձևի աղճատումը, պատրիարքության դերի թուլա-

ցումը և պասիվ աշխատանքը, գլոբալիզացիան և այլն, ազդել են էթնոպահպանիչ այդ հանգամանքի՝ ներքին ամուսնությունների վրա: Սրան զուգահեռ, փոխվում է նաև համայնքի վերաբերմունքը խառնամուսնությունների խնդրին, որն առավելապես ունի հարկադրված բնույթ. քանի որ խառնամուսնությունների թիվն այսօր մեծ ծավալներ է ընդգրկում, ուստի համայնքը ստիպված է համակերպվել դրան:

Ուշագրավ է և, միևնույն ժամանակ, կարևոր, որ Թուրքիայի հայության մեկ այլ շերտում, որն առավելապես հայտնի է ծպտյալ հայեր անվամբ, պահպանվել են ներէթնիկ ինքնագիտակցության հետաքրքիր դրսևորումներ, որոնցից է նաև ներքին ամուսնությունների սովորույթը: Նախ նշենք, որ ծպտյալ հայերը Թուրքիայում իրենց գոյությունը պահպանած այն մարդկանց սերունդներն են, որոնք Հայոց ցեղասպանության ժամանակ արտաքուստ ընդունել են իսլամ, սակայն գաղտնի շարունակել են հայկական-քրիստոնեական մի շարք սովորույթներ: Այսօր էլ ծպտյալ հայերն արտաքուստ մուսուլման ներկայանալով՝ ոչ միայն գաղտնի շարունակում են ազգային-կրոնական որոշ սովորույթներ, այլև ձգտում են ամուսնանալ իրենց նման ծպտյալ հայերի հետ: Ընդ որում՝ ներքին ամուսնությունների ժամանակ երկրորդ պլան են մղվում տարիքային, դասակարգային, սոցիալական և այլ խոչընդոտներ: Այսինքն՝ ծպտյալ հայերը, կարելի է ասել, էթնիկ ինքնապահպանման բնազդով ձգտում են պարտադիր ամուսնանալ հայի հետ: Ներքին ամուսնությունների ինստիտուտը ենթադրում է նաև ծպտյալ հայերի շրջանում որոշակի ցանցի առկայություն, որը թույլ է տալիս նրանց, թեկուզ հեռակա, ճանաչել միմյանց: Երբեմն այս վարկածի օգտին է խոսում նաև ներքին ամուսնությունների աշխարհագրությունը, երբ բավական հեռու գյուղերի բնակիչներ ամուսնանում են իրար հետ: Օրինակ՝ Գերմանիա տեղափոխված մշեցի ծպտյալ հայ Հաջի Մեհմեթ Դեմիրչիգիլը նշում է. *«Արևմտեան Հայաստանի բոլոր դաւանափոխ հայերը լաւապէս ճանաչում են մէկը միւսին»*[117]:

---

[117] Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005թթ.), Անթիլիաս, 2009, էջ 153, մեջբերված է www.hetq.am կայքէջից:

Ծպտյալ հայերի մեջ տարածված ներքին ամուսնությունների սովորույթի և փոխադարձ ճանաչման հնարավոր ցանցի գոյության որոշ փաստերի ենք հանդիպում նաև հայկական թեմատիկայով գրված ժամանակակից թուրքական փաստագեղարվեստական գրականության մեջ: Օրինակ, գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստագեղարվեստական գրքում քյահթացի ծպտյալ հայի զավակ, Գերմանիայում բնակվող Հաջը Իբրահիմը, խոսելով ներքին ամուսնությունների մասին, ասում է. *«Մեր մօտ ամուսնութիւնը միշտ «մերիններու»* (ծպտյալ հայեր- Ռ.Մ.) *միջեւ տեղի կ'ունենայ: Դուրս ոչ աղջիկ կը տրուի, ոչ ալ դուրսէն աղջիկ կ'առնուի»*[118]: Իսկ երբ նրանց դրացի քուրդը խնդրել է Հաջը Իբրահիմի քրոջ ձեռքը, նրա հայրը մերժել է, սակայն վախենալով, որ կարող են աղջկան փախցնել, ամուսնացրել է «մերոնցից» ճաղատ, տգեղ, աղքատ և որբ մի հովվի հետ: Քեմալ Յալչընի նույն գրքում ծպտյալ հայուհի Սուլթան Բաքըրջըգիլը պատմում է, որ իր պապը չորս տղաներին էլ ամուսնացրել է ծպտյալ հայերի հետ, իսկ 12-ամյա աղջկան, վախենալով, որ քրդերը կփախցնեն, ամուսնացրել է 30-ամյա ծպտյալ հայի հետ, դրանով իսկ, ըստ իրեն, փրկել աղջկան[119]: Պատահական չէ, որ ծպտյալ հայերի շրջանում տարածված ներքին ամուսնությունների սովորույթը շարժել է նաև թուրք գիտնականների հետաքրքրությունը, և նրանք այդ հարցն ուսումնասիրել են՝ ձեռքի տակ ունենալով բազմաթիվ հնարավորություններ և փաստեր:

Հայ ճարտարապետության պատմության մասնագետ Սամվել Կարապետյանը, անդրադառնալով ներքին ամուսնությունների խնդրին, նշում է. *«Արևմտյան Հայաստանում մահմեդական հայերը, եթե իրենք գտնում են, որ հայ են, միշտ խնդիրներ ունեն տեղի քրդերի հետ՝ նույնիսկ արյունահեղության մակարդակի: Քրդերը նեղվում են, որ մահմեդական հայերն իրենց աղջիկ չեն տալիս, աղջիկ վերցնում են, բայց չեն տալիս»*[120]:

---

[118] Եալչընն Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, Երևան, 2003, էջ 350:
[119] Նույն տեղում, էջ 359:
[120] Հարցազրույց Սամվել Կարապետյանի հետ
http://www.javakhk.net/forum/lofiversion/index.php/t748.html

Ստամբուլի Գեդիկփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն ևս տվյալներ է փոխանցում իսլամացված, ծպտյալ հայերի շրջանում առկա ներքին ամուսնությունների մասին. *«Կը յիշեմ, ասկէ քանի մը տարի առաջ, Խարբերդի շրջանէն այցելու մը ունեցանք, որ եկած էր մեզ մօտ վկայելու, թէ Խարբերդի շրջանին մէջ կան երկու գիւղեր, որոնք ծագումով ամբողջութեամբ հայ են, եւ յայտնեց, թէ գիւղին զաւակները իրարու հետ ամուսնութիւն կը կնքեն պարզապէս իրենց արիւնը հայ պահելու համար»*[121]:

Զարմանալի և, միևնույն ժամանակ, ուշագրավ է, որ ներքին ամուսնությունների սովորույթը պահպանվում է ոչ միայն ծպտյալ հայերի շրջանում, այլև այդ մասին վկայող փաստերի երբեմն հանդիպում ենք նաև իսլամացված, ուծացած հայերի և նրանց հետնորդների մեջ: Օրինակ, թուրք հայտնի լրագրողներից Ամբերին Զամանը խոսելով Թոքաթի իսլամացված հայության և նրա խնդիրների մասին՝ առանձնացնում է նաև ներքին ամուսնությունների հարցը: Ըստ հոդվածագրի, Թոքաթի իսլամացված հայերի ուծացած հետնորդները, ձգտելով պահպանել ներքին ամուսնությունները, հաճախ բախվում են լուրջ խնդիրների, քանի որ հայության այդ սակավաթիվ հետնորդների մեծ մասն ազգականներ են, իսկ նրանց շրջանում խստորեն պահպանված «յոթ պորտի» սովորույթը թույլ չի տալիս ազգականների միջև ամուսնությունները[122]: Ավելորդ չէ նշել, որ Թոքաթի իսլամացված հայերը համարվում են իրապես թուրքացած, ուծացած, արմատներից հեռացած, սակայն փաստորեն նրանց մեջ նույնպես նկատվում են ներէթնիկ ինքնագիտակցության տարրեր:

Ստամբուլի «Ակօս» թերթի լրագրող Բագրատ Էսդուգյանը նույնպես նշում է, որ իրենց հայկական ծագումը մերժողներն անգամ պահպանում են ներքին ամուսնություններ. *«Հանկարծ չլինի, որ ուրիշ գերդաստանից աղջիկ առնեն, տղերքը պետք է նույն գերդաստանի աղջկա հետ ամուսնանան: Նրանք մտածում են, որ իրենք տարբեր են, ուրիշներին չպետք է խառնվեն: Անու-*

---

[121] Հարցազրույց վերապատուելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ http://www.dnforum.am/showpost.php?p=14426&postcount=20

[122] Zaman A., Tokat'ta utanç manzarası, Taraf, 11,7,2008.

նը իստակ չէ, հա՞յ ենք, քրիստոնյա՞ ենք, թե՞ այն ենք, թե՞ այս ենք, բայց նրանք իրենց տարբեր են համարում»[123]:

Վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանին տված հարցազրույցում, անդրադառնալով իսլամացված հայերի միջև ներքին ամուսնություններին, ասում է. *«(Հայերի- Ռ.Մ.) մէկ մասն ալ Անատոլիա կ'ապրին, իսլամացած են, կ'ըսեն մեր գիտը հայ է, միւս գիտն ալ հայ է, մենք իրարու աղջիկ կուտանք, որ դուրսէն մարդ չըմտնէ մեր մէջ»*[124]:

Ծպտյալ հայերի մեջ շարունակվող ներքին ամուսնությունների հետ կապված մի նրբերանգ ենք վերջերս գրանցել անձնական շփումների արդյունքում: Այսպես, Խարբերդի գյուղերից մեկից Ստամբուլ տեղափոխված մի կրոնափոխ հայ կնոջ հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ցանկանում է ամուսնացնել երկու որդիներին և հարսնացու է փնտրում: Մեր հարցին, թե արդյոք ցանկանում է հայ հարսնացուներ գտնել, նա պատասխանեց. *«Ո՛չ, հայերը մեզ հետ չեն ամուսնանա»:* Այդ դեպքում, հարցրի, երևի մուսուլման թուրք կամ քուրդ հարսնացու է փնտրում, որին հետևեց նրա պատասխանը. *«Ո՛չ, ցանկանում եմ մեզ նման ընտանիքներից հարսնացուներ գտնել»:* Փաստորեն, կարող ենք ասել, որ կրոնափոխ հայության շրջանում ներքին ամուսնությունների դրդող ազդակներից մեկը հնարավոր է համարել հայության մյուս խմբերի հետ ինտեգրված չլինելու փաստը: Անգամ Ստամբուլում հաստատված կրոնափոխ կամ կրոնադարձ (քրիստոնեություն վերընդունած) հայերը, չինտեգրվելով պոլսահայությանը, ստիպված կամ ենթագիտակցորեն ձևավորել են (կամ գտնվում են դրա ճանապարհին) մի առանձին ազգագրական խումբ, որն իրեն տարբեր է համարում թե՛ հայերից և թե՛ թուրքերից: Միգուցե հենց ինտեգրված չլինելու հետևանքով է նաև, որ այսօր Թուրքիայի մուսուլման համշենահայերի մի մասն իրեն լրջորեն համարում է «հեմշին» ազգի ներկայացուցիչ, իսկ

---

[123] Հարցազրույց Բագրատ Էսդուգյանի հետ, http://www.hetq.am/arm/society/8217/

[124] «Մայրիկ, մենք հա՞յ ենք», հարցազրույց վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ (զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը), «Ձայն համշենական», Երևան, 2007, թիվ 34-35:

հայերենի այն բարբառը, որով խոսում է՝ «համշեներեն»[125]: Փաստ է նաև այն, որ մուսուլման համշենահայերի մեջ առկա նման դրսևորումներն այս կամ այն կերպ նկատվում են կրոնափոխված հայերի տարբեր խմբերի և սերունդների շրջանում նա:

Ամփոփելով՝ նշենք, որ այսօրվա հայկական Սփյուռքի կարևոր հիմնախնդիրներից է խառնամուսնության երևույթը, որը, ցավոք, աճելու բացահայտ միտում ունի: Էնդոգամիայի (ներքին ամուսնությունների) պահպանմանն ու շարունակմանը խոչընդոտում են նաև ներկայումս տեղի ունեցող համաշխարհային տարատեսակ զարգացումները: Հայտնի գրող Լևոն Շանթը, անդրադառնալով խառնամուսնություններին և դրանց բացասական ազդեցությանը, հիրավի դիպուկ պատկերել է խառնամուսնություններից ծնվածների հոգեվիճակը. *«Եւ ամենէն դժբախտը խառնազգի ամուսնութիւններուն մէջ՝ տիրող ու հպատակ ազգերու միջեւ կայացածն է. որովհետեւ տիրողի արհամարհանքը, մեծամտութիւնը ու վերէն նայիլը, ինչպէս եւ տիրուածի վիրաւոր, բողոքող ու խայթող հոգին յաճախ կը բախին իրարու ընտանեկան սեղանին վրայ... Եվ այս տեսակի յարկի մը տակ մեծցող սերունդը երկկենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրայ միաժամանակ ապրող, բայց ոչ ջուրին մէջ լողալ գիտէ, ոչ ցամաքի վրայ մարդավարի քալել. եւ յաճախ կը վերջանայ անով, որ ջուրն ալ կ'ատե, ցամաքն ալ, թէեւ իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կը մնայ միշտ վառ՝ կամ ջուրինը ըլլալու, կամ ցամաքինը»*[126]:

---

[125] Ի դեպ, հարկ է նշել, որ հայության տարբեր խմբերի կողմից իսլամացված համշենահայերին վանելու փաստեր արձանագրվել են ոչ միայն Թուրքիայում, այլև, օրինակ՝ 1944-ին Աջարիայից Միջին Ասիա աքսորված կրոնափոխ համշենահայերի պարագայում նա: Ինչպես փոխանցում է համշենահայերի խնդիրներով տասնամյակներ զբաղվող բանահավաք Սերգեյ Վարդանյանը, ԽՍՀՄ տարիներին Միջին Ասիայի իսլամացված համշենահայերի ձգտումները՝ վերինտեգրվելու հայությանը, հանդիպում էին անտարբերության և սառնության վերջիններիս կողմից, և 1980-ականներին այդ վայրերը այցելած Վարդանյանին կրոնափոխ համշենահայերն ասել են, թե ինքն առաջին հայն է, որն իրենց համարում է հայ:

[126] Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, Երևան, 2008, էջ 43:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԱԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայտնի է, որ հայությանը ներսից պառակտող ամենավտանգավոր երևույթներից է փոխադարձ անհանդուրժողականությունը, միմյանց հանդեպ խորթության, կասկածամտության արգահատելի «սովորույթը», որը ժամանակ առ ժամանակ էլ ավելի ցայտուն է զգացվում: Այս երևույթի անքակտելի մասն են կազմում հայության բաժանումներն ըստ ծագման, բնակության վայրի, դավանանքային, կրոնական, կուսակցական պատկանելության, ֆինանսական կարողությունների: Աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածներում այս ամենն ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ յուրահատկություններ՝ ըստ շրջապատող միջավայրի և հանգամանքների: Հարկ է նշել, որ այս երևույթն իր տարբեր դրսևորումներով տարածված է ոչ միայն հայության, այլև շատ այլ ազգերի մեջ:

Վերը թվարկվածից անմասն չէ նաև Թուրքիայի հայությունը, ինչը երբեմն ձեռք է բերում սրված բնույթ: Ստեղծված իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար հարկ է համառոտ անդրադառնալ Ստամբուլի հայ համայնքի ոչ հեռավոր անցյալի որոշ մանրամասներին:

Ինչպես նշվեց, տարբեր տարիներին Ստամբուլի հայերի արտագաղթի հետևանքով առաջացած բացը պոլսահայ համայնքը լրացրել է գավառներից տեղափոխված հայության բեկորների շնորհիվ, ընդ որում՝ ներգաղթած հայերը միշտ չէ, որ ունեին «իսկական հային» բնորոշ բոլոր հատկանիշները: Սակայն, տարբեր շերտերից բաղկացած պոլսահայության մեջ տարածված են եղել և այժմ էլ պահպանվում են ըստ ծագման վայրի հայերի բաժանումները կամ «իսկական պոլսահայ»-գավառահայ բաժանումները: Ընդ որում՝ իսկական պոլսահայ նշանակում է ավելի քաղաքակիրթ, ավելի մակարդակով, իսկ գավառացի՝ ցածր մակարդակի, հետամնաց, գավառական տարբեր բարքերի կրող և այլն: Սակայն եթե իրատես լինենք, ապա ներկայիս պոլսահայ համայնքն իրականում կազմված է տարբեր տարիներին

Ստամբուլ գաղթած գավառացի հայերի սերունդներից և, ըստ այդմ, փոխադարձ ընկալման խնդիրը նկարագրելիս ավելի ճիշտ կլիներ օգտագործել ոչ թե պոլսահայ-գավառահայ, այլ՝ ավելի վաղ Ստամբուլ տեղափոխված գավառահայ և ավելի ուշ տեղափոխված գավառահայ «բաժանարար» բառեզրերը: Իսկ պոլսահայ տերմինն ավելի նպատակահարմար է օգտագործել կամ պայմանական, կամ դրա տակ հասկանալ ավելի շատ ստամբուլաբնակ հասկացությունը: Երևույթը, սակայն, ամենևին չտարածելով ողջ պոլսահայության վրա՝ հարկ ենք համարում նշել, որ մշակութային և այլ կարգի տարբերությունների վրա հիմնված փոխադարձ խորթությունը ցայտուն երևում է նաև ստամբուլաբնակ և հայաստանցի հայերի (որոնք Թուրքիա են գնում աշխատանք գտնելու համար) միջև:

Մեր անձնական դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ ներկայումս այս անջրպետի ամենակարևոր պատճառներից է դասակարգային տարբերությունը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ Ստամբուլում «տեղային ազգայնականությանը» զուգահեռ տարածված և, միգուցե, նաև առաջնային է «դասակարգային ազգայնականությունը»: Հենց դասակարգային տարբերությունն է հաճախ խոչընդոտ հանդիսանում, որպեսզի ստամբուլաբնակ հայության տարբեր խմբեր կարողանան ազատ շփվել միմյանց հետ, քանի որ նրանց կենցաղը, ապրելակերպը, մտածելակերպը և անգամ խոսվածքը տարբեր են: Այս ամենը ցույց է տալիս, որ նրանց մեջ առկա տարատեսակ անջրպետները տասնամյակներն անգամ դեռ չեն կարողացել հաղթահարել:

Թուրքիայի հայության միջև հաստատված խնդրահարույց հարաբերությունները ժամանակ առ ժամանակ սրվում և ձեռք են բերում հրապարակային բնույթ: Ստորև ներկայացնում ենք նմանատիպ մի օրինակ, որը լավագույնս ի ցույց է հանում խնդրի տարբեր կողմերը: Այսպես, 2009թ. մարտի 22-ին Ստամբուլի Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի ղեկավար կազմի ընտրություններն էին: Հարկ է նշել նաև, որ հիշյալ հիմնադրամը տիրապետում է բավական լայն ֆինանսական միջոցների, և բնական է, որ սպասվելու էր լարված պայքար: Թեկնա-

ծուներից մեկը ներկայացնում էր «պոլսահայերին», մյուսը՝ գավառահայերին (սասունցիներին): Նշենք, որ նախընտրական շրջանում արդեն նկատվող լարվածությունն ուղեկցվում էր փոխադարձ մեղադրանքներով, սակայն «պոլսահայ» կողմի կիրառած ամենատարածված հակաքարոզչությունն այն էր, որ մրցակիցները հայախոս չեն, անգամ հայ էլ չեն, այլ քուրդ, և պետք չէ եկեղեցին հանձնել քրդերի կառավարմանը: Նմանատիպ մտքերի կիրառումը քարոզչական տեխնոլոգիաներում ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, կա մի զանգված, որի վրա էլ հենց պետք է ազդեցություն թողնեին վերոնշյալ մտքերը: Երկու կողմերի բանավեճը լայնորեն արտացոլվեց համայնքային կյանքում և առաջ բերեց համակիրների բանակներ, որոնց շրջանակներում էլ շարունակվեց պայքարը: Ավելին՝ Սուրբ Երրորդություն հիմնադրամի ընտրությունների շուրջ բարձրացած աղմուկը դուրս եկավ համայնքային շրջանակներից, դրան անդրադարձան նաև թուրքական թերթերը: Օրինակ՝ «Հյուրիյեթն» իր «Թուրքերով, քրդերով հայկական ընտրություններ» վերնագրով հոդվածում մանրամասնորեն նկարագրում էր իրավիճակը[127]:

Ինչպես իրավացիորեն նշում է «Ակօս»-ի հեղինակներից Ռոբեր Քոփթաշը. *«Ընտրությունները մեզ դեմ հանդիման հանեցին հայ համայնքի ներսում եռացող խտրականության հետ»*[128]: Կրկին ըստ Քոփթաշի, գավառներից համեմատաբար ավելի ուշ Ստամբուլ տեղափոխվածների՝ ավելի հին ստամբուլաբնակ հայերի կողմից չընդունվելու համար, բացի դասակարգայինից, նաև այլ կենցաղային հանգամանքներ կան: Այս ամենը հայության մի շերտի համար շատ կարևոր է, քանի որ ըստ տարածված տեսակետի, հայերը միայն քաղաքակիրթ, բարձրաշխարհիկ պետք է լինեն, և գավառահայերը լուրջ վնաս են հասցնում արդեն ձևավորված հայի կերպարին[129]: Այստեղից է ծագում նաև նրանց քուրդ անվանելով «իսկական հայի» կերպարը մաքուր պահելու ձգտումը:

---

[127] Türklü, Kürtlü Ermeni seçimi, - Hürriyet, 04. 05.2009.
[128] Koptaş R., Mağdur Ermeni, gaddar Ermeni, - Agos, 03.04.2009.
[129] Koptaş R., Güç siyaseti, - Agos, 03.04.2009.

Կարելի է ասել, որ այդ ընտրությունների հետևանքով համայնքում խորացան երկփեղկված տրամադրությունները: Օրինակ՝ «Ակօս» շաբաթաթերթը, որն ակտիվորեն լուսաբանում էր հիմնադրամի շուրջ ընթացող զարգացումները և քննադատում գավառացի հայ ու պոլսահայ բաժանումները, արժանացավ համայնքի տարբեր անդամների քննադատությանը, թե իբր նրանք խիստ չափազանցված և միտումնավոր են ներկայացնում հայության միջև եղած անջրպետներն ու հրահրում արհեստական լարվածություն[130]: Ուշագրավ է հատկապես այն, որ երկու կողմերն էլ դեմ էին արտահայտվում պոլսահայ և գավառացի հայ խտրական սահմանումներին և դա համարում համայնքի շահերին դեմ: Պոլսահայ Արեթ Յամանն իր հոդվածում փոքր-ինչ հռետորական հարց է առաջ քաշում, որը ևս մտորելու տեղիք է տալիս: Այսպես, նա իրավացիորեն հարցնում է, թե ինչու մինչև այժմ համայնքում նման վեճեր և խտրականություն չեն եղել, իսկ հիմա դա որոշ թերթեր (նկատի ունի «Ակօսը») տիրաժավորում են[131]: Իհարկե, մենք այստեղ համաձայն չենք հեղինակի հետ, քանի որ այդ խտրական տրամադրությունները հաճախ են եղել Պոլսի հայ համայնքի մի հատվածի մեջ, ուղղակի նման հնչեղություն դեռ չէին ստացել: Այդպիսի խտրական վերաբերմունքի ցայտուն օրինակներ կարող ենք հանդիպել տարբեր տարիներին գավառներից Ստամբուլի հայկական դպրոցներ սովորելու եկած հայերի մեջ: Հարկ է նկատել նաև, որ այս երևույթը փոխադարձ է, և հաճախ գավառահայերի կողմից էլ խտրական վերաբերմունք է ցուցաբերվում ավելի հին ստամբուլաբնակների նկատմամբ:

Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, որը ծագումով Մալաթիայից է, մեզ պատմել է իր ընտանիքի օրինակի մասին, որը խորությամբ պատկերում է հայության մեջ տարածված խտրականության

---

[130]Çiçekeker A., Sunî gündem: Beyaz Ermeni-taşralı Ermeni ayrımı, - www.hyetert.com/yazi3.asp?s=3&Id=434&DilId=1; Yaman A., Beyaz Ermeni tartışmaları, -www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&DilId=1.

[131] Yaman A., Beyaz Ermeni tartışmaları, www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&DilId=1.

տարբեր դրսևորումներ: Այսպես, ըստ նրա. *«Մեզ Մալաթիայում շրջապատի մուսուլմանները ասում էին «գյավուր» հայեր, երբ տեղափոխվեցինք Ստամբուլ, հայկական դպրոցում, ուր հաճախում էինք, մեր համադասարանցիները մեզ ասում էին «քրդեր»: Տարիներ հետո տեղափոխվեցինք Հայաստան, ուր մեզ ասում էին «ախպարներ», իսկ հետագայում, երբ ընտանիքիս մի մասը հաստատվեց ԱՄՆ-ում, նրանց սկսեցին անվանել «հայաստանցիներ»»*:

Անկասկած է, որ հայության տարբեր խմբերի միջև փոխադարձ ընկալումը և լավ հարաբերությունները կարող են օգուտ բերել հենց հայությանը, իսկ նոր բաժանարար գծեր և հանգամանքներ գտնելն ու դրանք քարոզելը խաթարում են մեր առանց այն էլ երերուն միասնականությունը:

ՍՏԱՄԲՈՒԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ[132]

Երիտթուրքերի՝ հայերի և հույների նկատմամբ վարած քաղաքականության նպատակներից մեկը նրանցից տնտեսական լծակները խլելն էր և բռնագրավված տնտեսական կարողության հիման վրա ազգային՝ թուրքական բուրժուազիա ձևավորելը: Երիտթուրքական կուսակցությունում այդ քաղաքականության իրականացումը հանձնարարված էր կուսակցության ամենաազդեցիկ անդամներից մեկին, հետագայում՝ 1919-1923թթ. Թուրքիայում ծավալված ազգայնական (քեմալական) շարժման առաջնորդներից Քարա Քեմալին[133]:

Ներկայումս Թուրքիայում բազմաթիվ հայտնի գործարար տների կարողության հիմքը Հայոց ցեղասպանության տարիներին հայերից բռնագրավված հարստությունն է: Նման գործարարների թվին են պատկանում Թուրքիայում խոշոր ընկերությունների հիմնադիրներ, ինչպիսիք են Սաքըփ Սաբանջը, Էյուփ Սաբրի Թունջերը և ուրիշներ: Օրինակ՝ Սաբանջին է անցել Աղանայի հայերի, մասնավորապես Մանուկյան ընտանիքի ունեցվածքը: Հայերի հարստության բռնազավթման և հավանական փոխհատուցման խնդիրները որոշակի դեր ունեն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության մեջ: Մի շարք թուրք գիտնականներ նույնիսկ պնդում են, որ միայն տարիներ անց, երբ հայերից խլած ունեցվածքը վերջնականապես կփոշիանա, Թուրքիան կարող է ճանաչել 1915թ. ցեղասպանությունը:

1915թ. Հայոց ցեղասպանության հետևանքով ոչնչացվեց և թուրքացվեց Փոքր Ասիայում ապրող հայերի կապիտալը, սակայն ստամբուլաբնակ հայերին հաջողվեց մասամբ պահպանել իրենց ունեցվածքը: Ցեղասպանությունից շատ չանցած՝ նրանք դարձան արդեն հանրապետական Թուրքիայի իշխանությունների դաժան քաղաքականության թիրախ[134] և, ինչպես

---

[132] Այս գլխի հեղինակն է պ.գ.դ. Արսեն Ավագյանը: Այն, փոքր-ինչ ավելի ընդարձակ ձևով, տեղ է գտել Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Երևան, 2009, գրքի 87-95 էջերում:

[133] Tunaya T., Türkiye'de siyasal partiler, cilt III, Ittihat ve Terakki, bir çağın, bir kuşağın, bir partinin tarihi, İstanbul, 2000, s. 408-411.

[134] Okutan Ç., Tek parti döneminde azınlık politikaları, İstanbul, 2004, s. 109-154.

նշվեց առաջին գլխում, 1942թ. «Ունեցվածքի հարկ»-ի հետևանքով նույնպես ունեզրկվեցին ու սնանկացան:

Ավելի ուշ՝ 1950թ. Դեմոկրատական կուսակցության իշխանության գալով և տնտեսական քաղաքականության որոշ ազատականացմամբ փոքր-ինչ տանելի պայմաններ ստեղծվեցին ստամբուլահայ համայնքի տնտեսական զարգացման համար: Թուրքիայի վարած քաղաքականության պայմաններում, երբ համայնքային կրթօջախներին և հաստատություններին որևէ պետական աջակցություն չի ցուցաբերվում, համայնքի տնտեսական կայունությունը, գործարարների և բարձր եկամուտ ունեցողների առկայությունը, որոնք կարող են նվիրատվություններ անել, ունի նաև համայնքապահպան նշանակություն: Համայնքի դպրոցների բյուջեների պակասի լրացումը, եկեղեցիներին կամ համայնքին պատկանող սրահների վերանորոգումը, երկու մարզական ակումբների (Շիշլի և Թաքսիմ) գործունեությունն իրականացվում են նվիրատվությունների շնորհիվ:

Ինչպես վերը նշվեց, 1960-90-ական թթ. բազմաթիվ ունևոր պոլսահայ ընտանիքներ արտագաղթեցին Եվրոպա և ԱՄՆ, իսկ գավառներից Ստամբուլ տեղափոխված հայերը նյութական կարողություններից զուրկ էին, սակայն նրանցից մի քանի ընտանիքներ երկարամյա ջանքերի շնորհիվ կարողացան որոշակի կապիտալի տեր դառնալ: Ուշագրավ է, որ ֆինանսական ասպարեզում հաջողության հասած գավառահայերի մի մասը, որն օբյեկտիվ պատճառներով այդքան էլ ծանոթ չէ հայկական մշակույթին, երբեմն հայախոս էլ չէ, հաճախ առատ նվիրատվություններ է անում համայնքային խնդիրների լուծման համար:

Զգալի հարստության տերերի թվին է պատկանում Թուրքիայում մեծ համբավ ձեռք բերած Մաթիլդ Մանուկյանը (1914-2001թթ.), որը մի քանի տարի անընդմեջ Ստամբուլի ամենաբարձր անհատ հարկ վճարողն էր: Խոշոր հարկատու լինելու շնորհիվ նա մի քանի անգամ շահել է համապատասխան մրցանակ, որը պետք է հանձնեին երկրի բարձրագույն ղեկավարները, որոնք էլ (Թուրգութ Օզալ, Սուլեյման Դեմիրել) հրաժարվել են դա անել: Խնդիրն այն է, որ չնայած Մաթիլդ Մանուկյանն ունեցել է մի շարք բիզնեսներ՝ անշարժ գույքի առևտուր, հյուրանոց-

ներ և այլն, սակայն հասարակության մեջ նա ճանաչում է գտել նրանով, որ տնօրինել է հասարակաց տների:

Ներկայումս Ստամբուլի հայ համայնքի խոշոր գործարարների կամ մեծ բիզնես ունեցողների թիվը չի անցնում 30 հոգուց: Պոլսահայ համայնքի մի շարք խոշոր գործարարներ ընկերություններ ունեն նաև արտերկրում. Եվրոպայում և Ամերիկայում կան հայտնի հայկական գործարար տներ, որոնց հիմնադիրները ծագումով Պոլսից կամ Փոքր Ասիայի երբեմնի հայաշատ բնակատեղերից են, նրանցից է, օրինակ, Գ.Գյուլբենկյանը[135]:

Սակայն համայնքում գերակշռում են մանր և միջին գործարարությամբ զբաղվողները, որոնցից են Ստամբուլի Փակ շուկայի ոսկերչական մասում ավանդաբար գտնվող հայ ոսկերիչները: Ավելորդ չէ նշել, որ ընդհանրապես, Թուրքիայում «հայկական ոսկերչությունն ու արծաթագործությունը» մեծ համբավ ունեն, սակայն վերջին տարիներին հայերն այդ ասպարեզում իրենց դիրքերը զիջել են ասորիներին և քրդերին, որոնք մեծ մասամբ արհեստը սովորել են հայ վարպետներից:

Այսպիսով, Թուրքիայի ընդհանուր տնտեսական կյանքում, բացի մի քանի խոշոր գործարարներից, պոլսահայությունը զգալի ներգրավվածություն չունի: Ի տարբերություն հրեա համայնքի, որին հաջողվել է պահպանել դիրքերը Թուրքիայի տնտեսական կյանքում, հայ և հույն գործարարները թուրքական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում կորցրել են երբեմնի դիրքերը:

Ներկայումս ստամբուլահայ համայնքի ներդրումները Հայաստանում մեծ թիվ չեն կազմում, սակայն երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման դեպքում դրանք կավելանան: Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առկա խնդիրները ստիպում են թուրքահայ խոշոր գործարարներին ձեռնպահ մնալ Հայաստանում մեծ ներդրումներ կատարելուց կամ աշխատատեղեր հիմնելուց:

---

[135] Գալուստ Գյուլբենկյանը, ինչպես նաև հայտնի հույն գործարար Օնասիսը ծնվել են Կայսերի (Կեսարիա) քաղաքում:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ, ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՍՊՈՐՏՆ ԱՅՍՕՐ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության ժամանակ առաջին թիրախը եղել են Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայ մտավորականները, որոնց գերակշիռ մասը զոհվել է: Ցեղասպանությունը ծանր հարված է հասցրել նաև պոլսահայ մշակույթին, սակայն Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին արդեն Պոլսո հայ համայնքում սկսել են որոշ քայլեր կատարվել մշակույթի վերազարթոնքի ուղղությամբ:

Արդեն 1920-ականների կեսերից սկսել են հրատարակվել մի քանի պարբերականներ, որոնցից են կրոնական և գրական ուղղվածությամբ «Հայ խոսք» հանդեսը (1924-1930թթ.) և «Նոր լուր» թերթը, որն ունեցել է քաղաքական և առևտրական բնույթ: Բացի սրանցից, սկսել են տպագրվել մի շարք այլ թերթեր և հանդեսներ, ինչպես, օրինակ՝ Բագարատ Թևյանի «Երջանիկին տարեցույցը» (1928թ.), Ավետիս Ալեքսանյանի «Նոր օրը», գրող Ռուբեն Մաշոյանի «Դեպի լույսը» (1950թ.), «Ճակատամարտը» (1927-1937թթ.), «Պատկերը» (1931-1945թթ.), «Արևելքը» (1932-1938թթ.), «Աստղաբերդը» (1951-1953թթ.), «Ճառագայթը» (1947-1952թթ.)[136]: Ստամբուլահայ մամուլի, ինչպես նաև Թուրքիայի թատերական արվեստի պատմության մեջ կարևոր դեր է ունեցել թատերագետ Հակոբ Այվազի «Կուլիս» թատերական ամսագիրը, որը հրատարակվել է 50 տարի շարունակ՝ 1946-1996թթ: Բացի վերոնշյալ պարբերականներից, Ստամբուլում գործող տարբեր հայկական հաստատություններ ևս ունեցել են և ունեն իրենց պարբերականները, որոնցից են, օրինակ, Սուրբ Փրկիչ հիվանդանոցի համանուն հանդեսը, Պոլսո Հայոց պատրիարքության «Շողակաթ» հանդեսը, 1996թ. սկսել է հրատարակվել պատրիարքարանի մյուս պաշտոնական հանդեսը՝

---

[136] Pamukciyan K., İstanbul'da yayınlanan bazı Ermeni gazete ve dergileri hakkında ansiklopedik bilgiler, İstanbul yazıları: Ermeni kaynaklarından tarihe katkılar- I, İstanbul, 2002, s.189-191.

«Լրաբերը»: Կեդրոնական վարժարանի շրջանավարտների միությունը 1948 թվականից սկսել է հրատարակել «Հանդես Մշակույթի» ամսագիրը, որը որոշ ժամանակ անց փակվել է և վերաբացվել 1993-ին «Հոբինա» անունով, որն այսօր արդեն չի տպագրվում[137]: 1991 թվականից սկսած հրատարակվում է համայնքի միակ մանկական հանդեսը՝ «Ժպիտը»: Հարկ է նշել, որ վերոհիշյալ ամսագրերը համայնքային կյանքում մշակույթի և գրականության զարգացման գործում բավական նշանակալից դեր են ունեցել:

Այսօր Ստամբուլի հայ համայնքի հիմնական թերթերը երեքն են՝ «Ժամանակ», «Նոր Մարմարա» օրաթերթերը և «Ակօս» շաբաթաթերթը, որը երկլեզու է՝ հայերեն-թուրքերեն:

«Ժամանակ»-ը ստամբուլահայ մամուլի ամենահին օրգաններից է, հիմնադրվել է 1908թ. և առայսօր առանց ընդհատումների տպագրվում է: Հիմնադրման առաջին տարիներին թերթին թղթակցել են ժամանակի հայ անվանի մտավորականները՝ Երվանդ Օտյանը, Զապել Եսայանը, Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը: Թերթի տպաքանակը եղել է 15 հազար[138]: 1920թ. այն միավորվել է «Ժողովրդի ձայն» թերթի հետ և որոշ ժամանակ (մինչև 1924-ը) կոչվել է «Ժողովրդի ձայն-Ժամանակ», իսկ 1935թ. մի քանի ամիս կոչվել է «Ժամանակ-Թուրքիա»[139]: Այսօր թերթի տպաքանակը 1500 օրինակ է և տարածվում է Ստամբուլի հայաբնակ թաղամասերում և Սփյուռքում, խմբագիրն է Արա Քոչունյանը:

«Նոր Մարմարա» թերթը հիմնադրվել է 1940թ. Սուրեն Շամլըյանի կողմից «Մարմարա» անունով, 1967 թվականից խմբագիրն է պոլսահայ մտավորական, գրող Ռոբեր Հատտեջյանը (Հադդելեր): 1967-ից թերթը վերանվանվել է «Նոր Մարմարա»: Թերթը հայերեն է, սակայն 2001 թվականից շաբաթական մեկ անգամ նրան կցվում է նաև թուրքերեն հավելված, տպաքանակն այսօր

---

[137] Özdoğan G., Üstel F., ...նշված աշխ., էջ 214:
[138] Նույն տեղում, էջ 215:
[139] Pamukciyan K., նշված աշխ., էջ 192:

1500 օրինակ է, տարածվում է Ստամբուլի հայաբնակ թաղամասերում և Սփյուռքում:

«Ակօս» երկլեզվյա շաբաթաթերթը հիմնադրվել է 1996թ., մինչև 2007թ. գլխավոր խմբագիրն է եղել Հրանտ Դինքը: «Ակօս»-ը որոշակի տարբերություններ ունի համայնքի ավանդական մյուս թերթերից: 24 էջանոց թերթի միայն 4 էջն է հայերեն: Երկլեզու թերթի հիմնումը ևս մեկ ապացույցն է համայնքում հայախոսության մակարդակի անկման, բացի այդ, Դինքի նպատակն է եղել նաև համայնքային խնդիրները թուրք ընթերցողին հասու դարձնելը: Թերթին թղթակցում են այսօրվա Թուրքիայի հասարակական կյանքում բավական հայտնի մտավորականներ, վերլուծաբաններ, այն ունի նաև ինտերնետային կայքէջ, այսօր տպաքանակը հասնում է մոտավորապես 5000-ի, որի մի մասը տարածվում է նաև ԱՄՆ-ում, Եվրոպայում, ինչպես նաև Հայաստանում: Ավելորդ չէ նշել, որ թերթը կարևոր աղբյուր է ժամանակակից Թուրքիայում հայության խնդիրների ուսումնասիրության համար:

Ստամբուլահայ գրահրատարակչական կյանքում կարևոր դեր է խաղում 1993թ. հիմնադրված «Արաս» հրատարակչությունը, որը զբաղվում է ինչպես հայերեն գրքերի հրատարակմամբ, այնպես էլ հայ գրականության թուրքերեն թարգմանությամբ և տպագրմամբ:

* * *

Հայ գրականության պատմության ծիրում լուրջ և նշանակալից դեր ունի պոլսահայ գրականությունը, որը ևս զգալի հարված ստացավ 1915-1923թթ. ցեղասպանության ընթացքում: Հարկ է հիշել, որ 1915-ի ապրիլի 24-ին ձերբակալված, աքսորված և կոտորված հայ մտավորականների մեջ էին նաև ժամանակի հայտնի գրողները: Հանրապետական Թուրքիայում որոշակի վակուումից հետո հայ համայնքում կրկին սկսում է ձևավորվել գրական կյանքը: 20-րդ դարի պոլսահայ գրականության մեջ կարևոր տեղ է զբաղեցրել գյուղական թեմատիկան. Թուրքիայի

տարբեր գավառներում վերապրած հայ գյուղացու կյանքին և կենցաղին նվիրված ստեղծագործություններով են հանդես եկել Հակոբ Մնձուրին, Մկրտիչ Մարկոսյանը: Պոլսահայ գրականության հայտնի անուններից են Զահրատը, Զավեն Բիբերյանը, Ռուբեն Մաշոյանը, Վարդ Շիկահերը, Զարեհ Խրախունին, Ռոբեր Հատտեջյանը, Երվանդ Գոբելյանը, Գրիգոր Ջեյհանը և ուրիշներ: Այսօր պոլսահայ գրողների առավել երիտասարդ սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներից են Մաքրուհի Հակոբյանը, Ժակլին Չելիքը, Կարին Քարաքաշլը, Վերջիհան Զիֆլիօղլուն[140] և ուրիշներ:

Երաժշտական արվեստի տարբեր ճյուղեր Ստամբուլի հայ համայնքում բավական բարձր մակարդակի վրա են գտնվում: Պոլսահայ շատ երաժիշտներ կարևոր դեր են խաղացել նաև Թուրքիայի Հանրապետության երգարվեստի զարգացման գործում: Օրինակ՝ թուրքական օպերայի կայացման մեջ զգալի է հայազգի երաժիշտներ Ալիս Մանուկյանի, Ալիս Քիթափջյանի, Հակոբ Թոփուզի, Ժակլին Չարքչլի, Սևան Շենջանի, Այլին Աթեշի, Նուբար Բեյվերդյանի, Պետրոս Գումրջյանի և ուրիշ հայազգիների նպաստը: Ավելորդ չէ նշել, որ Անկարայի օպերային թատրոնը որոշ ժամանակ ղեկավարել է հայազգի Վեդաթ (Վահե) Գյուրթենը[141]: Օպերային սիմֆոնիկ նվագախմբում ևս բավական թվով հայազգի երաժիշտներ են աշխատել՝ Վահագն Ասլանյանը (առաջին ջութակ), Մուշեղ Աղազարյանը, Հերման Գալֆայանը[142]: Ստամբուլի քաղաքային օրկեստրում երկար տարիներ աշխատել է ջութակահար Հարություն Հանեսյանը (առաջին ջութակ): Պոլսահայ համայնքում երաժշտության ասպարեզում հայտնի անուններ են կոմպոզիտոր Սիրվարդ Կարամանուկը, պոպ երաժշտության մեջ՝ Օննո Թունչբոյաջյանը, Արտո Թունչբոյաջյանը, Կարո Մաֆյանը: Այսօրվա թուրքական ռոք երաժշտության ամենահայտնի ներկայացուցիչներից է Հայկո Ջեպքինը, իսկ ջազի մեջ՝ Արթո և Տիգրան Խաչատուրյան եղ-

---

[140] Özdoğan G., Üstel F., ...նշված աշխ., 77:
[141] http://www.bolsohays.com/?part=ekler&gorev=oku&id=18&sid=418414041
[142] Աղայան Ծ., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 33:

բայրները: Հանրապետական Թուրքիայում ժողովրդական երգարվեստի ասպարեզում ևս տարբեր տարիներին ներկայացված են եղել են հայազգի երաժիշտներ՝ Քեմանի Սարգիս, Արշակ Չոմլեքչյան, Սահակ Հոջասար, Ուդի Հրանտ և ուրիշներ:

Պոլսում եկեղեցիներին կից գործում են երգչախմբեր (շուրջ երկու տասնյակ), որոնցից են Գողթան Դպրաց դաս, Սահակյան Դպրաց դաս, Կեդրոնական, Թարգմանչաց Դպրաց դաս, Սայաթ-Նովա Դպրաց դաս, Քառասուն մանկանց Դպրաց դաս, Սուրբ Հռիփսիմյանց երաժշտասիրաց և այլ երգչախմբերը[143]: Ավելորդ չէ նշել, որ Պոլսում, շնորհիվ դպրաց դասերի, հայ եկեղեցական և ժողովրդական երգարվեստը պահպանվում ու զարգանում է:

Պոլսահայ համայնքը ներկայացված է նաև **պարարվեստում**, օրինակ՝ Թուրքիայում բալետի առաջին պարողը եղել է Միհրան Էբեյանը[144]: Համայնքում ներկայումս գործում է «Մարալ» պարի համույթը: Հայ համայնքի ջանքերով նաև տարբեր մշակութային խմբեր, պարային համույթներ, երգչախմբեր և երգիչներ են հրավիրվում Հայաստանից[145]:

Թուրքական (օսմանյան) թատրոնի ստեղծման ու կայացման գործում զգալի և որոշիչ դեր է խաղացել Հակոբ Վարդովյանը՝ հետագայում Գ-յուլլու Ագոփ (1840-1902թթ.): Նրա ջանքերով Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին քառորդին ստեղծվում են թատերական խմբեր, իրականացվում տարբեր բեմադրություններ: Թուրք հայտնի մշակութաբան Մեթին Անդը իր «Օսմանյան թատրոնը» ուսումնասիրության մեջ մեծ ակնածանքով է խոսում Հակոբ Վարդովյանի մասին՝ համարելով նրան «թուրքական թատրոնի պատմության մեջ շատ կարևոր մի անձ»: Ինչպես նշված է տարբեր աղբյուրներում, Հակոբ Վարդովյանը հետագայում իսլամ է ընդունում և փոխում անունը՝

---

[143] http://www.bolsohays.com/?part=ekler&gorev=oku&id=17&sid=418414041

[144] Özdoğan G., Üstel F., ...նշված աշխ., 93:

[145] Իրենց հերթին, Պոլսի երգի, պարի համույթները ելույթներ են ունենում Հայաստանում, օրինակ՝ Ստամբուլի Ս. Գրիգոր Լուսավորիչ դպրաց դասը, Սայաթ-Նովա երգի-պարի համույթը:

դառնալով Մեհմեթ Յաքուփ, սակայն նա ավելի հայտնի է Գյուլլու Ագոփ անվամբ:

Հանրապետական շրջանում ևս **թատերական ասպարեզում** հայ համայնքն ունեցել է հայտնի անուններ. օրինակ՝ 1937թ. Գրիգոր-Լուսի Ագոփյան (Ջանդաշ) զույգը, որը հիմնել է «Արևելյան թատրոնը», Նուբար Թերզիյանը, Սամի Հազինսեսը, Թոթո Քարաջան և ուրիշներ: Սակայն թուրքական իշխանությունների ազգայնական տրամադրություններն արտահայտվել են նաև այս ոլորտում, և Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինենյուն արգելել է հայերենով թատերական ներկայացումների անցկացումը[146]: Սրա հետևանքով տեղի է ունեցել դերասանների արտագաղթ, որոնցից, օրինակ՝ Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը տեղափոխվել են Հայաստան:

Թուրքական **կինոարվեստում** նույնպես հայազգի գործիչների ենք հանդիպում՝ Քամեր Սաղըքյան, Քենան Փարս, Նիշան Հանչեր, Ֆանի Արդան, որը Թուրքիայի ազգային կինոփառատոնում ստացել է ամենալավ դերասանուհու կոչումը[147]:

Ստամբուլի հայ համայնքը նշանավոր անուններ ունի նաև **նկարչության** ոլորտում՝ Էրոլ Սարաֆյան, Արաղ Հակոբ, Արմեն Ասպետ, Սյուզան Ադիլ, Ստեփան Ագայան, Հակոբ Էգոյան, Արշո Գասպարյան, Արթին Դեմիրջի, Ռաֆֆի Օհանօղլու: Համայնքում ծաղկում է նաև **ծաղրանկարչության ճյուղը,** և այսօր այդ ոլորտի առավել աչքի ընկնող անուններից են Սարգիս Փաչաջը[148], Արեթ Գըջըրը, Օհանը (Օհաննես Շաշքալ): Հատկապես Սարգիս Փաչաջը մեծ ճանաչում ունի նաև թուրքական շրջանակներում, նրա ծաղրանկարները տպագրվում են մի շարք հայտնի ամսագրերում:

---

[146] Özdoğan G., Üstel F., ...նշված աշխ., 90:

[147] Onur H., Ermeni Portreleri, İstanbul, 1999, s. 17.

[148] Սարգիս Փաչաջը հայտնի է նաև նրանով, որ Ստամբուլի կենտրոնում՝ Իսթիքլյալ պողոտայում, բացել էր «Գրիգոր Նարեկացի» անվամբ սրճարան, որը հիշեցնում էր եվրոպական «Art-Cafee»-ները: Այնտեղ արգելված էր թուրքական երաժշտությունը, հնչում էր եվրոպական և առավելապես հայկական երաժշտություն, պատերին փակցված էին Հայաստանը, հայությունը և 1915թ. ցեղասպանությունը, հաճախ այլաբանորեն, խորհրդանշող տարբեր իրեր: Ցավոք, 2008թ. այդ սրճարանը տարբեր պատճառների հետևանքով փակվեց:

Լուսանկարչության ասպարեզում ևս պոլսահայերը որոշիչ դերակատարում ունեն, և առանց կասկածի կարելի է ասել, որ այսօրվա Թուրքիայի, թերևս, ամենահայտնի լուսանկարիչը Արա Գյուլերն է: Մեծահամբավ լուսանկարչի կողքին կան ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ, որոնցից է Անի Չելիք Արևյանը[149]:

Առանց կասկածի կարող ենք նշել, որ Օսմանյան կայսրության **ճարտարապետության** կայացման մեջ թելադրող են եղել հայազգի վարպետները: Մինչև այժմ էլ թուրքական ճարտարապետության հիմնադիր է համարվում վարպետ Սինանը (1489-1588թթ.), որը հեղինակ է բազմաթիվ կոթողների, որոնցից ամենահայտնիներից են Սուլեյմանիե մզկիթը Ստամբուլում և Էդիրնեի Սելիմիե մզկիթը, որը համարվում է նրա վարպետության գլուխգործոցը: Ճարտարապետ Սինանն ունի հայկական ծագում և մեկն է այն հազարավոր քրիստոնյա երեխաներից, ում տխրահռչակ դևշիրմեի (մանկահավաքի) համակարգը վաղ տարիքում խլել է ընտանիքից: Ստանալով իսլամական և ռազմական կրթություն՝ Սինանը համալրել է ենիչերիական զորամիավորումը և մասնակցել տարբեր արշավանքների: Պատերազմական գործողություններից մեկի ժամանակ ի հայտ են եկել նրա ճարտարապետական հմտությունները, ինչի հետևանքով էլ գրավել է սուլթանի ուշադրությունը, իսկ ավելի ուշ դարձել է արքունական ճարտարապետ: Սինանի ծագման հարցը դարձել է թուրք ազգայնականների մտահոգության առարկա նաև, այդ պատճառով կառավարության որոշումով 1930-ական թվականներին մի խումբ թուրք և եվրոպացի մասնագետներ նշանավոր թուրքերի գանգերի թանգարան ստեղծելու պատրվակով քանդում են ճարտարապետի գերեզմանն ու այնտեղից հանում գանգը, որպեսզի չափեն, թե արդյոք այն համապատասխանում է թյուրքական ռասային բնորոշ չափանիշներին: Նախատեսվել է, որ չափումից հետո Սինանի գանգը տեղափոխելու էին վերոհիշյալ թանգարան, սակայն, ըստ երևույթին, չափման արդյունքները չեն գոհացրել ռասիստներին, քանի որ գանգն այդպես էլ իր

[149] Onur H., նշված աշխ., էջ 17:

տեղը չի վերադարձվել և գտնվելու վայրն անհայտ է: Մինչև օրս էլ թուրքերի համար Սինանի հայկական ծագման հարցը մնացել է բաց և շարունակում է առիթ տալ տարատեսակ քննարկումների և մեկնաբանությունների, որոնք երբեմն հանդիպում են նաև թուրքական մամուլի էջերում:

Թուրքական ժխտողականությունը չի սահմանափակվում միայն ճարտարապետ Սինանի պարագայով, այլև տարածվում է հայկական ճարտարապետական մի ողջ գերդաստանի՝ Պալյանների վրա: Հանրահայտ փաստ է, որ Պալյան ընտանիքի տարբեր ներկայացուցիչներ եղել են արքունական ճարտարապետներ, և հենց նրանց ստեղծագործություններն են, որ սկիզբ են դրել Օսմանյան կայսրությունում ճարտարապետության մեջ եվրոպական ավանդույթների ներմուծմանը: Կարապետ Պալյանի ճարտարապետական տաղանդի գլուխգործոց համարվող Ստամբուլի Դոլմաբահչեի պալատը շատ աղբյուրներում համարվում է «թուրքական Վերսալ»: Բազմաթիվ են Պալյան վարպետների ձեռամբ կառուցված ճարտարապետական գոհարները, սակայն ներկայումս էլ պետական մակարդակով Թուրքիան անտեսում կամ ուղղակի կեղծում է ճարտարապետական դինաստիայի հայ լինելը: Այսօր էլ Ստամբուլ այցելող զբոսաշրջիկների հիմնական վայրերից մեկը հանդիսացող Դոլմաբահչեի պալատում զբոսավարը, ներկայացնելով պալատը, միտումնավոր կամ չի նշում Պալյան եղբայրների անունը, կամ նշելիս նրանց անվանում է Պալյանի և մեկնաբանում, որ նրանք իտալացիներ են:

Թուրքիայի Հանրապետությունում ևս ճարտարապետության բնագավառում հանդիպում են բավական ճանաչված հայազգի մասնագետներ՝ Արա Արթուն Լատուֆյանը, Լևոն և Նուրհան Թնգրյան եղբայրները[150], Զաքարիա Միլդանօղլուն, Նազար Բինաթլը:

Քանդակագործության ասպարեզում ներկայացված հայ վարպետների մեջ առանձնահատուկ է Մարի Գերեքմեզյանը (1913-1947թթ.), որը Թուրքիայի առաջին կին քանդակագործն է: Այսօր էլ

---

[150] Աղայան Ծ., նշված աշխ., էջ 34:

կերպարվեստի տարբեր ճյուղերում կան հայազգի գործիչներ, օրինակ՝ գրաֆիկայի ոլորտում բավական հայտնի անուն է Վարդան Փաչաջը, որը նաև դասավանդում է «Միմար Սինան համալսարանում»:

Գիտության տարբեր ասպարեզներում ևս պոլսահայ համայնքը տվել է աչքի ընկնող մի շարք անուններ, որոնցից առանձնացնենք լեզվաբան Հակոբ Մարթայանին (Դիլաչար), հանրագիտարանների հեղինակ Բարսեղ Թուղլաջյանին (Բարս Թուղալջը), հետազոտող Գևորգ Փամուքչյանին: Թուրքերեն լեզվի բարեփոխման գործում ներդրած անուրանալի նպաստի համար 1934թ. Թուրքիայի նախագահ Քեմալ Աթաթուրքը Հակոբ Մարթայանին է տվել «Դիլաչար» ազգանունը, որը թուրքերեն նշանակում է «լեզու ստեղծող/բացող»: Սակայն, չնայած դրան, թուրքական պետական քաղաքականությունը ձգտել է անտեսել մեծ լեզվաբանի հայ լինելը, նրա բազմաթիվ գրքերում չի գրված անձնանունը, այլ միայն դրա առաջին տառը, որպեսզի Հակոբ անունը ընթերցողին անմիջապես չհուշի հեղինակի ծագման մասին: Ուշագրավ է նաև, որ հենց Հակոբ Մարթայանի առաջարկությամբ է Մուսթաֆա Քեմալին տրվել Աթաթուրք՝ թուրքերի հայր ազգանունը[151]:

* * *

Պոլսո հայ համայնքում **սպորտին** համապատասխան ուշադրություն է դարձվում, և գործում են նաև սպորտային ակումբներ՝ Թաքսիմը, Շիշլին: Ընդհանրապես պետք է նշել, որ հայկական սպորտը Օսմանյան կայսրությունում գտնվել է բարձր մակարդակի վրա[152], սակայն Թուրքիայի Հանրապետությունում ևս հայազգի մարզիկները բավական հաջող ներկայացված են այդ երկրի սպորտային կյանքի տարբեր ճյուղերում:

Թուրքիայում ֆուտբոլի ասպարեզում բավական հայտնի են հայազգի Վարուժան Ասլանյանը, որը խաղացել է Թաքսիմ

---

[151] Հակոբ Մարթայանի և Քեմալ Աթաթուրքի հարաբերությունների հետաքրքիր դրվագների մասին ավելի մանրամասն տե՛ս Աղայան Ծ., նշված աշխ., էջ 52-64:

[152] Այս մասին մանրամասն տե՛ս Դեմոյան Հ., Հայկական սպորտը և մարմնամարզությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2009:

ակումբում և 1 տարի՝ Գալաթասարայում[153], Նուբար Համամջյանը, ով խաղացել է Շիշլի այնուհետև՝ Գալաթասարայ ֆուտբոլային ակումբներում, իսկ նրա որդին՝ Կարո Համամջյանը, խաղացել է Թաքսիմ ակումբում[154]: Թուրքական ֆուտբոլում լեգենդար անուն է Կարպիս Իսթանբուլօղլուն՝ Թենեքեջի (թիթեղագործ) մականվամբ: Նա խաղացել է Վեֆասփոր, այնուհետև Թաքսիմսփոր ֆուտբոլային ակումբներում և ընդգրկված է եղել Թուրքիայի ազգային հավաքականի կազմում: Կարպիս Թենեքեջին մեծ հռչակ է ձեռք բերել 1953թ., Թուրքիա-Շվեյցարիա հանդիպման ժամանակ խփելով երկու գնդակ՝ նա ապահովել է Թուրքիայի հավաքականի հաղթանակը[155]:

Բռնցքամարտում հայտնի անուններ են Գալուստ Չարքչը (Սոսկալի Գալուստ մականվամբ), Կարպիս Զաքարյանը, որը 1948, 1949 և 1950թթ. եղել է Թուրքիայի բռնցքամարտի չեմպիոն[156]:

Ուշագրավ է, որ շախմատի ասպարեզում ևս հայազգի մարզիկները որոշիչ դեր են խաղում նաև Թուրքիայում: Այսպես, Ժիրայր Չաքըր Օհանյանը եղել է Թուրքիայի շախմատի ֆեդերացիայի նախագահ և ՖԻԴԵ-ի դատավոր, բացի այդ, նա շախմատ է դասավանդել Գալաթասարայի համալսարանում[157]:

Սպորտի այլ ճյուղերում ևս հանդիպում ենք հայտնի հայազգի մարզիկների: Այսպես, Պարետ Ավետիքյանը 1994-95թթ. խաղացել է Թուրքիայի ջրագնդակի ազգային հավաքականում և մասնակցել Եվրոպայի ու աշխարհի առաջնություններին, բասկետբոլիստ Կարպիս Փալազյան, որը խաղացել է Շիշլիի բասկետբոլի ակումբում, վոլեյբոլի մարզիչ Արթին Հանչերը, մարմնամարզ Հրանտ Պարսամյանը, որը Շիշլի սպորտային ակումբի հիմնադիրներից է: Այսօր էլ Թուրքիայի մարմնամարզիկների հավաքականում ընդգրկված է երիտասարդ մարզիկ Թորոս Փիլիքօղլուն, որը մասնակցում է միջազգային մրցումներին:

---

[153] Onur H., նշված աշխ., էջ 21:
[154] Նույն տեղում, էջ 76:
[155] http://arsiv.sabah.com.tr/2001/09/01/g08.html
[156] http://webarsiv.hurriyet.com.tr/2001/01/29/288070.asp
[157] Onur H., նշված աշխ., էջ 137:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, տեսնում ենք, որ Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայում գոյատևած հայության նկատմամբ Թուրքիայի Հանրապետության պետական քաղաքականությունը իր բնույթով շարունակել է մնալ խտրական: Սակայն շարունակական հալածանքի և ճնշումների պայմաններում անգամ հայերն իրենց ներդրումն են ունեցել թուրքական պետության տարբեր բնագավառներում:

Հանրապետական Թուրքիայում կազմակերպված հայ համայնք շարունակեց մնալ միայն Ստամբուլում, որը տարբեր տարիներին համալրվեց գավառներից եկած հայերի հաշվին: Իսկ Թուրքիայի գավառներում հայկական համայնքային կյանք այդպես էլ չձևավորվեց (թերևս, որոշ բացառություն է միակ հայկական Վաքըֆլը գյուղը):

Ստամբուլի և ընդհանրապես Թուրքիայի վերապրած հայերի շրջանում արտագաղթերը կրել են շարունակական բնույթ և նաև դրանց հետևանքով է, որ ներկայումս Թուրքիայում կա 55-60 հազար հաշվվող հայ համայնք, որն այսօր կանգնել է մի շարք խնդիրների առաջ: Այդ խնդիրներից մի քանիսը հատկապես վտանգավոր են, քանի որ անմիջականորեն սպառնում են համայնքի շարունակականությանը և ապագային: Մասնավորապես, կորստի եզրին է հասնում Պոլսո արևմտահայերենը, փակվել է հայկական դպրոցների մի մասը, համայնքում աճում են խառնամուսնությունները, անորոշ են համայնքային տարբեր իրավական խնդիրներ: Սակայն, այս ամենին զուգահեռ, ցավոք, համայնքում առավելապես նկատվում է պասիվություն ազգային և կրոնական խնդիրների նկատմամբ: Նման ընթացքի պարագայում և միջոցներ չձեռնարկելու դեպքում խնդիրներն էլ ավելի են սրվելու:

Ներկայումս պոլսահայ համայնքում տեղի ունեցող գործընթացներն ուսումնասիրելիս՝ գալիս ենք այն եզրակացության, որ ըստ համայնքային կյանքի և խնդիրների նկատմամբ իրենց ունեցած դիրքորոշումների՝ Պոլսի հայությանը կարելի է բաժանել մի քանի պայմանական խմբերի.

1. *Անտարբեր խումբ* - այս խումբը գրեթե չի հետաքրքրվում համայնքային, ազգային խնդիրներով, լծված է կենցաղային հարցերին, և նրա անդամակցությունը հայ համայնքին ավելի շատ կրում է խորհրդանշական բնույթ:

2. *Համակերպվող խումբ* - այս խումբը, որը մեծամասնություն է կազմում, տասնամյակներ տևած թուրքական հալածանքի քաղաքականության հետևանքով դարձել է հարմարվող, երբեմն՝ վախեցած:

3. *Ակտիվ խումբ* - այս խումբը, որն ամենասակավաթիվն է, հիմնականում կազմված է մարդկանցից, որոնք ցանկանում են փոփոխություններ: Սակայն կարևոր է նշել, որ այս խմբում տեղ գտած անձինք հիմնականում ձախակողմյա գաղափարախոսության կրողներ են, և նրանց համար հաճախ առաջնային է պայքարը որոշակի նպատակների համար, իսկ ազգայինը երբեմն ստորադասվում է:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումն ու վերաբերմունքը Թուրքիայի քրիստոնյա հայության նկատմամբ պետք է տարբերակված լինի, քանի որ նրանց զգալի մասն ինքն իրեն չի համարում սփյուռքահայ, և դրա համար կան նաև հիմնավորված պատճառաբանություններ, որոնցից ամենատարածվածն այն է, որ իրենք ապրում են մի երկրում, որի կազմում է պատմական Հայաստանի մեծ մասը: Միևնույն ժամանակ, նկատենք, որ Հայաստանի ուշադրությունը և հետաքրքրվածությունը Թուրքիայի հայերի համայնքային, հոգևոր, մշակութային կյանքով նույնքան բնական է, ինչքան ցանկացած պետության հետաքրքրվածությունն իր երկրի սահմաններից դուրս բնակվող ազգակիցներով (օրինակ՝ Թուրքիայի հետաքրքրվածությունը եվրոպաբնակ թուրքերով): Ուստի, կարելի է ենթադրել, որ Հայաստանի և Թուրքիայի միջև բնականոն հարաբերությունների հաստատումը կնպաստի նաև հայ համայնքի առջև կանգնած որոշ խնդիրների լուծմանը:

Ruben Melkonyan, Review of History of the Armenian Community in Istanbul (1920-till present days).

SUMMARY

The presence of Armenians in the Byzantine Empire, as well as in the capital city of Constantinople has a history of centuries. Armenians played an important role in the military, political system of the Empire. It is worthy of mentioning that the dynasty of emperors of Armenian origin ruled in the Byzantine Empire from 867 till 1056. After the conquest of Constantinople by Turks in 1453 and in the course of the following centuries the Ottoman Sultans made Armenians move to the renamed city of Istanbul. In 1461 the Armenian Patriarchate of Constantinople was established and Sultan Mohamed II invited **Archbishop Joachim** of **Bursa** and became the head of the Patriarchate. Thus the Armenian Patriarchate of Constantinople became the spiritual centre of Armenians belonging to Apostolic Church and an important hub of governance. In the Ottoman Empire, the Armenians, along with Greeks and Jews were granted a status of "millet" (nation) and thus in the capital city of Istanbul a strong Armenian community was developed which, in the course of its history created a unique culture, literature, founded churches, schools etc.

The Ottoman Empire was a multinational, multi-confessional and multiethnic state. However due to various developments, genocides, ethnic cleansings, displacement of population, the Turkish Republic inherited a country where the majority of population is Muslim and the number of people of other faith is very small. By the **Treaty of Lausanne** signed in 1923 all three communities of people belonging to different religion - the Armenian, Greek and Jewish communities were recognized as an ethnic minority. It is necessary to mention that other ethnic and religious groups in Turkey such as Assyrians, Lazi people etc did not enjoy special rights and were not granted a status. It is necessary to point out that in Republican Turkey the attitude towards non-Muslim minorities remained hostile and the persecutions continued attaining new forms.

The historic sources testify, that in the beginning of 19th century the number of Armenians living merely in Istanbul reached 150 thousand, and in 1880-ies this number had reached 250 thousand. According to the official statistics now there are around 60 thousand Apostolic Christian Armenians which live mainly in Istanbul. It worth to be mentioned that at present there are few Christian Armenians living outside Istanbul. There are several reasons for the radical decline in the number of Armenians living in Turkey. Among the most important and decisive ones is the policy of persecutions and discrimination which leads to migration.

Currently the Armenian community of Istanbul faces several problems, which relate to the patriarchate, property of community, schools, language preservation, mixed marriages etc.

Maintaining the Ottoman traditions, the leadership of Turkish Republic too, recognizes the Armenian Patriarch as a de-facto leader of Armenian community. However, in 2008 an incurable disease related with the memory has been diagnosed with Mesrob Mutafyan, the present Patriarch, and because of the illness he is not able to perform his duties. As a result of the existing situation, the community has been rendered leaderless, the state of ambiguity and the set of problems intensify. In such cases, the regulation of Armenian Apostolic Church allows to conduct elections of a co-patriarch, who will undertake also the functions of a community leader. However, the Turkish authorities under various pretexts do not endow an election, which makes the problems existing in the community more complicated.

During the first year of establishment of the Turkish Republic there were 47 Armenian schools in Istanbul, however in 1972-73 academic year this number had reduced to 32, with 7366 students, in the academic year 1999-2000 the number of schools was reduced 18 with 3786 students and in 2009-2010 there were only 16 schools with 3029 students. The decline of Armenian colleges in Istanbul has profound reasons, among which are continuous reduction of the number of students, lack of textbooks and their quality, proficiency of teachers.

One of the key problems of the Armenian community in Istanbul is the state of the Armenian language. Number of people speaking Armenian is continuously reducing. This is determined by various reasons, however, an important role here plays the policy run by the country, which, to put it mildly, is not very favorable. At present the

number of people speaking Armenian has reduced so drastically that in some churches sermons are preached in Turkish too. Recently a survey on use of the Armenian language was conducted among the Armenian community of Istanbul. The results showed that only 18 percent of the community is using Armenian.

The Armenian Genocide has destroyed also the culture of Armenians of Istanbul, however, during the first years of establishment of the Turkish Republic, Armenian community of Istanbul made certain steps for the rebirth of its culture, and this has given its positive results. We can state that the today the Armenians of Istanbul, are presented in various fields of culture and science. The Armenian community is best represented in sports too.

Analyzing the current processes going on in the Armenian community of Istanbul we can conclude that the Armenians living in Istanbul can be divided into three conditional groups, according to their attitude towards the community life and existing problems.

4. ***Indifferent group***- this group of people is not much interested in the community life, national problems, it is absorbed in domestic problems and its association with the Armenian community has merely symbolic character.

5. ***Conforming group*** – This group constitutes a majority. During the decades of Turkish policy of oppressions, persecutions they have become very conforming and even sometimes frightened.

6. ***Active group*** – This group, which is the smallest in number, mainly consists of people who seek for changes. However it is necessary to point out that people engaged in this group are basically supporters of left-wing ideology, thus very often the struggle for achievement of specific goals is of prior importance for them and the national issues are being neglected sometimes.

It is necessary to mention, that the interest of the Republic of Armenia in the spiritual, cultural and community life of the Armenians living in Turkey is as natural as the interest of any other country with the compatriots living abroad (e.g. interest of Turkey in the life of Turks people living in European countries.) Thus, we can assume that the establishment of normal relations between Turkey and Armenia will contribute to the solution of certain problems which the Armenian community currently faces.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Աղայան Ծ., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994:
2. Գումմճեան Ս., Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստանպուլ, 2010:
3. Դեմոյան Հ., Հայկական սպորտը և մարմնամարզությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2009:
4. Զաւէն Արքեպս., Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:
5. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005), Անթիլիաս, 2009:
6. Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, Իսթանպուլ, 2008, հ. Ա, ուսումնասիրությամբ Հ. Եփրեմ Վրդ. Պողոսեանի, աշխատասիրությամբ Հ. Արիստակէս Վրդ. Պոհճալեանի, Հ. Գաբրիէլ Վրդ. Այանեանի, Հ. Սարգիս Վրդ. Էրմէնի, Հ. Յակոբոս Վրդ. Չօփուրեանի:
7. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
8. Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010:
9. Շանթ Լ., Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, Երևան, 2008, էջ 43:
10. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
11. Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, հ. 1, Պեյրութ 1965, հ. 3՝ Անթիլիաս, 1987, հ. 4՝ Անթիլիաս, 1988:
12. Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009:
13. Վիճակագոյց Գավառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, տետր ա., Կ. Պոլիս, 1901, տետր բ., Կ. Պոլիս, 1903:
14. Akar R., Aşkale yolcuları (varlık vergisi ve çalışma kampları), İstanbul, 2006.
15. Aktar A., Varlık vergisi ve "Türkleştirme" politikaları, İstanbul, 2000.
16. Atnur İ., Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005.
17. Başyurt E., Ermeni evlâtlıklar, İstanbul, 2006.
18. Cemaat vakıfları. Bugünkü sorunları ve çözüm önerileri, İstanbul Barosu, İnsan Hakları Merkezi, Azinlik Hakları Çalısma Grubu, İstanbul, 2006 .
19. Cumhuriyet dönemi İstanbul istatistikleri, İstanbul, 1998.

20. Çerkezyan S., Dünya hepimize yeter, İstanbul, 2003.
21. Çetinoğlu A.S., Varlık Vergisi 1942-1944: Ekonomik ve Kültürel Jenosid, İstanbul, 2009.
22. Dündar F., Türkiye nüfüs sayımlarında azınlıklar, İstanbul, 1999.
23. Dünden bugüne İstanbul Ansiklopedisi, İstanbul, 1994.
24. Haydaroğlu P., Osmanlı İmparatorluğunda yabancı okullar, Ankara, 1990.
25. Hoffman T., Armenians in Turkey today (second edition), Uppsala, 2003.
26. Kaplan S., 1915-te ne oldu ?, 2-inci baskı, İstanbul, 2005.
27. Koçoğlu Y., Hatırlıyorum Türkiye'de gayrimüslim hayatları, İstanbul, 2003.
28. Koçoğlu Y., Azınlık gençleri anlatıyor, İstanbul, 2004.
29. Macar E., Cumhuriyet döneminde İstanbul Rum patrikhanesi, İstanbul, 2003.
30. Okutan Ç., Tek parti döneminde azınlık politikaları, İstanbul, 2004.
31. Onur H., Ermeni Portreleri, İstanbul, 1999.
32. Özdemir H., Çiçek K., Turan Ö., Çalık R., Halaçoğlu Y., Ermeniler. Sürgün ve Göç, Ankara, 2004.
33. Özdoğan G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., Türkiye'de Ermeniler: Cemaat-Birey-Yurttaş, İstanbul, 2009.
34. Pamukciyan K., İstanbul yazıları: Ermeni kaynaklarından tarihe katkılar- I, İstanbul, 2002.
35. Tunaya T., Türkiye'de siyasal partiler, cilt III, Ittihat ve Terakki, bir çağın, bir kuşağın, bir partinin tarihi, İstanbul, 2000.
36. Ulu C., Türkiye Cumhuriyeti'nde Ermeniler, Ankara, 2009.
37. Walker C., Armenia: The survival of a nation, London, 1980.
38. Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963.

Հոդվածներ պարբերականներում

1. Զաւէն Ա. քինյ. Արզումանեան, Թուրքիոյ Պատրիարքութիւնը, Ազգապատում, հատոր դ., գիրք բ., Նիւ Եորք, 1997:
2. Լոքմագյոզյան Տ., Ստամբուլի հայկական դպրոցները, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2008, թիվ 3:
3. Հովյան Վ., Թուրքիայի հայ բողոքական համայնքը, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2010, թիվ 3:
4. Սասունեան Յ., Ի՞նչն է Մեսրոպ պատրիարքին քաղաքական յայտարարութեանց դրդապատճառը, Ազդակ, Բեյրութ, 08,06,2007:

5. Սասունյան Հ., Հայերը պետք է խիզախ և կանխարգելիչ քայլեր ձեռնարկեն թշնամական գործողություններին հակազդելու համար, www.7or.am/hy/news/2010-06-23/15456/
6. Սիմավորյան Ա., Թուրքիայի հայ կաթոլիկները, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2010, թիվ 1:
7. Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան, Ուխտագնացություն Արևմտյան Հայաստան, Ազգ (մշակույթ հավելված), 12. 09. 2009:
8. AIHM'den Turkiye'yle ilgili iki kritik karar, - Hürriyet, 02.02.2010.
9. Azınlık malları geri verilecek, - Yeni Asır, 22.02.2008.
10. Azınlıklar, Vakıflar yasası'nı 'ileri' buldu, - Referans, 22.02.2008.
11. Bali R., "Yirmi kura ihtiyatlar" olayı, - Tarih ve Toplum, 1998, sayı 175.
12. Başaran E., Azınlık ezilirse özgürlük olmaz, - Hürriyet, 15.06.2009.
13. Başaran E., Asimilâsyon utancımız, - Hürriyet, 18.06.2009.
14. Dışişleri: Azınlık sayısı 89 bin, - Milliyet, 12.12.2008.
15. Erdoğandan samimi çıkış, - Agos, 29.05.2009.
16. İhanet değil, vallahi adalet, - Hürriyet, 22.02.2008.
17. Kılıç E., 6-7 Eylül yağma olayları bir MİT organizasyonu, - Sabah, 01.02.2009.
18. Kireçburnu Savaşında ikinci raund, - Taraf, 06.12.2007.
19. Konuralp O., Türkiye Ermenilerinin gizli kalmış travması, - Hürriyet, 22.11.2009.
20. Koptaş R., Güç siyaseti, - Agos, 03.04.2009.
21. Koptaş R., Mağdur Ermeni, gaddar Ermeni, - Agos, 03.04.2009.
22. Lozan kanunla değişemez, - Cumhuriyet, 22.02.2008.
23. Matur B., Diyarbakır'ın son Ermeni'si, - Zaman, 02.12.2008.
24. 'Mübadele olmasa, milli devlet olabilir miydik?' - Hürriyet, 11.11.2008.
25. Resmi Gazete, tarih: 13/6/1935, sayı: 3027, tertip:3, cilt: 16.
26. Resmi Gazete, 27.02.2008.
27. Resmi Gazete, 27.09.2008.
28. Sorgun T., Yeni Vakıflar Kanunu tamam. Dönelim mi 9 Haziran 1919'a? - Ortadoğu, 22.02.2008.
29. Türklü, Kürtlü Ermeni seçimi, - Hürriyet, 04.05.2009.
30. Vakıflar Yasa tasarısı tazminatın onunu açar, - Referans, 06.12.2007.
31. Vakıflar Kanunu ileri adım, ama hala eksikler var, - Referans, 22.02.2008.

32. Bebiroğlu M., Patrik, cemaat ve vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp
33. Bebiroğlu M., Vakıflar ve cemaat vakıfları – Faaliyette bulunan vakıflar, - www.hyetert.com/prnyazi3.asp?s
34. Bebiroğlu M., Cumhuriyet döneminde Ermeni Patrikleri ve önemli olaylar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=442&DilId=1
35. Çiçekeker A., Sunî gündem: Beyaz Ermeni-taşralı Ermeni ayrımı, - www.hyetert.com/yazi3.asp?s=3&Id=434&DilId=1
36. Ermeni Patriği Şınork Kalustyan'ın üvey kardeşi Diyanet işleri başkanı Lütfi Doğan, - www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html
37. Kılıç R., Osmanlı Türkiye'sinde azınlık okulları (19. yüzyıl), - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=374&DilId=1
38. Unutmak mı, asimilâsyon mu? Türkiye'nin eğitim sisteminde azınlıklar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=409&DilId=1
39. Yaman A., Beyaz Ermeni tartışmaları, - www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&DilId=1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

ԱՌԱՋԱԲԱՆ..... *7*

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 9

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՍՕՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 31

Համայնքային սեփականության և դրա տնօրինման հետ կապված խնդիրներ..... *32*

Կրթական խնդիրներ..... *39*

Լեզվական խնդիրներ..... *47*

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ
20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ..... 49

Պոլսո Հայոց պատրիարքության դիրքորոշումը Թուրքիայի բռնի կրոնափոխ հայերի վերաբերյալ..... 64

ԽԱՌՆԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ..... 70

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԱԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ..... 76

ՍՏԱՄԲՈՒԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ..... 81

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ,
ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՍՊՈՐՏՆ ԱՅՍՕՐ.
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ..... 84

ՎԵՐՋԱԲԱՆ..... 94

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 99

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(1920-ականներից մինչև մեր օրերը)

Հրատարակչության տնօրեն
ՎԱՀՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Սրբագրիչ՝
ԽՈՆԱՐՀԻԿ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝
ՀԵՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Ձևավորում և էջադրումը՝
ԱՍՏՂԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Կազմի ձևավորումը՝
ԴԻԱՆԱ ԱՎԱԳՅԱՆԻ

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 6.5 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ-80: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Հանձնված է տպագրության 10.09.2010թ.: Պատվեր՝ 10/9-1:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am

[1000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0174730

A 96093